

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 3
M A R S
1930
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂՍՓՈՒՆԿԱՆ ԴՆՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԴԱՆ



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ
(Մահուան 25ամեակին առթիւ.)



Վ Ի Տ Օ Շ Ի Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ Ը

Մարտ 18ին (Հ. Տ. 5) կը լրանայ 25 ամեակը Քրիստափոր Միքայելեանի եղբրական մահուան, Սօֆիայի մէջ, Վիտտօշի մէկ սարալանջին վրա:

Չարատարտիկ հովիտին ափը, մենաւոր, ազգուն ծառ մը միայն կը յիշեցնէ զարհուրելի աղէտին վայրը: Իսկ մէկ ժամ անդին, Պուլկարիոյ մայրաքաղաքի գլխաւոր գերեզմանատան մէջ, Քրիստափորն արդէն ունի իր դամբարանը, 1924էն ի վեր: Իր խորիստ կիսանդրին՝ երիտասարդ Վլաձի (Քէնտիրեան) նկարին հետ:

Ուրի՛շ աշխարհ, ուրի՛շ մարդիկ, ուրի՛շ հանգամանքներ...

«Դրօշակ»ի այս համարով, արտատպած ենք երկու նշխարներ, զրի առնուած՝ աղէտին անմիջական տպաւորութեան տակ: Քասնըհինգ տարի յետոյ, մարդիկ հազիւ թէ առանց սարսուռի կարդան այդ էջերը: Մանաւանդ հայրենիքէն հեռու, արմատախիլ, օտար երկնքի տակ:

Քասնըհինգ տարի յետոյ, աշխարհ մը փլած է մեր մէջքին վրա: Ելլալովն ալ միասին: Եւ սակայն, դեռ մեր աչքերը կը վառին ցատուածէն եւ անհամբերութենէն: Ու դեռ երէկուան պէս, մեր ականջին կը հնչէ «Ելլալով պոմպան»:

Աննախընթաց էր յղացումը, որովհետեւ կը ծնէր խորապէս յեղափոխական գլուխէ մը: Դաշնակցական միտքն էր, որ ի սպաս կը դնէր բազուկը, իր որջին մէջ փռելու համար զաղանը, սեփական կեանքի գնով: Միայն թէ յաջողէր...

Եւ յաջողութեան յետին մանրամասնութիւններն ապահովելու մտահոգութեամբ, Քրիստափորը կը կատարէր արկածալի փորձը: Դէմ դիմաց՝ մակեդոնացի յեղափոխականներուն, որոնք անձկութեամբ կը սպասէին, դարձեալ ծառի մը տակ:

Նոյնիսկ այսօրեան արձակուո՞նակ աչքերով, երբ մարդիկ առաջինութիւն կը սեպեն նախ արեւուն բիծերը համբել եւ ուրանալ անոր լոյսն ու ջերմութիւնը, այս Դէպքը — ահաբեկումի յղացման եւ կազմակերպութեան այս դրուագը պիտի համարուէր եզակի: Իսկ երբ իրերը քննենք ա՛յն օրուս պայմաններով, արդէն հերակիւսան պայթար մը, դիւցազնամարտ մըն է, որ կը պատկերանայ մեր առջեւ:

Ահա հրէջը՝ կծկած բարձունքի մը խորը, գրեթէ քաղաքի մը շրջապատով, և ժողովուրդ մը՝ իր արիւնագանգ ոտքերուն տակ: Ծիւաղ մը, որ կրնար արեան բաղնիքներու վերածել քնատ գիշերուան մը մղձաւանջը: Իսկ առջին՝ հանճարեղ գլուխ մը՝ տխրող մարմնի մը վերեւ, որ կը ցնցէր անճար, անզօր ժողովուրդի տառապանքէն:

Դէպի Ելլալով ուղղած դժոխային մեքենան, եթէ յաջողէր իսկ, թերեւս այնքան զայրոյթ եւ արհաւիրք՝ չպիտի պոռթկար, որքան այն ոռւմբը, զոր Քրիստափորը կը փորձէր զմայելիլ Վլաձին հետ, իր իսկ ձեռքով նետելու համար՝ կարծիք մղձաւանջը ընդմիջտ փարատելու միամտութեամբ...

Ռուժը պայթեցաւ իր տեղը չհասած, ոչնչացնելով վարպետն ու աշակերտը, եւ կուսակցութեան որոշած մահափորձը տեղի ունեցաւ ուրիշ եղանակով մը, — դժբախտաբար անյաջող:

Բայց տնոր ցնցումը, տակաւին մանրամասնութիւնները չպատմած, արդէն կատարած էր իր բարոյական, սահմուկեցուցիչ, եթէ ոչ զգաստացուցիչ դերը: Ելլալով դառ ու դարձան կը փնտէր անտեսանելի ուժի մը դէմ, որ ե՛ւ կար ե՛ւ չկար, որ կանհետանար ու կը ծառանար, բայց մէկ վայրկեան չէր լքեր պատնէշը:

Եւ այդպէս է որ, այս եղբրական այլ հոյակապ ձեռնարկէն յետոյ, Հ. Յ. Դաշնակցութիւնը, կորսնցնելով հանդերձ իր թանկագին գաւազը, իր «կազմակերպիչ ոգին», քասնըհինգ տարուան ընթացքին, ինչպէս անկէ առաջ, միջոց Քրիստափորի գործը յիշեց փոթորիկի պահուն, երբ հարկ էր վճռել: Հարածի ժամուն, երբ հարկ էր յաղթել:

Եւ դարձեալ ա՛յս է պատճառը որ, նոյն իսկ մեր ընկերները, ճանչնալով Քրիստափորը, կամ լսելով ու կարդալով անոր պատմութիւնը, երբ հարկ էր վճռել, անհանդուրժելի կը գտնեն ներքայ «անգործութիւնը»...

Դաշնակցութեան մեծութիւնը կը կայանայ անոր մէջ որ, գիտէ ընտրել ժամերն ու «անելիքները»: Իսկ երբ վճռեց, — հարցուցէք թալէպիին որ միջոց կը կրկնէր, երբ զգուշութիւն կը պատուիրէին.

— «Եթէ վնաս չեն ոչնչացնել զիս, աւելորդ է ո՛րքէ գգուշաբիւն: Ազատու՛մ չկայ»...

Ուրեմն, ինչ որ տեղի ունեցաւ քսանըհինգ տարի առաջ — ինչպէս աւելի առաջ ու յետոյ — ընդունակ է տակաւին քսանըհինգ տարի զինելու մեր բարոյակները:

Ռուսերը կը պայթէր, երէկ, «կեանքի, պատուի եւ ինչքի» պաշտպանութիւնը ապահովելու համար: Յեղափոխական միտքն ու բազուկը անվեհեր կը գործէին, սանձելու համար արիւնարբու ակորժակներ: Անշուշտ հարթելով ճամբան դէպի ազատութիւն:

Այսօր, քսանըհինգ տարի յետոյ, նոյն ուղին է, որ մղում կուտայ մեզի, աւելի բիւրեղացած եւ թանձրացեալ, ձեւ ու մարմին առած ծրագրով մը, — միացեալ եւ անկախ Հայաստան:

Քրիստափորները կէս ճամբան մնացին, Վոսմներն ալ իրենց հետ, ուսմբը ձեռքերուն մէջ:

Եւ ամբողջ մարտական սերունդ մը աչքերն այդ ճամբուն յառած է սեւեռաքիթ ու անասան:

Ամբողջ ժողովուրդ մը երգիք ու արեւ կը սպասէ, կէս առ կէս մտառող դարձած այդ ճամբուն վրա:

Ընդունակ ենք տանելու այդ ամենի բեռը:

Պատրաստ ենք հաւատարմօրէն կատարելու սրբազան եւ յեղափոխական առաքելութիւնը:

Ահա թէ ի՛նչ պիտի հարցնէ ամէն մէկ Դաշնակցական ինքն իրեն, այսօր, Քրիստափորի մահւան քսանըհինգամեակին առթիւ:

Եւ այս մէկ տարին, Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեակը փառաբանած, անով հպարտացած պահուն:

Դարերու անաղատ, գլխիկոր կեանքը թրմրեցուցած, խաթարած է մեր գիտակցութիւնը՝ նոյնիսկ դէպքերն ու դէմքերը գնահատելու տեսակէտէն:

Չենք ճանչնար մեր իրական արժէքները: Կամ կը ճանչնանք հարեւանցի, բերնէ բերան լսելով: Արքայական առասպելներ, կղերական փառքեր եւ զանազան շինծու համբաւներ գրաւած, կաշկանդած են մեր միտքը: Մեր աչքերը չեն վարժուած տեսնելու իրական մեծութիւն-

ները: Կամ կը տեսնեն միայն մեծ ազգերու պատմութեան մէջ:

Օտար դիւանագէտի մը, զօրավարի մը անունը շատ աւելի կը խանդավառէ մեզ, քան ամենէն հերոսական դէմքը մեր ժամանակակից պատմութեան:

Ունինք ուսումնականներ, վարժապետներ եւ վարդապետներ, որոնք պատրաստ են հատորներ գրելու Երուսաղէմի Միաբանութեան մասին, պանծացնելու կաթողիկոսի մը կամ փաշայի մը կեանքն ու գործը. բայց կանճրկին, եթէ երկու հարցում ուղղես Առաքելոց վանքի կոիւններու, Աղբիւր Սերոբի, Գէորգ Չափուշի կամ Անդրանիկի մասին:

Բովանդակ աշխարհ հիացումով, յափըչտակութեամբ հետեւեցաւ — ու կը հետեւի — օղանաւային յանդուգն, աննախընթաց թռիչքներուն, առանց ազգի եւ առանց տեղական, ցեղային փառասիրութեան: Եւ բոլորը երկկողմութեամբ խոնարհեցան կէս ճամբան ինկած գոհերու յիշատակին առջեւ: Եղբարաբախտ ուսմովիւրաներուն ամենէն համեստն ալ ունեցաւ իր յիշատակարանը, որոնց չուրքին տակ սերունդներ կը դաստիարակուին:

Մենք չունինք համաշխարհային հոշակ: Եւ շատ խոնարհ ենք, իբրեւ ազգ: Բայց ունինք Դէպքեր, դրւագներ, որ ընդունակ են աշխարհ սասանեցնելու. — Այդպէս էր Երլուրդի մահափորձը:

Եւ ունինք Դէմքեր, որոնց հօգը ձայնը չի ճանչնար անջրպետ եւ ժամանակ: — Այդպէս էր Քրիստափորը:

Մեր ազատագրական ամենի, անօրինակ երկունքին մէջ, ոչ թռիչքն էր որ պակսեցաւ, ոչ անձնաւորութիւնը, ոչ ալ ուժգնութիւնը: Վկայ՝ Վիտօչն ու Երլուրդը, իրենց յանդգնութեամբ եւ վճռականութեամբ:

Մենք չունինք ոչ Պանթէոն, ոչ ալ միջազգային պողոտաներուն վրա տիրապետող յիշատակարաններ: Բայց ինչ որ, ահա քառասուն տարիէ ի վեր կը տանինք մեր ուսերուն վրա, կրնայ յարգանքի հրաւիրել ամբողջ սերունդներ:

Եւ այդ պիտի ըլլայ մեծագոյն մխիթարութիւնը Քրիստափորներուն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՉ ՈԳԻՆ

Մտաւորականութեան կուռքն էր մահէն առաջ — մահէն յետոյ եղաւ նաև զանգւածներէ կուռքը:

Ո՛ր է արդեօք այդ արտակարգ ժողովրդականութեան զազոնիքը: Մեր վարպետը չունէր բնաւ այն արտաքին փայլն ու շուքը, որ կը բնորոշէր հայոց աշխարհի մեծերին: Նա չէր ունեցած պերճ լեզու, բեղուն գրիչ, հռետորական շքեղ տաղանդ, ինչպէս Սիրիմեան և ուրիշներ: Ձէր գրաւած հրապարակախօսի աթոռը և ամէն օր լրագրի բարձր ամբիոնէն չէր խօսած ժողովուրդին, ինչպէս Գրիգոր Արծրունի: Ձէր շարագրած հայրենասուէն, բոցափառող վէպեր, ինչպէս Բաֆֆի: Ձէր օտուած խօսնակ քնարով, ինչպէս Գամառ-Քաթիկոս: Ձէր կախարդած բազմութիւնները թատրոնական բեմերէն, ինչպէս Պետրոս Աղամեան...

Անշուք, համեստ մի մտաւորական, որի միակ արտաքին փայլը իր վեհօրէն գեղեցիկ, նուրբ ու տանջած առաքելական դէմքի մէջ էր: Շատ շատերը չէին էլ տեսած նրան, ոչ էլ կարդացած նրա փոքրաթիւ, դժուարամարս յօդածները:

Բայց մէկ բան գիտէին ամենքը. նա կազմակերպութեան գլուխն էր և ինքը գերագոյն կազմակերպիչը, որ նահատակուել էր գործի, արևան ճանապարհին: Գուցէ այն տարտամ դաղափարը կրօնահիւր հողարաւոր սգաքողներու մէջ, որ այս մեռնողը տարբեր խմորից էր...

Բանաստեղծներ, հրապարակագիրներ, վիպասաններ շատ է տուել Հայոց ազգը, բայց կազմակերպիչ տաղանդները հազաւորու են դարերով պառակուած, անմիաբանութեան և տարամբժ անհատապաշտութեան ախտով մշակուած հայ անդաստանում...

Այդտեղ է, անշուշտ, Քրիստափորեան ստեղծածի բանային:

Շատ անգամ եմ առիթ ունեցել վեր հանելու անհատի դերը պատմութեան մէջ: Սոցիոլոգ, օժտուած անհատի՝ որ աստածային կայծ կը կրէ իր կուրծքին տակ և առաքելական դրոշմ ունի ճակատին: Ստէպ նա ինքի՞ մի դրօշակ է: Ստէպ նա ինքը նոյնանում է կազմակերպութեան հետ: Ամայութիւնից խմբեր է դուրս բերում, դաշափարային անապատները շնչաւորում է և շնչնում:

Այդպէս էր մեր Քրիստափորը: Նա leader էր (առաջնորդ) բառի իսկական, բրիտանական իմաստով, որովհետև իր խոշոր իմացականութեանը կը միացնէր նաև խոշոր բարոյական, քաղաքացիական առաքինութիւններ՝ նկարագրի, անյողողող կամք, անազարտ մաքրութիւն և անկաշառ շիտակութիւն:

* * *

Գիւղական համեստ վարժապետը (այգա և ազատ ունեւոր Մոսկուայի համալսարանում) աստիճանաբար

կազմակերպեց նախ՝ իր անհատական դէմքը, իր մտաւոր և բարոյական դէմքը, հաւաքեց գիտութեան պաշար, մշակեց ուրոյն աշխարհահայեացք և այգա հանդարտ, առանց արժուկի ու գահավէժի, առանց անհամբեր թուիչքերու՝ սպասեց իր դղրդապին թատերամուտի ժամին:

Եւ երբ ժամը հասաւ — 1890-ին — նա նետուեցաւ բուն թափով հատուածների տեղոյային վիճարանութեանց ու բախումների մէջ, շեղաքայրեց կենտրոնախոյ ձգտումները, հայտեցրեց անհաշտ հակառակորդները և վարպետ ձեռքով կռեց «Իրանակցութեան» ճակատակերպը:

Գիւրիւն գործ չէր: Առաջին անգամն էր երկար դարերէ ի վեր, որ ստեղծուած էր հայ կեանքի մէջ մի ծաւալուն կազմակերպութիւն — միանգամայն ժողովրդական և քաղաքական — որ կը շարունակէր իր ուսերի վրա տանելու ցեղի ազատութեան պայքարը:

Այդպիսի մի գործ կատարելու համար, այնքան հակամարտ ուժեր քով քիփի բերելու և կուռ, ներդաշնակ մի միութիւն ստեղծելու համար, անհրաժեշտ էր իրօք կազմակերպչական մի խոշոր տաղանդ, անհրաժեշտ էր մի մարդ, որ ոչ միայն մտաւորապէս, այլ և բարոյապէս կանգնած լինէր վարկեանի բարձրութեան վրա, մի մարդ, որ յեղափոխական աշխարհահայեացքի, խառնածքի ու նկարագրի հետ ունենար և անսովոր տակաւ, ճկունութիւն ու հոտառութիւն, մարդկանց ներաշխարհը թափանցելու կարողութիւն, գործակիցներն ընտրելու ձիրք, անհաշտ, հաշտարար ոգի, զուսպ ու հաւատարակուած բնաւորութիւն և մի իրօք հազաւորու վարկեանից, որպիսին դժուար է գտնել Հայոց վերածնութեան ռահվիրաներու մօտ:

Այդպիսի մէկն էր Քրիստափորը:

Եւ եթէ Հ. Յ. Իրանակցութեան վարիչ շարքերում, սկզբից ի վեր, հակառակ մեր բազմապիսի թշնամիներու այնքան ահաւոր հարածներուն և պառակտումի ներքին փոքմերուն, իշխեց միշտ եղբայրական համբաշխութիւնը, եթէ հայ մարտական կազմակերպութիւնը տասնակ տարիներ ընթացելու, հիմնադրի մահէն յետոյ ևս, կարողացաւ միշտ ճողողելու ցարի, սուլթանի, թուրքի, Գրիկ ու թաթարի անդուլ դաւաբէն ու թակարդներէն, — անտարակոյս, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է՝ որ այդ վարիչ, ներշնչող ու առաջնորդող շարքերի մէջ ապրում էր միշտ Քրիստափորի ոգին:

Ահ, անշուշտ, սուրբերի, հրէշտակների խմբակցութիւն չէ նաև այդ մեծ, ժողովրդական կազմակերպութիւնը — այդպիսին չկայ տակաւին մեր մուրթակի վրա, չէ կարող լինել ևս տառալ սարելու մեր յետամուտ և զարաւոր արատներով ծանրաբեռնուած ցեղի մէջ — կարիէրիստներ, փառքի, աթոռի հետամուտ ինտրիգաններ եղել են նաև այդ ներկական ուխտի մէջ,

բայց նրանց ձայնն ու ձգտումները վաղ թէ ուշ չեղողքացի են քրիստոսապետական փաղանդների գործչ հարածներին տակ :

Գաղափարային ընկերայնութեան ոգին էր, որ այնքան ջերմութիւն, հմայք ու հրապոյր կը հարգողէր մեր կուսակցական մթնոլորտին. գաղափարային կարայրութեան ոգին էր, որ կը ցոլար մեր մեծ ընկերոջ ամէն մի խօսքից, ժխտից ու նամակից :

«Թայիմնախնամ» տեսած կը լինես արդէն — կը դերը ինձի 1899թ. դեկտեմբեր 22-ին Պարիզ ուղղած իր մի նամակի մէջ — Ղարիբն էր... վնաս է փետրարի վերջին գալ այդտեղ: Կազմուած է, արեմն մի հիամալի տրիտուվիլատ, որ կարող է պատուի քերթի Դաշնակցութեամբ: Տեղներդ միայն պինդ նստեցէ՛ք, սիրեցէ՛ք միմիանց և կանոնարէ՛ք մեր պարապմունքները»:

Եւ նոյն յորդորը՝ մի այլ նամակով (1900 թ. մայիս) .

— «Մաճօքացոյն Աւետիսին Թայիմնախնամի հետ և ապա, որ Բեզ հետ միասին սիրի նրան: Ձեր սէրը նրան միշտ ջերմ կը պահէ և յուսահատելու նրա հակումները կանխեալանան»:

Այս տողերու մէջ կը պատկերանայ ամբողջ Քրիստոսից, իրեն մարդ:

«Սիրեցէ՛ք միմիանց»... Նազովրեցու ծանօթ կոչը կը հնչեցնէր Դաշնակցութեան հիմնադիրը նոյն յիսուսական պարզութեամբ, ստանց պաթեթիկ շնչոտրու և թատրոնական pose-երու: Կազմակերպութեան արշաւորսէն մինչև իր եղբրական մահը — կրկնել է միշտ այդ գեղեցիկ յանկերը... Նա ինքը սիրել է միշտ իր հաւատակից ընկերներին և ձգտել է նոյն սիրով տողորել կուսակցական բոլոր շարքերը: Հայ առաջադիմութեան ռազմիկներէն զուցէ ոչ մէկը այնքան խորունկ չի դառնել Վալի անսէր ու ամբարշէտ բարձրը և ոչ մէկը չի թափուլ արնքան յամառ և ընդմտելու ճիգ ու եռանդ՝ այդ ցեղային արատը մեղմելու համար:

Քրիստոսապետի աչքին ամենակենսական խնդրին էր այդ: Նա գիտէր, որ Հայ ազգի ազատագրութեան հրեակայ գործը զուրկ թերելու համար անհրաժեշտ է հաւաքել maximum-ը (առաւելագոյն չափ) ցեղի գործուն ուժերի, անհրաժեշտ է դարձնել ազատութեան գերագոյն գործիքը, հայ ժողովրդի մեծագոյն յեղափոխական կազմակերպութիւնը: Նա գիտէր, որ այդ գործիքը հզոր ու տևական դարձնելու համար, պէտք էր փշրել հայ մարդկանց դարաւոր անմիաբանութեան և եսապաշտ անհատականութեան, առողջը, իսկ այն փշրել կարող էր միայն սիրոյ անդուլ, շերմացնող և կենսարար հոսանքը: Ահա թէ ինչու Դաշնակցութեան առաջամարտիկը, որ կազմակերպուէ լինելով հանդերձ, միանգամայն մեծ քարոյիչ էր, իր երկարամեայ ասպարէզի ընթացքին, Թիֆլիսէն-Ժընև-Պարիզ-Սօֆիա-Ֆիլիպպե-Պոլսա, ամենուրեք իր յողածներին, նամակներին, ճառերին և մտերմական գրոյցներին մէջ նոյն քարոյն է, որ կը հնչեցնէ այլ և այլ եղանակներով .

— «Սիրեցէ՛ք, սիրեցէ՛ք միմիանց»...

* * *

Գիտնալով հանդերձ հայի վատթար հակումները, նա միանգամայն յուսուտեւ չէր մարդկային բնութեան նկատմամբ, աչքը ուժեղ և թափանցող էր՝ մարդոց լաւ գծերը նշմարելու համար: Նա կարծես Դոստոյեվսկիի պէս այն գաղափարն ունէր, որ յետին ոճնադրածի հոգու մէջ անգամ կը դառնի միշտ փոքրիկ, անարատ մի անկիւն... Եւ նա շատ անգամ օգտագործել է հայ դատի համար այնպիսի մարդիկ, որոնց վրա իր ընկերները՝ անյուսօրէն խաչ էին դրած:

Նա չէր աղուծ — հիւնոսացնում էր: Եւ այդ հիւնոսի մէջ դեր ունէր նրա մտքի ու տրամաբանութեան ոյժը, դեր ունէր նրա բնական, ինքնադրող սէրը, նրա հաւատն ու համոզմունքը, գաղափարային մտեւանդութիւնը, դեր ունէին նրա ձայնի զարաւումները, նրա խորունկ ու վշտոտ աչքերը և ամբողջ տանջւած ու վեհափառ կերպարանքը: Բրողութիւնն այն է, որ նա գիտէր ուժեր հանել ամայութիւնից, գաղափարական նւեւոններ անել այնպիսի տեղերում, ուր մենք ամենքս անզոր էինք: Եւ, սակայն, սերճախոս չէր... Նա աղուծ էր նոյնիսկ իր յուս, մեկամագճոտ նախածքով: Ահա թէ ինչու՞ ոմանց կորակէին նրան փաղաքական մակերդրով — կախարչ: Ահարոնեան կրօնէր նրան կատակով. — «Դու օփաւնչի ես»...

Մարդիկ կան — սակաւաթիւ ընտրեալներ — որ գիտեն յարգանք պարտադրել ամենքին: Անգամ մեր դուռը մեծատունները անտարբեր չէին դէպի Քրիստոսապետի հմայքը: Յիշում եմ 1903 թ.ակախի ամառը, երբ վարպետի շղթայադերձած Փոթորիկէն յետոյ, մեր միլիոնատէր կրեստները մին միւսի ետեւից զկէրկը կը դնէին՝ Անդրկովկասէն ու իրենց շուշը Փարիզ կատնէին, և երբ Քրիստոսապետի հրահանգով ինձ էր վիճակւած տխուր պաշտօնը զվնասօրէնու սարսփաշար դրամատէրերից մի ջանխիսն, յիշում եմ, որպիսի ակնածութեամբ էին նրանք խօսում «կառ, մօրուքաւոր վարժապետ» մասին, որը երկաթի հարւածներով շանթահարել ու շմեցրել էր նրանց... Լաւ գիտէին, որ այդ վարժապետը «փող ուտող չէր» և որ հաւաքւած միլիոնները պիտի երթային Գործին ծառայելու...

Յարգանք ունէին և հայ հակառակորդ կուսակցութիւնները և անգամ — օ քրիստոս: Որքան սիրւած, ժողովրդական էր բուշաբար-մակերոնացի յեղափոխական շրջաններում: Եւրոպական լեզու ազգի և հայու հայ կարողում, հասկանում էր Փրանսերէնը: Ոստէլ գրեթէ չէր կարող: Սակայն, դէժքով, կեցւածքով ինչոյն հրապարակ էր նոր ծանօթացող եւրոպացուն: Պէտք Քիլիառ առաջին իսկ հանդիպումից յետոյ Ժրնեի մէջ, մեկնելու աստի կը համբուրէր նրան: Եւ մի օր ասաց մեզ.

— «Ես ճշմարիտ պաշտամունք ունեմ Քրիստոսապետի համար»:

* * *

Շատերը կը մոռցնին, կը մեռնին յանորդներին գիտակցութեան մէջ — նա կապրի: Վիտոլի մեծ նահատակի աստղը կը շողայ հայոց խաւար Հորիզոններէ:

*) Բժ. Լօրիս-Լիբիխեան:
**) Ակարնեան:

րում, որպէս ուղեցոյց փարոսներն մէկը հայ դադա-
 փարական սերունդների: Գաշնակցական, ուսմակավար,
 մենչելիկ և անդամ բուլշևիկ՝ բոլոր նրանք, որոնց հա-
 մար ներթափան է հայ բազմաառնել ժողովրդի դատը,
 պատկառանքով պիտի անցնեն այդ մարդու շիրմի առ-
 ջիկից — մի մարդու, որ գիտցաւ ոչ միայն սպասուորել
 Իտալային, այլ և լուսաւորել այդ Իտալայը իր հօրը ու
 պայծառ իմացականութեամբ և իր մարդկային, ընկե-
 րային վարք ու բարքով: Բուլշևիկներէց լուսագործները
 կը հասկանան, ի վերջոյ, որ բարոյական մեծ արժէք-
 ները էպպէս նոյնն են պատմութեան բոլոր շրջաննե-
 րում, աշխարհագրական բոլոր գօտիների տակ և որ
 մարդուն գեղեցկացնողը ջինջ, վերասաց իշխակիցմն է,
 յամառ, անձնուրաց ճիւղը վասն ժողովրդի ազատու-
 թեան ու բարօրութեան: Կը հասկանան — Քրիստա-
 փորի օրինակից — որ անկարելի է նպաստել մի ժողո-
 վուրդի բարոյական վերածնութեան և ձեռք բերել
 ճշմարիտ ժողովրդականութիւն, առանց ճշմարիտ հայ-
 րենասէր լինելու: Բուլշևիկներէց լուսագործները, ի
 վերջոյ, կ'ըմբռնեն, որ Քրիստափորի և իր ընկերների
 ջանքերով է ստեղծուել քառասուն տարուց ի վեր խոր-
 հող ու զգացող հայութեան մէջ այն ազատաշունչը,
 առողջ, փրկարար կայութեան մէջ այն ազատաշունչը,
 վարութեան տգէտ ու կեղծ մարգարէները կուզեն այժմ
 յանրեմացնել միջնադարեան բնութեան լուծը...

Իսկ հինաւուրց, աշխարհ դործիչները, որ զու-
 կայրին Հայաստանի աշխարհի մէջ, ողբալով ներկայ
 մտաւոր ու բարոյական թշուառութիւնը, պիտի յիշեն
 միշտ ջերմ կարօտով ու հառաչանքով հայ ազատագրա-
 կան շարժման մօհիկաններին և պիտի գոչեն մեկա-
 մաղձօրէն, բանաստեղծի պէս.

— «Այո՛, մարդի՛կ կային մեր ժամանակում —
 հսկանի՛ր, ոչ մեզի պէս»...

Բուլքար մայրաքաղաքը սարքեց Քրիստափորին
 արքայավայել թաղում: Մի ճշմարիտ ապօթէօզ էր, որ
 կատարեցին դազաղի շուրջը բուլքար-մակեդոնական
 ռազմիկ շարքերը, Բորիս Սարաֆովի առաջնորդու-
 թեամբ:

Քառորդ դար անցաւ աղէտաւոր մահէն ի վեր: Եւ
 թանկագին նշխարները դեռ հանգչում են Սօֆիայի
 գերեզմանատանը, օտար Տորիզոնների տակ, սպասելով
 բաղձալի օրին, երբ հայրենի հողը, ազատած ընդ-
 միշտ բռնութեան մղձաւանջից, պիտի կարողանայ
 հիւրընկալել իր դաժման և միշտ սակայն հրապուրիչ
 ծոցի մէջ՝ հայ ժողովրդի մեծ դաւակը — հայկական
 Մածձիհին:

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԱՂԵՏԱԻՈՐ ՄԱՅՐ

ԽՄԲ. — Քրիստափորի մահում քանակականակին առքիւ, որ այնքան խոր ցնցում պատճառեց իր
 ժամանակին, «Իրօշակ»ի 1905ի համարներէն կարտապպեմք ռպրացեալ է. Ակնուցիի այս նկարագրութիւնը,
 ինչպէս և Ղարիբի ռպրը —

Հսկայական ծրագրերը դիւրի մէջ, յափշտակած
 ժողովրդական տանջանքների սփոփման իղձերով՝ նա
 պտուած էր քաղաքից քաղաք, երկրից երկիր: Կողկա-
 սից անցաւ Շվէյցարիա, ժրնեից Բալկան, Վիէննայից
 նորադատ Բուլքարիայի մայրաքաղաքը և այնտեղ, բա-
 րեկամների և համախոհների նեղ, բայց ստերիմ շըբը-
 ջանում, իր փայտալաճ ծրագրերների հնոցի մէջ՝ դտաւ
 աղէտաւոր մահը, անսպասելի, ինչպէս որոտ, շանթա-
 շարող՝ որպէս կայճածակ:

Մարտի 4/17-ն էր: Քրիստափոր Միքայէլեանը —
 ո՛չ, նրա մտերմական հողուն չէ սազում այս ձեռք —
 Քրիստափորը ուղեկցւած տասնից աւելի ընկերներով,
 հայ և մաղիթօն, գնաց մերձակայ լեռներում թապուած
 մի ձոր, ուումբի փորձեր անելու: Կնեթաժօ գիրդի մօտ
 էր աղբ: Փորձի նպատակն էր՝ պարզել ընկեր եղբարու-
 գին՝ այդ վառվուռն յեզափոխականին՝ տուձերի կա-

տարեկադրձման նորանոր ձեւերը, մշակւած իր ձեռ-
 ձով, արդիւնք երկար ամիսների աշխատանքի: Ընկե-
 րական մի համեստ հացիկերոյթից յետոյ՝ վիճակակից
 երկու ազգերի դաւակնիցը դաշտ դուրս եկան: Սկուե-
 ցին փորձերն ու վիճարանութիւնները: Տարբեր էին
 կարծիքները: Ոմանք անյալողութիւն էին գուշակում,
 զգուշութեան յորձոր կարգալով, միւսները տատանում
 էին: Անյողող էր միայն մէկը — Քրիստափորը,
 վստահ նախորդ փորձերին, հաւատացած աներկբայ
 յարողութեան:

Ահա վերջապէս ուժբաձիգը՝ կոշուարդ գիրք բռնեց:
 Միւսները, զգուշութեան համար, հեռացան՝ աւելի
 բարձր տեղից դիտելու պայթիւնի հետեւանքները: Առ-
 շարժ մնաց միայն Քրիստափորը, անբաժան ուժբաձիգ
 ընկերոջից: Ոչ մի ինչիւրք, ոչ մի յորդոր, ոչ մի նաա-
 յազգուշացում՝ տեգահան շարքի նրան...

Անցաւ մի քանի րոպէ։ Ու յանկարծ որոտանման դժբաղդը ցնցեց շրջակայքը, և ծուխի ամպը պատեց փորձի ամբողջ վայրը։ Հեռացած ընկերները՝ ճնշող նախազգացումով ներքև սլացան, նետուցին այն կողմը, որտեղ ուրաճիդն էր կանգնած։ Եւ նրանց աչքերի առջև բացեց սոսկալի որդերգութեան անաւոր տեսարանը... Քրիստափորը թաւալորը, հաղի շունչը բերանին, իրուարդը հեռու նետած, խրած ձեւնախառն հողի մէջ՝ արդէն մահացած։ Սարտեցցոցիչ լուսթեան մէջ, զերբնական ուժով, մի ճիշտ լուսեց։ Ընկերները օդութեան յուսահատական ճիւղ արեցին — և անմտաշունչ նահատակը, իբրև «մտաց բարեկէ» վերջին նշան, փորձեց վերաբանալ մարած աչքերը, նայեց իր շուրջը, դիտեց հեռուն, շատ հեռո՞ւն և հանգաւ՝ առանց բառ անգալ արտասանելու...

Վերջերի ծանր էին և կսովարեր։ Իրուարդի ամբողջ աջ երևաւ, կրծքի աջ կողմը, ինչպէս և աջ ոտը, պատաստուած էին և այլանդակած։ Աջ ձեռքը կտրած էր արմուշկից։ Ռուսը կատարել էր իր աւերմունքը անխնայօրէն, կատաղութեամբ։ Քրիստափորի վէրջերը, արդիւնք ուսմանի նետուածքներէ, երեք էին։ Երկուսը ձախ երեսին և ձախ ոտին — թեթև և անկարևոր։ Երրորդ վէրջը ուղիղ կրծքին — մահացու։ Եթէ չլինէր ծոցի դրպանում պահած արծաթեայ ծխատուփը, որը երկու տողից ծակած էր, սիրտը պատաստ-պատաստ պիտի լինէր ամբողջովին։ Անվահեր գործիչները՝ փոխաբերէ՞ երկու դիակ։ Այդ էր իրականութիւնը։ Եւ նրանց վերաւոր, յօշուած մարմինները, ընկած մի անհիւր-ընկալ ձորում, ձիւնի մէջ, մնացին երկար ժամեր, շրջապատւած ոստիկանական պահապաններով, որոնց հրամայած էր խստութեամբ հսկել, մի րոպէ իսկ աչք չհեռացնել «քաղաքական կարևոր գէպեր» խորհրդաւոր գոհերից...

* * *

Մարտի 10/23-ն է։

Թաղման պաւոր օրը։ Սօֆիայի հայկական անշուք մատուռի մէջ երկու դազաղ են դրւած՝ կողք-կողքի։ Մեռան միասին, պիտի թաղուեն միասին։ Ուսուս բազմութիւնը լցրել է մատուռը, բակը, հրապարակը։ Մակեդոն հայրակները, մարտական համարգետնով, պատի պահակ էին կազմում։ Ահա աւարտեց աղօթքը, այնքա՞ն աննեղաշնակ մարտիկ յեղափոխականները ոգուն, սրտին, մտածմունքներին... և ժողովուրդը՝ դազաղները ուսերին առած՝ շարժեց դէպի գերեզմանատուն։

Եղանակը հրաշալի էր։ Բուլղար ժողովրդի մի հոծ բազմութիւն, տեղաւորւած պտուղամբներում և փողոցի երկու կողմը՝ պատկառանքով և վշտով դիտում էր հայկական նահատակութեան այս տխուր հանդէսը։ Առաջին գնում էր ներկայացուցիչները և համակողմները երկար շարքը, քառասունից ասելի պսակները ձեռքին բռնած (դրանց թւում Մակեդոնական Կոմիտէի, Ռուսաց Մոցիայիստ-Յեղափոխականների, Հինչակիան տեղական մասնաճիւղի, Իւանկայական խմբերի, Սարաթովի և այլն)։ Փոքրաթիւ Տոգեարական գաւառի հետևում էր մի քանի հազարեց բաղկացած բազմութիւնը՝ մեծ մասը մակեդոն և բուլղար, հայկա-

կան դատին համակողմ տարբեր։ Եւ ամբողջ բազմութեան վերջն ու ցար ցորանում, մարմնանում էր այն հնչիւնների մէջ, որ զինուորական նախախումբը վարպետօրէն տարածում էր դոյզ դազաղների շուրջը, վերտահար սրտերի մէջ...

Հանրային գերեզմանատունը, երկու միանման փոսի շուրջը շարւած է բարմութիւնը, յուլած, մռայլագէժ, արտասուքը աչքերին։ Կին և տղամարդ, հայ և մակեդոն, յեղափոխական և համակողմ — բոլորն էլ բռնկւած են նոյն ցառով, խորունկ վշտի նոյնանման զգացմունքով։ Յարգալից լուսթեան ընդհատորդ՝ զպաւած հեկեկանքի է, որ մերթ ընդ մերթ դուրս է նետուում սիրող սրտերից, անկարող դիմադրելու փոթորկող զգացմունքներին...

Աղօթքը աւարտեց։ Հերթը հասու թաղման տըրբաղոյն էջերին — զամբանականներին։ Երկու էին խօսողները։ Մէկը հայերի կողմից՝ Ո՛. Մալումեան, միւսը մակեդոնացիների կողմից՝ Ս. Գիրով։ Մակեդոնական շարժման անուսի դեկալար՝ Բորիս Սարաթով, վերջին րոպէին, քաղաքական ստիպողական հանգամանքից դրուած, հարկադրւած էր խօսքից հրաժարել։

«Այս դազալի մէջ — ասաց մեր հայ ընկերը՝ վերջաբանի մէջ — ամփոփւած է հայ յեղափոխութեան սիրտը և հայկական մարտնչող երիտասարդութեան փարիսյանը։ Գրչի վարպետ չէր մեր անման ընկերը կամ շանթաւարող ճառասաց, և ոչ էլ հայրուկների դեկալար՝ Արեան երկրի փշուտ ձորում։ Ոչ։ Նրա ուժն ու տաղանդը բնորոշելու համար պէտք է հնարել մի նոր բառ, որ գոյութիւն չունի մեր լեզուի մէջ, — մարդագարծ էր նա, մի հմայիչ, դիւթիչ ոյժ, որ հրաշակերտում էր գաղափարական մարդը խոպան, անմաշկ սրտերի և ուղեղների մէջ, շարժաբան նրանց և ուղղում դէպի մտքի պալատը, դէպի յեղափոխական վերանորոգիչ կուրբ։

«Զեք, մակեդոն ընկերներ, ու ձեր հակողութեանն ենք յանձնում հայկական յեղափոխութեան անման վետերանը, անմոռաց Քրիստափորին՝ իր երիտասարդ բարեկամի հետ միասին, որ նրա դործակիցը եղաւ արիւնտ յեղափոխութեան մէջ, և հարևանը՝ անարին դամբարանում։ Սա երկու գերեզմանը թող հայ-մակեդոն դաշնակցութեան դրաւականը լինեն, մշտական յուշարձանը՝ մեր դժբախտութեան, մեր կուրի, մեր գրաւիչ սպառաջի։ Պահեցէք նրանց խնամքով, հսկեցէք նրանց քերթութեամբ, մինչև այն Մեծ Օրը, երբ մեր ընկերները, անկասկած, ասելի երջանիկ զան մենք, դարձեալ մի անգամ կը դան նոյն այս քաղաքը, ոչ վիսիկոր և վշտաբեկ, ինչպէս մերք, այլ նպարտօրէն, անկնճիռ ճակատով, այս հիւրընկալ երկրից ազատ-Հայաստան փոխադրելու նշխարները այն տարագիրների, որոնք իրենց շխթալիկապ հայրենիքի մէջ, բռնապետութեան ճիրաններում սեղմւած, մի գերեզմանատնից անգամ չունեն, վերջին հանդատարանը բազմատանջ գործողների։ Այդ մեծ օրը պիտի գայ, որովհետև մեծ են գոհերը...»։

Իովանդակաւոր և հմայիչ էր ընկեր մակեդոնացու ճառը։ Ոգեւորւած շեշտով նա հայկական շարժման ուրազիճը տեղե և պատմիկացրեց այն անմոռաց ու անձնէր աշխատաւորներին, որոնք, մինը իբրև քարո-

զիչ, միւր որպէս մարտիկ, երրորդ ինչպէս կազմակերպող, հայկական ազատագրութիւնը հրաշակերտեցին:

Երկու օր յետոյ՝ Թարմ և Թանկուբին հողակոյտի շուրջը՝ կանգնած էին մտերմները: Վերջին այցն էր այդ: Լի յուզմունքով, խորին լուսթեան ենթակայ, բոլորն էլ գերի էին հեռուոր, տարբեր և սրտատրոփ յուշերի: Մի ամբողջ կեսնք, լի գրաւիչ զպգերով,

կապած այդ գերեզմանի հետ — վերաբարձրեց իր ամբողջ ուժով: «Նա, շտեսաւ իր տանջանքի պտուղը, չվայելեց ազատութեան արշալոյսը»:

Մեր վերջին մրմունջն էր այդ:
Մնաս բարովի աղիտարչ մրմունջը...

է. ԱԿՆՈՒՆԻ

(«Ինչոյակ» 1905. № 4)

ՕՏԱՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԻ ՏԱԿ

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐՈՒՆ

Եւ կարաւանը կանգ առաւ յոգնած...

Օտար ու հեռուոր հորիզոնների տակ մի գերեզման կայ, մի մտայլ ու անգործ գերեզման, որ հայրական խնամքով ու քնքուծութեամբ սղմում է իր կողքին մի ուրիշը՝ մի նոյնպէս անգործ, նոյնպէս մտայլ գերեզման. և նրանց վրա ուշ գիշերներին պլպլան աստղերը սիրում են երազել աշխարհի իրերը, մեղմ փնփուռով իրար են յայտնում մի խորին դաղտնիք, սպա թախծապատ ու դալուկ դէմքով սահում, սահում անցնում են դէպի արեւմուտք: Բնակեր ու այրի թռչունը մոլոր, անիծելով իր թողած վայրերը՝ հասնում է այնտեղ, պտոյս է անում լուիկ դամբարանի վրա, մի յետին ցաւոտ երգ է հեծեծում և անցնում է գնում տանելով իր հետ էլլ մի նոր վիշտ, աւելի խորունկ, աւելի կիզիչ: Եւ մի դժբախտ երկրից բոլոր լալկան հովերն այստեղ են փչում միահամուռ սոյլով, երբ բեռնատարած են ցաւ ու արցունքով, երբ բոթեր ունեն կամ խոր հառաչանք, երբ գայրոյթ ունեն կամ ծով հեծեծանք, երբ սրտունջ ունեն կամ անզուսպ բողբոջ:

Կարաւանը յոգնած՝ այնտեղ կանգ առաւ:

Նրանք եկել էին հովերի յետևից քայլ առ քայլ, դանդաղ ու յոգնած. եկել էին փոռոտ, անվերջ ու մոլոր ճանապարհներիով, կուսացած իրանց ստապանքի բեռի տակ, առանց տնքոցի, առանց արտունջի, առանց ակտսանքի, որպէս ուխտաւանդ, որպէս փրկութեան համբ նոխասներ: Եւ քայլել էին գիշեր ու ցերեկ, սրբուած կրօնակներով, աչքերը դէպի հեռու միշտ հեռու, դէպի այն օտար հորիզոններ, ուր մնա մի օր իր կորիւնի հետ պտակեց հակայի քնով, այլ ևս երբեք չվերկենալու համար, ուր հօր գլուխը յոգնած ու տառապալից, մի օր, մի անէծքի օր, կախեց լայն կրծքին, այլ ևս երբեք վեր չբարձրանալու համար:

Հովերի պէս բեռնատարած, հովերի պէս անհանգիստ ու սգաւոր, նրանք գալիս էին այն սևաւոր երկրից, ուր ժպիտը յանցանք է, ու արցունքը՝ ծով, ուր կեանքը՝

անէծք է, և մահը փրկիչ, ուր հառաչանքից երկիրն է այրւած, և հողը տնքում է ցաւերի բևեռից: Եւ հովերի հետ անցել էին ծովեր ու գետեր, ոտի տակ տւել լեռներ ու ձորեր, բողբոջ՝ շրթներին, կակիծը՝ սրտներին, անցել էին ու կիկ դէպի մենաւոր գերեզմանը: Եկա՞ն, եկան ու շարան-շարան կանգ առան այնտեղ, ուր հովերը մրբկում: էին, գալարւում, ոռնում:

Եւ կանգ առաւ ծերունին, ճերմակ միբուքն ու ալիքները հովերին դէմ տւած, և իր լայն կրծքից հառաչանք հանց, գետին դարկեց մաշւած գաւազանը, և հողը դրնդաց նրա հարւածից: Նրա հետ մէկտեղ կանգ առան բոլոր նրանք՝ որոնք եկել էին լեռներից ու ձորերից, այրերից ու մութ անտառներից, դաշտերից ու աւերակներից, բոլոր նրանք՝ որոնք եկել էին իրենց կրծքի տակ կուտակւած ցաւը թափելու, իրենց հոգին ազմկող մեծ բանն ասելու, սրտի ահագին բեռը վար դնելու. այրիների, որբերի, ծերերի, տառապալների վշտոտ կարաւանը կանգ առաւ:

Շուտ այստեղ ես քնած, քո կորիւնի հետ, ով մարգարէ, նահատակ, առաքեալ, ասաց ծերունին, այստեղ՝ օտար հորիզոնների, օտար երկնքի տակ: Մենք երկաթ ոռնաման հագած, երկաթ գաւազան ձեռք առած, հովերի հետ մէկտեղ քեզ փնտրել ենք երկրէ երկիր, սարից սար, ձորից ձոր: Մենք եկել ենք բոլոր նրանց կողմից, որոնք լալ են ուզում, բայց արցունք չունեն, հառաչանք ունեն, բայց կրծքին է փլած, սև կակիծ ունեն, առանց սփոփանքի, զանգատներ ունեն, սրտնց սիրտ չի դիմանայ, և աչքերն անթարթ նայում են հեռուն, հատուցման և վրէժի սասանեցնող ու ահաւոր օրին են սպասում: Փայիս ենք բոլոր նրանց կողմից, որոնց հողին մտադրի պէս կարծացել է արհաւիրքի ու տանջանքի մէջ, բայց էլ տոկայու, լեռու, համբերելու կարողութիւն չունեն, և երազում են հատուցման հրաշալի օրը: Եւ դու քնած ևս, զարհուրելի է...

«Արդար վրէժի կարմիր ժամը դարբնող դու հոկայ վարպետ, ի՞նչ եղաւ զեզ. երկիւ՞րն էր անողորմ, որ շուտ գրկեց զեզ, թէ՛ երկինքը, որ փակեց աչքերդ. հազար ու հազար միազնած աչքեր օր ու գիշեր նայում էին հեռուն, դէպի սև հորիզոնը, սպասելով ատելութեամբ ու վրէժով դանդաւած հսկայական փոթորկին, որ ջո ձեռքով շղթայադերձ՝ վերջապէս պիտի պոռթկար մեր սևաւոր երկրի վրա, սրբելու համար բոլոր արցունքները, բոլոր անիրաւութիւնները, բոլոր դարշանքը, ամոքելու բոլոր այրւած սրտերը, փշրելու բոլոր ժանգոտ շղթաները : Եւ դու ջնած ես... դարձուրեի՞ր է...»

«Ո՞, այդ աստուցման սքանչելի օրը... ինչո՞ւ ուշացաւ. նրա համար մեր մեռելները թանձր հողի տակ հեռւմ էին անհամբերութիւնից, մեր լեռներն ու ձորերը մնջել էին ահաւոր գաղտնիքին իրադե՛կ՝ մահամերձ հիւսնդները անպիթ չհոգեվարքով, օրերով պայքարում էին մահաւան դէմ, որ մեռնելուց առաջ այն զոռ փոթորկի կաթնակի փայլը մի յետին անգամ շողշողայ նրանց աչքերում և մարդակեր ճիւղաղի վերջին զգելի հառաչանքը նրանց ահանջների մէջ մարի: Եւ մանուկները օրօրոց մէջ և ծերերը գերեզմանի հողաթմբի վրա իրենց գաւազանին ծեփած՝ նայում էին այն կողմը, որտեղից պիտի ծագէր փոթորկածին արշալոյսն անագին: Եւ դու ջնած ես... խորունկ, անդորր ջնով:

«Ի՞նչ եղաւ զեզ, ո՞վ դու սրտերի և կամքերի հրաշալի հովիւ, արիւնտու մրրիկներին հօր ու ըմբոստ վարիչ, ո՞վ սուեց զեզ այդ ճակատագրական ջուրը, այսքան խորը և աշպպէս երկար: Չգիտե՞ս արդե՞ք, որ հազար ու հազար հոգիների մէջ հաւատն է լալիս այրի ու սպաւոր, հազար ու հազար սրտերի մէջ ծլած յոյսը կենսատու շողերին կարօտ՝ մեղմիւ հեծեծում է սեւ խաւարում: փոթորկին եկաւ՝ ու անդերը շցրեց, կայծակը շանթեց՝ ու խոտոր անցաւ: Եւ դու ջնեցիր, երբ այնքան հոգիներ երազում էին ջո մեծ և ահաւոր ու սքանչելի երարը...»

«Ձէ՞ մեր լեռներում հրէջը մնաց կանգուն ու սպառնալի. հազար գլխանի արիւնարբու հրէջը, որ մեր հոգիներն է ջարդում, մեր արիւնը ծծում, մեր սիրտը քամում. մենք եպիւում, միկուում ենք նրա բոց շնչի տակ: Տե՛ս, զեզ բերել եմ ես նմուշները սարսափի, ցաւի, կսկիծի, լացի. սրանք ամենքը ստելիք ունեն, սրանք ամենքը զանգատ են եկել, զարթի՛ր ու ասա՛, մեր ծով ցաւերի վախճանն ո՞ր է, ասա՛, ո՞վ է անիծել մեզ և ինչո՞ւ: Նայի՛ր մեզ վրա դէթ մի անգամ, ո՞վ մեծ, ո՞վ ըմբոստ հոգի, և երբ նայես, գիտած, ջո հսկայ սիրտը էլ ատկալ չի կարող, էլ ջնել չի կարող և դու վեր կը ցցես ջո բոլոր վեհուրթեամբ, այն բաց ու հպարտ ճակատով, որ բոլոր դժբախտներն ու պայքարողները երազեցին, այն հրաշաղէտ աչքերովը, որոնց տակ ներթափան ու փրկարար կաթնակն էր մըլուում, այն սքանչելի նայածքովը, որից հաւատն էր կաթկթում բաղամի պէս՝ աւեր ու վշտոտ հոգիների վրա, այն լայն կրծքովը, որ հօր կաշնու պէս փոթորկիկների տակ երբեք չունբաց և որի վրա բախտի բոլոր խորթ դաւաճները գլուխ դնելու տեղ ունէին:

«Չարթի՛ր ու վեր կաջ. ո՞ր անիրտ հոգը կարող է կաշկանդել զեզ իր խոնար ծոցում, երբ մենք տուտա-

պում ենք անլուր ցաւերով, երբ մեր հեծեծանքն ու աղալակն անսիրտ երկնքի երեսն են մրկում. չէ՞ դու մեզ համար տարաբ պայքար, տանջանք և մեր փրկութեան օրը երազեցիր: չէ՞ ջո պայծառ ճակատը մեզ համար կծկուեց և ջո աչքերը մեզ համար լացին: Ո՞ր է այնքան լայնարձակ շիրիմ, որ ջո երազներից ամենից վսեմը, ամենից ըմբոստն ու ահաւորը դեռ երազ մնաց. այն՝ որ կայծակների մէջ էր փթթել փոթորկուտ դիւշերներին և ջո մեծ հոգին յուզում էր, աղմկում միայնուրթեանդ թախճոտ ժամերին, այն՝ որի համար մենք օր ու գիշեր ծնկալոջ օրհնում էինք ջո ուղին, մեր միւր ջրջրում ու անխնոտում, որ համբ կտրենք ժայռերի պէս, ձայն չհաննք, չփոխանք, իրար չնայենք, չհայնացճերս կախկալ, լուենք, լուենք ու համբերենք, մինչև պայթի ջո հօր ձայնը, մինչև կատարի ջո կարմիր ուխտը, մեր բոլորի ուխտը, մինչև փայլատակի կարմիր արշալոյսը մեր յոգնած և մարած բիբերի վրա:

Եւ այն երազը դեռ երազ մնաց, իսկ դու ջնած ես... ո՞ր շար աստածը թափեց զեզ վրա այս խորունկ ջունը:

«Դէ՛հ, շարժվիր ու վեր կաջ, ցնցիր ու թափ տուր այդ հողակոյտը, կանգնիր մրրկուտ հովերի առաջ, որոնք մոնչում են մեր աշխարհի զլիխն: Մի կոյր զիպւած ի՞նչպէս կարող է այնքան հոյակապ կեանքը սպառել, այդքան մեծ հողու ներթափան հրդեհի բոցերը մարել, այդ հօր մտղեթ թոխչըր սանձը, այլևս երբեք չթողնելու համար: Եարժևիր ու վեր կաջ, այդ մենք ենք ասում, մենք՝ որ գուրգուրեցինք զեզ մեր հոգիների մէջ, մենք՝ որ հազար ու հազար մեռելներ ունենք վրէժի ծարաւ, մենք՝ որ յոգնած ենք գերեզման փորելով, օ՞ դարթի՛ր, զարթի՛ր ու վեր կաջ...»

Գերեզմանն անշարժ է, հողաթումբը համբ և նրա վրա բուսած խոտերը օրօրում են իրենց գլուխները անյոյս ցաւով, անկարելիի, անշառնալի լուռ շեշտով: Եւ արցունքի կաթկթները ուսած ու խոշոր ցարտում են ծերունու աչքերից, կնճռոտ այտերի վրայից վրա զլորում, իջնում, իջնում, թրկում անբարձր մրրուքը և կաթիլ կաթիլ շաղում գերեզմանի վրա: Եւ նրա հետ մէկտեղ իր վշտոտ հօրը հեծեծում է ու լալիս և թափւած արցունքից հողաթումբը թրկում է, ջրբուում է, եռում է:

Արցունքը թափեց և հողը թրկեց, արցունքի ցաւից՝ շիրիմը խօսեց.

«Գիտե՛մ, գիտե՛մ, բոլորը գիտեմ... փոթորիկը պայթեց, սև ամպը մնաց, կայծակը շանթեց ու խոտոր անցաւ: Տւէք, տւէք ինձ ձեր բոլոր բեւը, բարը բարը արեցէք այս կրծքես վրա, և առանց արցունքի ու յուսահատութեան, վերստին յետ դարձէք. այնտեղ լեռների վրա թառած արծիւներ կան, որ բոլոր շանթերի գաղտնիքը գիտեն, դէպի լեռները, դէպի լեռները՝ հայրենի... փոթորիկն այնտեղ է, և նա կը պայթի տհազին որոտով, երկնքի վրա սև ամպ չի մնայ, կայծակն այնտեղ է, նա կը շանթի ու էլ խոտոր չի անցնի: Դէպի լեռները, դէպի արծիւները, իսկ ե՛ս... օօ՞Ք...»

Լուռ գիշերներին ուշացած աստղերը դարձեալ դա-

իս են երազելու մենաւոր դամբարանի վրա ու լայիս են անհունութեան մէջ. բունաւոր, այրի թռչունը մտար այնտեղ է հեծեծում իր ցաւի երգը, և դժբախտ երկրի հովերն անհանգիստ նրան են պատմում իրենց տեսածները:

Եւ գերեզմանը լուռ երգում է ասողերի, ամպերի

և հովերի հետ իր մեծ, իր սքանչելի երազը...

Եւ հեռո՛ւ, հեռո՛ւ լեռներում թուխ ամպերը բարդ բարդ դիպում են, հա զդիպում. ճայթի՛ր, ճայթի՛ր փոթորիկ...

ՂԱՐԻՐ (Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ)

(«Դրօշակ» 1905 թ. № 9)

Ա Ի Ե Տ Ի Ս Ա Հ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

(Քաղաքացի երգիչը)

Յառաջիկայ Ապրիլին, Փարիզի մէջ և ամէն տեղ — քացի, անշուշտ, հայրենիքէն — կը տուժի ընկելու Ա. Ահարոնեանի գրական գործունէութեան բաւասման հայ յոբելեանը:

Ահարոնեանի գրականութիւնը ամբողջ սերունդ մը վարակած է ոչ միայն իր գեղարուեստական արժէքով, այլ և իր բովանդատ, հայրենասիրական և յեղափոխական շունչով:

«Դրօշակ»ի ութնուհարս թիւնը պարտականութիւն կը համարէ իր ձայնը միացնել համագային յարգանքի ցոյցին, մանաւանդ որ, ընկելը յոբելեանը, առաջին օրերէն իսկ, մոյս այս էջերուն մէջ ձև ու մարմին տուած է Ազատութեան ու Վշտի, Բողոքի ու Մարտնչումի իր հօթը միշտբուն:

Երկու ընկերներ Ահարոնեանի գրականութեան յեղափոխական, դաշնակցական գիծն է որ կը փորձեն պարզել, հետեւեալ երկու յօդուածներով — ԽՄԻ.

Հայ քաղաքական միտքը, որ բուսականին զեղեւուններ և տատանումներ էր ունեցել անցեալ դարի երկրորդ կէտերին, ութնուհարս և իննուհարս թահականներին արդէն ստացել էր իր վերջնական ձևակերպութիւնը: Այդ շրջանում այլևս վիճելի չէր համարուած թէ ի՞նչ է հայութիւնը: Հայութիւնը այլևս չէր համարուած մի կրօնական համայնք, որը իր եկեղեցուց դուրս ուրիշ ոչինչ չի պիտի ճանաչէր. չէր ընդունուած նոյնպէս, որ հայութիւնը կազմուած է մի խումբ քաղցաստներէր, որոնք նստած Պոլիս, Պետերբուրգ և այլ հեռաւոր վայրեր, մտապած վաղուց հայրենիքի գաղափարը, իրենց փոքրիկ շրջապատից դուրս ոչինչ չէին ճանաչում, բայց զրա հետ միասին յաւակնութիւններ ունէին հայ ժողովուրդը գեղականորէն իրենց վերացական պատգամներով, առանց մտախոգելու թէ հայ ժողովուրդը համաձայն է իրենց հետ թէ ոչ: Ութնուհարս և իննուհարս թահականներին անվիճելի կերպով ընդունուած էր, որ հայութիւնը մի հաւաքականութիւն է, որը ունի իր սեփական հայրենիքը, իր անցեալ և ներկայ պատմութիւնը և իր մշակոյթը: Կարելի է ասել, որ միայն այդ թահականներից էր, որ հայ մտաւորականը յտակօրէն գիտակցել սկսեց, որ իր հայրենիքը պարտական անուն չէ միայն, այլ մի իրականութիւն. որը կայ և գոյութիւն ունի և թէպէտ բաժանուած և բռնաբարւած է այժմ ուրիշ ազգերի ձեռքով, բայց այդ հողամասը իրն է. իր սեփականը և իր այդ անբախտի իրաւունքը չի կարող լսել նրանից ոչ մի օտար և բռնի ոյժ:

Ծնորհիւ այդ գիտակցութեան հայ մտաւորականը միտում և արհամարհում էր պետութիւնների ձեռքով արհեստական կերպով ստեղծուած ուսուսանայ, պարսկահայ և տանկահայ հասկացողութիւնները և զբանց տեղի դնում էր հայ քաղաքացու նոր գաղափարը: Ոչ մի բռնի ոյժ, ստուծ էին նրանք, չի կարող բաժանել հայ ժողովուրդին միմիանցից. նա մէկ է և ունի մէկ

ընդհանուր հայրենիք, ինչ փոքր թէ նա ծնած կարող է լինել Երևանում կամ Վանում, Մոսկուում կամ Ղարաբաղում: Ունենալով այդ հասկացողութիւնը հայութեան մասին, այդ սերունդն էր, որ ոչ միայն առաջադրեց հայութեան քաղաքական պահանջները, այլ և վերջնականապէս ձևակերպեց այն ուղին, որով պիտի ընթանար հայ քաղաքական միտքը: Այդ սերունդն էր, որ լայն գանգաձանների սեփականութիւնը դարձրեց հայ հայրենիքի գաղափարը, խլեց ինքնակոչ անհաստիքի ձեռքից ազգային գործերը վարելու մենաստիքութիւնը, հայ ժողովուրդի դատը յանձնեց իրեն ժողովուրդին և արհամարհելով հազար ու մի արեւելքներ, վտանգներ ու փորձանքներ, խիզարութիւն ունեցաւ ոչ միայն խօսքով այլ և գործով ցոյց տալու թէ ի՞նչ միջոցներով հնարաւոր է իրագործել հայութեան խլեակները:

Սա մեր առաջին բողոքող և մարտնչող սերունդն էր, որը իր ետեկից քաշ տեց իրեն յարողող սպազայ սերունդներին, ստիպելով նրանց ևս պայքարելու հայութեան խլեակների համար:

Ահա այդ շրջանի ծնունդ էր Աւետիս Ահարոնեանը, որը իր քառասնամեայ գործունէութեան ընթացքում միշտ էլ մնաց հաստատար մարտախաչաչը այդ սերունդի դաւանանքների և իրէականի:

Ութնուհարս թահականների վերջերին մենք տեսնում ենք նրան Արարատի ստորոտում, յետամնայ Սուրբաշու գաւառակում, իբրև փոքրիկ հասարակական գործիչ: Նա ուսուցանում է հայ մանուկներին հայ գիրը և հայ պատմութիւնը, աշխատում է իր համագիւղացիները միասն լրուսուրել ծանօթացնելով նրանց մեր պատմութեան հրուսուս դրազների հետ: Դրա հետ միասին իր սկզբնական զբաղան գործերով այն ժամանակայ յառաջադէմ «Մշակ» լրագրում աշխատում էր հրատարակել զինչ ժամանակակից այրող հասարակական խնդիրներ: Ահա այդ երեք տարիքն էր ըլլոր ժամանակ մնացին Ահարոնեանի քառասնամեայ

չործունէութեան ընթացքին — նա և՛ հրապարակալուստ է և՛ գրագէտ և քաղաքական գործիչ: Ապրելով ուսումնական թւականներէ հասարակական իրէջաներով, նա զիտակցում էր, որ իր մէջ բացի գրադէտից, նստած է և հայ քաղաքացիին և այդ գիտակցութիւնն էր պատճառը, որ շատ անգամ, երբեմն երկար տարիներ, գրական մարդը չքանուած էր նրա միջոց՝ ասպարէզ բաշխելով կամ հրապարակախօսին կամ քաղաքական գործչին:

Մեր այդ ժամանակայ գրագէտներից և ոչ մէկը չկարողացաւ յատկապէս բնութենով հայ քաղաքացու պարտականութիւնը ինչպէս Ահարոնեանը: Իրանով պիտի բացատրել, թէ ի՞նչու մեր գրագէտներից շատ քերքը միայն ապրեցին հայ ժողովրդի տառապանքներով և գիտակցեցին նրա թափած գերմարդկային ճիգը իր ապատութեան համար: Հայ ժողովրդի և այդ հայ գրագէտների միջև խրամատներ կային. այդ խրամատները երբեք չվերացան, այդ իսկ պատճառով այդ գրագէտները երբեք չկարողացան միանալ, ձուլել հայ գանդակաւորների հետ, ապրել և ըմբռնել նրանց հոգեկան ճգնաժամները. մինչդեռ այդ հայ գանդակները Ահարոնեանի իսկական տարբերքն են եղել միշտ: Ոչ մի տեղ, գուցէ, Ահարոնեանը իրեն ախտահար հարապատ չէր քղում, որքան այդ մարտիկ հետ. նրա հերոսները այնտեղից են, նրա թիւրք և պատմաւածքը վերցնում է նրանց կենսաբան, ապրում է նրանց վշտով, ոգևորում նրանց յաջողութիւններով:

Իննասուական թվականներից սկսած, էրր դեռ եւս աննշան եւ անվարժ գրագէտ էր նա, անմիջապէս կարողացաւ իր տեղը գրաւել և իրենով գրադէտին, մասնաւոր, 1895 թվից սկսած, էրր փութորկեցին տաճկանայ նահանգներն և տաճկին ու քերպըր նորից տարել և սրածուրթեան մատնեցին հայկական դիպերը: Մասից ճողողարած փախստականների մի խոշոր քանակութիւն թափեց կովկասեան սահմանները, որոնց մեծ մասի տառվին կայանք հանպիստում էր Մուրմալուի գետտը, ուր այն ժամանակ ապրում էր Ա. Ահարոնեանը: Նա տեսաւ փախստականների պրոցուքները, լսեց նրանց սոսկալի, շմեկուցիչ պատմութիւնները և զրի առաւ իր լսածների, տեսածների մի շնչին, աննշան մի մասը և մի քանի պատմաւածքներով թմարած հասարակութեան թիքացած խոճի վրա նետեց: Դա մի աղաղակ էր, աղաղ կատաղութեան մի ճիշ էր, որ երիտասարդ գրողի հոգուց գուրս էր թրուշում և ընկնում էր հայ հասարակութեան սրտի մէջ, գուցէ ինքն էլ չէր գիտակցում, թէ ինչպիսի շեշտակի կերպով մատը գրել է հայ ժողովրդի իսկական վերքի վրա:

Այդ շրջանի նրա փոքրիկ պատմաւածքները «Պուստիկա», «Ճալազ-վուր-գունի», «Փշուր-բմ-խաց», «Բախտի խողեր», «Բաշոն» և այլն, իրական պատկերներ էին հայ փախստականների կենսաբան, որ այնքան վշտաւ անող Ահարոնեանը գնում էր այն հասարակութեան առջև, ցանկանալով ունենոր, բարեկեցիկ դասի պիւթը շարժել դէպի այդ թշուառները:— Օգնեցէ՛ք այս սրից և Տրից ճողողարած բեկորներին, սղաք ձերն են, ձեր հարապատները, սղաք օտարներ շին, թէպէտ գալիս են սահմանի այն կողմից:

Այսպէս էր սահ Ահարոնեանի սկզբնական շրջանի գրականութիւնը և նրան, իբրև հեղինակի, գրադէտնող խնդիրները. սուրբէս էլ գուցէ կը մտար, եթէ Ահարոնեանի անձնական կենսաբան մէջ էր անասնկալ փոփոխութիւն չլինէր, որը հիմնաւորապէս որոշեց նա ապագայ ճանապարհը:

1898 թվին Ահարոնեանը մի բարեկամուհի գիպուծով ընկնում է Եւեցարիա ուսանելու, ճիշտ այն ժամանակ, էրր Բրիտանափորը և իր ընկերները գերմարդկային ճիգեր էին թափում հայկական հարցի վերակենդանացման համար, որը շնորհիւ համատարած բեակցիայի մոտացութեան վրա էր:

Բրիտանափորը հասարակական Ահարոնեանը սուր հոտաուութեամբ անմիջապէս ըմբռնում է Ահարոնեանի օգտակարութիւնը և գործի է յծում նրան:

Ուսանելը, որի համար եկել էր Ահարոնեանը, դառնում է երկրորդական գործ, այժմ գլխաւոր գործը հայ գաղտի համար աշխատելն էր, որին և կաշուած է Ահարոնեանը իրեն յատուկ խառնածքով:

Բրիտանափորի աջակցութեամբ և թիւղարանքներով անդադար հանդիպումներ ունենալով Եւրոպական ակադեմիայի գործընկերի հետ, որոնք այն ժամանակ մի առանձին սիրով փարում էին հայկական դատին, Գրոշակի խմբապետութեան մէջ առեկա մօտիկից ճանաչելով հայ ականաւոր գործընկերներն և այն բոլոր աշխատանքներին, որոնք տարւում էին մեր գաղտի համար, այդ նոր միջոցառում, բորտովին կերպարանափոխում է զաւտոյց եկած այս գործչի մտապարտկերները. նրա մտքի հորիզոնները մեծանում, ընդարձակուած են, հայ ժողովրդին ծառայելու գործը, հայ գաղտը իրականացնելը, դառնում է իր կենսաբան նպատակը և նա ամբողջապէս ներկուած է դրան: Այժմ նա և գործիչ է և պրոպագանդիստ և յեղափոխական երգիչ: Հայ ժողովրդի անտանելի վիճակը տեսնելու, նա այլ եւս, ինչպէս ստա՞յ, չի յցում անգոր գալուց թո՞վ. ի՞նչ անենք, ինչպէ՞ս ապատենք այս գուրմից, այլ եւս չի գրադէտնում նրան, սրտիհետե նա գտել է դրանց պատասխանը: Նա ըմբռնում է, որ հայ ժողովրդը իր յոյսը պիտի դնի իր սեփական ուժի վրա և իր սեփական կարգաւարելու ուժի շնորհիւ է, որ պիտի ազատագրուի այդ բռնութիւնից: Եւ սահ 1893 թվականից սկսած «Դրօշակ»-ի մէջ յաջորդաբար լույս են տեսնում «Ղարիբի» պատմաւածքները, որոնք մի-մի ներբողներ էին մեր մարտական ուժի, մեր յեղափոխական կուռի, հայ ըմբռնացող ոգու: Մեր հեղինակներից և ոչ մէկը չկարողացաւ այդքան արժանաւայել և հետևողական կերպով ցուցադրել հայ ըմբռնութեան և ցատուի գզացումը, ինչպէս այդ յաջողեց Ահարոնեանին: «Ազատութեան ճանապարհին» — այսպէս էին կոչուած այդ շրջանի նրա երկերը, նա գրում էր նրանց մասին, «որոնք իր-գախ կենսաբով գաժան մահը հեղինակում և հպարտ մահով մեր սե կենսաբան փայլ տւին»:

Բանի քանիներն էին, որոնք անսահման ոգևորութեամբ կրանում էին նրա երկերը, սովորում էին արհամարհել կենսաբան իրիզարթոնքն մարանշել ապատութեան համար: Այդ թվականներին, գուցէ, ոչ մի յոյւած Դրօշակի մէջ սոյնպիսի ազանութեամբ չէր կրան-

ւում ժողովրդական խաւերի կողմից, ինչպէս Ղարիբի պատմածքները:

Յիշում եմ թէ ինչպի՞սի հետաքրքրութեամբ և ոգևորութեամբ 1898-1900 թականներին Բարդի Նաթանեանքերի աշխատաւորները ձեռքից ձեռք էր խլում Գրօշակի այն համարները, ուր կային Ղարիբի պատմածքները: Աշխատաւորներից շատերը ծայրէ ի ծայր պիտէին բերանացի այդ պատմածքներից շատերը և իրենց գաղտնի հաւաքողներում արտասանելով անասման ուղևորութիւն էին յատկ բերում աշխատաւորների շրջանում: Այդ պատմածքներից մի քանիսը նրանք լարմարեցրել էին բեմագրութեան և քանդակարան հանրակացարաններում իրենց ուժերի սահմաններում և իրենց հասկացած ձևով ներկայացում էին կադմակերպում: Երբ մտնէիր բանւորական անպաճոյճ սենեակներ կամ հանրակացարաններ, իրենց սիրելիներին նկարների կողքին կը տեսնէիր մեր մի շարք գործիչներ, մանաւանդ, Ահարոնեանի նկարը: Այդ ասանձին հետաքրքրութիւնը դէպի Ղալիբը, նկատելի էր ոչ միայն գրաւոր աշխատաւորների շրջանում, այլ մինչև իսկ անգրագէտները մօտ, որոնք մեծ ինամբով, շնայած կարապարական արգելիքներին և վտանգներին, իրենց պահարաններում կամ բարձերի տակ պահում էին Գրօշակի այն համարները, ուր Ղարիբը մի որևէ պատմածք ունէր: Բաւական է, որ մի գիր կարդացող ընկեր ընկնէր ձեռքերը. ահա բարձերի տակից, պահարանների միջևց դուրս կը հանէին Գրօշակի այդ համարները և եկտորը բռնապատած պիտի լինէր բոլորը կարգաւ ծայրէ ի ծայր: Նրա շուրջը տասնականներով բուրբաւ աշխատաւորների խմբակը հե ի հե հետևում էր ընթերցանութեան, շնայելով լսել էին մի 10-15 անգամ, բայց և այնպէս մեծ բաւականութեամբ լսում էին նախ, մի անգամ ևս... Կարգա՞ «Սայր», կանչում էին այն կողմից մի քանի ծայրեր. եկտորը Գրօշակի համարներից փնտրում է Ղալիբի «Սայր» պատմածքը և ամբողջ հանրակացարանը հե ի հե հետևում է ընթերցանութեան: Ընթերցողը հասել է այն տեղը, երբ օձը փաթկեալած արագիլի վզին՝ սկսում է սեղմել նրան... և ահա ուրախութեան բացմատեակ բացականչութիւններ. «Օ՛խ, լաւ արեց... տե՛ղն է... աղպէ՛ս էլ պէտք է... ինչի՞՞ էր արագիլը վերեկից յարձակում օձի վրա և այն... Նորից լուռութեամբ նստում են ընթերցանութեան. «Եւ յանկարծ դուրս բարձրացրի, ջրի գոտից վարկենապէս դուրս քաշեցի գառնը, և մինչև կոթը հասնելիս թափով նրա կուրքը միեկի» (Սայր): Մի ակնթարթում հանրակացարանը լցում է անկերթ, մինչև ինքնամոռացութեան հանող բացականչութիւնների մինչև որ վերջանում է պատմածքը: Նորից թախանձազին ծայրեր կարգա՞ «Էլ մի աղօթիք» կամ մի այլ պատմածք: Նորից սկսում է ընթերցանութիւնը՝ մէջ ընդ մէջ ընդհատում ուկտրում բացականչութիւններով, և այսպէս տևում են ժամեր: Չնայած կէս դիւրանքի սուղի վաղուց հնչել էր և մօտենում էր աստուտեան աշխատանքի ժամը, բայց աշխատաւորները չեն կարողանում բաժանուել և նոյն աշխոյժով լսում են ու լսում... Ահահամեմատ աւելի ոգևորութիւն էր տիրում, երբ

Ահարոնեանը դասախօսութեան և կամ այլ պարտական էրեւում էր նախաշարժում: Դա մի կատարելալ տանակատարութիւն էր: Չնայելով այն ժամանակաւ պետական արգելիքներին, ամենքը շտապում էին տեսնելու և լսելու Ահարոնեան ճանապարհորէ՞ հեղինակին: Համարձակ կարելի էր ասել, որ այդ շրջանում, մեր ընկերները և ոչ մէկը չեն սովորութիւնը ստուղ չէր բերում, ինչ որ Ահարոնեանը...

Ճիշտ չէ, երբ Ահարոնեանին համարում են հայ վշտի ու տառապանքի երգիչ. նա հայ լսողութեան և բողոքի երգիչն է նրա և այդ գիծը շնչաւոր կերպով երևան է գային և նրա զբաղմունքում և նրա ամբողջ քաղաքական գործունէութեան ընթացքում: Նա ցաւով և ցասումով տեսնում էր, որ ողջ աշխարհը՝ լինի նա վայրենի թէ քաղաքակիրթ, մի փոքրիկ պետութիւն, թէ մարդկութեանը անաբխութեան պատգամներ ներշնչող մի մեծ ազգ, բոլորը իրենց կեանքը տնօրինում են ուժի-բռունցքի միջոցով և վայ նրան ով թոյլ է և բռունցք չունի հարածելու, և դիմելով հայ ժողովրդին, իր հոյակապ ճարտար քերթաւորով, գրչու է գասումով. «Հազար (օտար) ձեռքեր կան հոգուդ հակայ թուրք տանձելու, հազար ճիրաններ քապատութիւնը, ջո վարդաբոյն երանները բղկտելու. քեզ հետ անբաժան, քեզ հետ շողկապած քայլում է շարիքը, հազար գլխանի հրէշը: Ոտքի էլ և գա՛րկ, գարկ թափով, ողջ աշխարհը գարկում է, վայ նրան, ում առաքիտութիւնը մարտական չէ, ում բռունցքը չի բարձրանում հարածելու անողորմ թշնամու. վեր կաց և գա՛րկ, գա՛րկ ուժգին, գա՛րկ, երբ հարածում են քեզ, գա՛րկ, երբ փակում են ջո փառաւոր թուրքը, գա՛րկ շարունակ, մինչև արդարութեան և ճշմարտութեան վսեմ դոճը կը յաղթանակի...»

Եւ աւելի քան քառասուն տարիներ շարունակ, Ահարոնեանը իր հոգու բոլոր լարելով կապած հայ ժողովրդի հետ, հայ քաղաքացու արժանաւայել կեցւածքով, հե ի հե ունենդերէլ է մեր ժողովրդի սրտի ամէն մի բարբախում, տեսել է նրա վիշտը, նրա տառապանքը և թափանցելով նրա հոգու ներսը, իր զօրեղ գրչով, իր անմահ խօսքով յոյս և ոգի է ներշնչել դժբախտ և տառապած հայութեան, սովորեցրել է նրան արհամարհել կեանքը և մարտական բռունցքով փշրել շարիքը:

Դժբախտաբար, այսօր հայ ժողովրդի քաղաքական մթնոլորտը այնպէս է մթազնած, որ բովանդակ հայութիւնը չէ կարող իր յարգանքի խօսքը ուղղել իր տաղանդաւոր դասակին և դաղութներում ցրւած հայութիւնն է, որ այսօր այդ պարտականութիւնը կամենում է կատարել:

Այժմ, երբ հայութեան այս բեկորներն են իրենց երախտիքի խօսքը ուղղում Ահարոնեանին, մենք դաշնակցականներս նոյնպէս մեր յարգանքի տուրքը պիտի տանք մեր վաստակաւոր ընկերներ, որի տաղանդը ծնուել և զարգացել է մեր մէջ և որը ահա աւելի քան քառասուն տարի անդադար իր գրչով և խօսքով հայ ժողովրդի արդար գատի անխոնջ պաշտպաններից է եղել:

Ռ. ՍԵՒՆԱՆ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԸ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴՐՕՇԻՆ ՏԱԿ

Ա. Ահարոնեան 1898-ին սնցնելով Եւրոպա, կը սկսի աշխատակցել «Դրօշակ»-ին, «Ղարբը» ստորագրութեամբ, և քանի մը տարի անընդհատ Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական օրդանին մէջ լոյս կրնծայել իր շարք մը պատմածքները, որոնք ներկած էին հայր-կական ազատարարական շարժման փոթորիկէլ դուռադներուն: Այս դրականութիւնը հրդեհէի մը պէս փուռ-յաւ: Հայոց «Ազատութեան Ճանապարհին» վրա, և բո-ցովստեց «Դրօշակ»-ի կէնը, իր ժամանակին: Բնա-կանաբար, այդ էջերու զնահատանքի իսկական տեղը պիտի ըլլար «Դրօշակ»-ը, որ ՅՅ երկար ու փոթորիկէլ տարիներէ յետոյ, տակաւին կը փոզիպի հայկական ազատամարտի բարձունքներէն, ու որովով կը դիտել իր հին ու բազմաշխատ մշակները:

Ուրեմն, տօնական յարգանքէ աւելի, զնահատանքի փոքրիկ փորձ մըն է այս, ընդգծելու այն թաղաքական-փիլիսոփայական լոբանումները, որ Ահարոնեանը բե-րաւ յեղափոխական դրականութեան մէջ, բանաստեղ-ծութեան և արեւստի խորքով ու տարագրով:

Ահարոնեանի այն գրածքները, որ կէնան յեղա-փոխական դրօշին տակ, կարելի է ըսել թէ անբաժան մասն են անոր հոգւո ընդհանուր թրթրացումին և կը կրեն անոր արեւստի կարտրեակ կնիքն իրենց վրա: Այսպիսով, բանաստեղծին ընկերային-քաղաքական լոբ-բանումներն ու գրական արեւստը հաւատարագոր ու համընթաց երեւան կուսան այդ էջերուն մէջ և իրար կարժէքաւորեն փոխադարձաբար, սուանց իրար նսե-մացնելու:

Մօտենանք Ահարոնեանին այս երկու կողմերով:

Նախ՝ անոր ընկերային-քաղաքական լոբանում-ները: Ահարոնեանի այդ կարճ պատմածքներուն մէջ, մեզի կը պատմական շարատանի 90 և 1900ական թեականներու միջովայլ լա իր բոլոր կողմերով: Իրենց կերպարանքով և ինքնայատուկ գոյնքով ու հոգեբա-նութեամբ մեզի կը ներկայանան տիրող բռնակալները, աւատական բէգերն ու փաշաները: ճնշած դասակար-գը տնտեսական աճուի լուծին տակ, ու շատ յաճախ ենթակայ արածութեան ու աւերածութեան: Տնտեսա-կան դժոխքին հետ՝ հոն կը գտնենք քաղաքական և կրօնական հարձանքները, մարդկային պատուի և իրա-ւունքի տարրական լոբանումներու բռնաբարումը, և աւհաստեղի հայկական զանգածի Ֆիդիքեական գոյու-թիւնը դաժնկեան սուրբն տակ:

Միւս կողմէ պատկերացած են ճնշած հայ ազգը, որպէս հաւաքակառուցիւն մը և տրորած աշխատաւոր-ական զանգածները, որպէս ամենէն դժոխակ լուծը կրող զրկած դասակարգը: Ու տիրողի և տիրածի այս

բազմակողմանի հակամարտութիւնը, միշտ արիւնով ներկած, հայ յեղափոխական գրականութեան բեմին վրա բերած է շարան-շարան մարդիկ ու զէպղեր, ա՛յն-քան խորունկ ապրումներով, ա՛յնքան մարդկային ոչ-րկարութեամբ և այնքան բնորոշ անհաստեղան և հան-րային գոյնքով: Հոն են փաշան ու բէգը, կրօնապետն ու առապկը, բանաստեղտն ու մատնիչը, անտարբեր դիւղապետն ու լոբոտս մշակը, իր արտէն ձեռք քաշող «Յօգնենէ»ը և արիւնտ քթխմորի առջև շարած կի-նը, կախազան բարձրացող յեղափոխականը և սուրբ գործին դաւաճանող «ընկեր»ը, կուի զնացող Ֆէտային և անձնասպան նշանածը, դարբինն ու աշուղը: Հոյ, այդ կարճ էջերուն վրա փուռ և կր տեսնենք հայկական կեանքի խաւար՝ սարկութեան ու կոտորածի նշգծու-ցիչ միջնորդով: Ու նաև հոտ է, որ յեղափոխական զնդակը կը սուրայ մեռելային լուսեան վերջ տայու համար, ու պահ մը՝ կաճակի լոյսով՝ կը ճնդէ թանձր խաւարը:

Ու այս բոլորը Ա. Ահարոնեան առած է, տեսած ու շօշափած իրականութիւնէն, ապրած ու զգացած իրական անցքերէն, այնքան բազմաթիւ ու այնքան բազմապան: Արդ, բանաստեղծ Ահարոնեան հրապարակ գաւրով «Դրօշակ»-ի մէջ, զեւ 1898ին և 1900ին մեր հանրային կեանքը փոթորիկը ընկերային խնդիրները արեւստի ճանապարհով զնուլթեան առած և որոշակի պատաս-խաններ տւած է, որոնք իր ժամանակին, հայկական ազատագրութեան նշանաբաններ դարձան և զեւ մինչև այսօր նշանաբաններ կը մնան մեր ազատութեան ճա-նապարհին համար:

Ահարոնեանի լոբանումները յստակ են և պարզ, ու իր յեղափոխական դատաստանները նոյնքան կտրուկ ու առնական, միշտվայրն ու ժամանակի պայմաններն անբողոյժին ընդգրկող: Կարծես Ահարոնեան իր բա-նաստեղծութիւններուն և պատմածքներուն մէջ հայր-կական ազատագրութեան ամբողջական լոբանումն ու գործելակերպը խոստցուցած է, կարծես վերջնական բացատրութիւն տւած է, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին յայտարարութեան, որ հարտարակեցաւ 1890ի աշուն, Հայ Յեղափոխակախմբի Դաշնակցութեան հիմնադրու-թիւնէն անմիջապէս յետոյ, ընդգծելով հայ ժողովրդի տնտեսական և բաղաճախմ ազատութեան պահանջը:

Իմենք քանի մը հատուածներու, աւելի որոշ դա-ղափար մը կարգելու համար բանաստեղծին քաղաքա-կան մտքի ձևակերպման վրա:

Բանաստեղծը Դարբնի Երգին մէջ կը պատկերացնէ հայութեան և ճնշած աշխատաւորութեան վիճակը, ու անասման շարիքին զէմ դարբինին լոբոտութիւնը

կերպէ՛ այնքան զեղեցիկ բանաստեղծական շունչով մը .

Քանի քանի դար լուս աշխատեցիմք,
Վաստակը թիրփիմ՝ ցարը մեզ բաժին,
Դատ ու դատաստան երկմիջին թողիմք,
Երկիմքի խուլ մնաց մեր հառաչանքիմ:

Արտաւ խփի չկայ, դաշտերն խապան.
Հաւր են կտրել մանկայ, հոտաղներ,
Եզներ ու արօր թշմաւիճ տարան,
Մեր շէն երկիրը մեզ աւեր թողիմ:

Այս կացութեան հետեանքով ճնշած և սարկացած հողի աշխատատեղը գլուխ կը բարձրացնէ: Ու բանաստեղծին զարթնը ոչ միայն իր սղանները դնանին շուրջ կը հաւաքէ խփի և մանկադի փոխարէն սուրբ կուլ-կոփելու, այլ և իր դրացիներն ալ բմբոստութեան կը հրահրէ .

Ե՛ր, ի՞նչ էք կանգնել վզերդ ծառ,
Հողը ձեզ տանի, կա՛յր հարկանմեր . . .
Ել այդարուքիւն, պատիւ չմնաց, —
Խփերդ բերե՛ք, կոնքն սուսերմեր . . .
Մեղքը մերը չէ՛, անէծք դուշմանիմ,
Նա՛ պարզեց դրօշ արիւմտ մարտիմ . . .

Ու ապա, աստիճանական կերպով զարգացնելով իր միտքը, կը յանգի վերջնական եզրակացութեան . —

Խաղաղ վատտակի այդ գործիքներով
Ել չեմք կոխ մեմք խփ ու մանգաղներ .
Խփերդն ի գուր են, ուր արիւմն է ծով .
Մով արեան հանդէպ թաղ գործեն արեր:
Մեղքը մերը չէ՛, անէծք դուշմանիմ,
Նա՛ պարզեց դրօշ անդռք մարտիմ:

Բանաստեղծը սրտի անհուն մարմնով է, որ իր երկար ու անմասն բանաստեղծութիւնը կը վերջացնէ դաժան եզրակացութեամբ: Ան կը խօսի հայ աշխատող մարդու, զարուար խաղաղ աշխատանքի լծած մշակի հողիչն . լուս գիտէ, որ աղք մշակն իր ամբողջ հողիով կապած է լուծին ու եղան, խփին ու մանգաղին, սակայն, կը տեսնէ, որ այդ բոլոր տարան, ու սուրը կը ճօճէ մշակի գլխուն վերև: Այդ ահաւոր կացութեան առջև բանաստեղծը մէկ ճանապարհ միայն կը տեսնէ, այն է որ՝ ճնշած բազմութիւնները ոտքի կենան ու ձեռք մեկնեն սուրին, անապղ հարածին՝ փոխադարձէն յեղափոխական սրբազան աւելնով:

Շատ նշանակալից բացատրութիւն մըն է վերջին երկու տողը, որ յաճախ կը կրկնուի Դարբնի Երզնէ մէջ . —

Մեղքը մերը չէ՛, անէծք դուշմանիմ,
Նա՛ պարզեց դրօշ անդռք մարտիմ:

Այս տողերը ճշմարիտ ու անուարկելի բացատրութիւնը պիտի մնան մեր արդար յեղափոխութեան: Ո՛րքան կուզեն թող կարճամիտները արդարացնեն հայ ժողովրդի դահիճները, ո՛րքան կուզեն թող Հ. Յ. Դաշնակցութեան վզին պատասխանութիւններ վաթթիւն, սպազայ պատմաբանը ծանր մտածումներու պիտի տարւի Ա. Ահարոնեանի վերի երկու տողերուն առջև: Հ. Յ. Դաշնակցութիւնը ճնշած սղգին և կե-

ղեքած զանգաճներու պաշտպանութեան մարմնացումն է կգած, արիւնէ հեռու, միշտ արիւնէն զարչած, և, սակայն, անողջ թշնամին հարկադրած է, որ հայկական ազատագրութիւնը քայէ կարմիր ճանապարհով: Տակաւին պիտի քալէ այդ անխուսափելի ճանապարհէն, ու մեր յետնորդները պիտի գան ու իրացտորէն բեն . —

Մեղքը մերը չէ՛, անէծք դուշմանիմ,
Նա՛ պարզեց դրօշ անդռք մարտիմ:

Այստեղեան և բունութեան արիւնտ պայքարը արձանագրեց 1895ի կոտորածները, իրենց հետեանքներով, ահուկի, իրենց տեսակին մէջ առաջինը օսմանան տիրապետութեան ամբողջ ընթացքին, կոտորած մը, որ պիտի ունենար իր երկրորդը 1915-ին, անէն երեակայութիւն գլխի անցնելով: Բանաստեղծը իր մէկ փոքրիկ, բայց դողտրիկ բանաստեղծութիւն-պատմածքով կը նկարէր 95-ի կոտորածներու մէկ պատկերը, ու այդ բանաստեղծութեան մէջ նոյն օրերու ծանրակշիւ երեւոյթներու մասին կը ձեռնկերպէր իր զարգական, ընկերային և ազատագրական համարումները: Դատողութիւններէ առաջ խօսք տանք Ահարոնեանի «Աշուղ»-ին . —

Տառապանքի, սուգ ու սևի ինձ բնկեր
Մարդ չմնաց իմ արիւնտ վաթմանու,
Լուս են շուրջս լուներ, ձորեր, շիրիմներ,
Լոկ քամիք է կողկաղազիմ մրմնջում,
Դա՛ւք պատմեցէ՛ք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստած գուցէ դողայ երկնքում:
Ու խօսքը ուղղելով քամուն, կը շարունակէ . —
Ի՞նչ ես վազում անպատակ դէպ հեռուն,
Հառաչանքներ, խոր խոր ցաւեր շալակած .
Վեր պացիր դէպի երկնքիմ անհուն,
Գոտիք ցաւը, ուր բազմած է մի Աստած,
Թէ անգոր է սրբիլ այցունմքն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ և ոչ Աստած երկնքում:

Ու անելի յետոյ, բանաստեղծը կուտայ հարցի պատասխանը, որոչ ու մեկին . —

Անցիր հանդարտ շիրիմներք վրայից,
Հողի տակ էլ թշուառները քուն չունեն,
Շարան շարան հաղաթմբի խորքերից,
Խուլ մրմնջոցներ քաղէ լսես ցաւազիմ .
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,
Գահ էլ պէտք չէ և ոչ Աստած երկնքում:

Ինչպէ՛ս կը տեսնէք, Ահարոնեան իր սլաքները կուղղէ ստրկութեան մէջ թմբած հասարակութեան ճակատագրապաշտութեան: Ան չի բաւականապէս իր դարբնին միջոցաւ կոչ ընելով բոլոր ճնշածներուն, որ գէ՛նքի դիմեն իրենց մարդկային և ազգային իրաւունքներու պաշտպանութեան համար, այլ, համարեան կոտորածներին ցնցած, ամբողջ ժողովուրդը կը սարսէ իր հնարանգութեան հաւատքին մէջ, ու կը մղէ բազմութիւնները, որպէսզի հրաժարին քրիստոնէական խոնարհամտութիւնէն և զարթար յոյսէն՝ կապած աստուածապաշտութեան հետ:

95-ի բարբարոս կոտորածները պատկեր մը պար-

զեցին այլապէս խորհրդածութեան արժանի: Այն վայրերը, որ յանդգնութիւնն ունեցան զհինգի դիմելու ինքնապաշտպանութեան համար, շատ փոքրիկ փաստերու ենթարկեցան, ինչ ալ կեդրոնները, որ իրենց հնազանդութեան և խոհմութեան ապահովեցան, որ մտածելիքն թէ զվերն Աստուած կայ», «Աստուած ողորմած է», «անխնայ բնակչոջն ենթարկեցան: Ու բանաստեղծը այդ ընդհանուր արեան ու խաւարին մէջ, սխալիցողը որոտումով մը զանպատեհութիւն նետեց իր վճռական խօսքը:—

Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,
Գառ էլ պէտք չէ և ոչ Աստուած երկնքում:

Ստրկութեան ու նախապաշարուածի դէմ իր դարձրովը պարտիկ յետոյ, Ահարոնեան կր դուռնայ կոտորողներուն և կոտորողներուն, ճնշողներուն ու ճնշածներուն, և կեանքի ու մահուան պայքարին կուտայ իր վճռական ու շնչուած պատասխանը: Լսենք ստակաւն «Աւուրջին երգը:—

Խօսիք քնար, արար-աշխարհի թէ լոխ,
Յաւի, արեան, տառապանքի լուռ ծոցում՝
Խաչը առաջը հառաչանքի պարտք ունի
Թշուառութեամբ ու ամէ՛ծիք վայրերում:

Այսքան չարիք թէ մոռանամ մեր որդիք,
Թող ռոգ աշխարհի հային կարոյայ նախատինք:
Շէն հայրենիք արիւնի ծով դարձուցիք,
Մաղկափթիք լեռներ, ձորեր, հալիսներ,
Միք արիւնով ամէն մէկէն ցօղցիք:
Այսքան արիւն թէ ներքն ձեզ մեր որդիք,
Թող ռոգ աշխարհի հային կարոյայ նախատինք:

«Այսքան չարիք»ը կրկնապատկեցաւ: Մեր շէն հայրենիքը արիւնի ծով պարճուցին» ու մեկի մտցնելու արեւ Յն-ի զէպղբը: Ու Ահարոնեանի խօսքը հայ ժողովրդի բոլոր գաւազաններու հոգու մէջ նշնց անայլալ ու ինքնարուխ:

Այսքան արիւն թէ ներքն ձեզ մեր որդիք,
Թող ռոգ աշխարհի հային կարոյայ նախատինք:

Հիմա, այս նշանաբանը, Ապրիլեան տղետէն յետոյ, հրարուիք մը պէս կը ժայթքէ հայութեան սըրտէն, նշանաբան մը, որ Ահարոնեանին ըլլալէ աւելի, այժմ ճնշած ազգի մը սեփականութիւնն է:

Այսպէս, Ա. Ահարոնեան քաղաքական-յեղափոխական դաւանանքներ ու նշանաբաններ բանաձեւած է իր բանաստեղծութիւններուն և պատմաձեւներուն մէջ: Ու եթէ, երբ և իցէ ճնշած մարդկութեան ու ճնշած արզներու դատի պաշտպանները, որ մը մարդկութեան երախտապարտ համակրանքին պիտի արժանանան, Ա. Ահարոնեանն այ, որպէս ապատութեան ու ըմբոստութեան երգիչ, իր պատուաւոր տեղն ունի ապատութեան ուսնակիրաներու շարքին մէջ:

* * *

Ընկերային և յեղափոխական մտածումներն ուշադրու են մասնաւոր անոր համար, որ Ահարոնեանի

զբիւն տակ անոնք ստացած են զեղարևատախան կազմապարտ: Եւ եթէ Ա. Ահարոնեանի ժողովրդական հմայքն այնքան տարածւած է ու չըբապատուած կը մնայ ջերմ հասակարանքով մը, այդ կը պարտի իր զեղարևատակուն ստեղծագործութեան:

Եթէ մենք միայն սահմանափակինք այն պատմաձեւերով, զորս լոյս բնծայած է «Ազատութեան ձառնապարհին» ընդհանուր անուն տակ, պիտի տեսնենք նոյն զեղարևատակուն տաղանդի ճառագայթումը, ինչ որ կարող ենք դտնել իր միւս գրական գործերուն մէջ: Այդ ամբողջը պարզ յեղափոխական-քարոզչական դրականութիւն մը չեն, ինչպէս ընդունւած է շատ յաճախ, այլ գրական սահմանը մտնախիտ առուժով, արևատի դրոշմը, իրենց կատարելութիւնը, հոգեբանական ճշգրիտ գրականութիւն, հարուստ ու դճնազգի պատկերներով և տեսլակներով ամենախոր յուզումներով: Կարճ պատմաձեւքի և նորավէպի խիստ ընտիր նմոյշներ կան գեանդուած «Դրօշակ»-ի էջերուն մէջ, որոնք ապագայ սերունդներուն պիտի անցնին, ու պիտի դիմանան ժամանակին: Դրականներէն աւելի, արևատի այս գրարիչ ջերմութիւնն էր, որ այնքան լայն բնդունելութիւն ընծայեց այս պատմաձեւքներուն:

Անուրանալի է նաև այն, որ այդ գրականութեան թողած խոր տպաւորութիւնը, գրական ճաշակը զարգացնելէ դատ, որպէս անմիջական արդիւնք, կունենար իր բարոյական-քաղաքական ազդեցութիւնը: Այս սահմաններու մէջ, այո՛, քարոզչական դեր մը վերապահւած է Ահարոնեանի գրականութեան: Այդ ինքնին առաւելութիւն մըն է: Ու, այս, յատկանիւն է ձգտումնաւոր գրականութեան, ուր փայլած են միջազգային գրականութեան ամենէն կառկասուն զէճերը: Անոնց մշակած նիւթերը կարող են տարբեր ըլլալ, բայց անոնք կեանքի բազմադրոշմին հակամարտութեան պատկերը դժած են, միշտ հակելով բարոյական ըմբռնմաներու կողմը: Զգտումէ զուրկ գրականութիւն առհասարակ գոյութիւն չունի, իսկ եթէ կան այդպէս կոչուածներ, գրականութեան պատմութեան մէջ շատ աննշան տեղ կը գրաւեն: (Անշուշտ, ձգտում ըսելով, մենք կը հասկնանք քաղաքական, ազգային, անհատական և հանրային լայն իմաստով):

Զգտումի մասին առանձնապէս շնչացնելու երբեմն այդ յատկութիւնը գրականութեան ըսելով, հասկցած են ազգային ազատագրութեան պարզ հրավառում մը, ժամանակի պահանջին գոհացում տալու առաջադրութեամբ: Մինչևեռ խցճմիտ ուսումնասիրութիւն մը ցոյց պիտի տար թէ այդ պատմաձեւքերը հարազատ պատմագրութեան են մեր փոթորկալոյց իրականութեան: Այդ ստեղծագործութիւնները շեն կերտուած երևակայութեամբ, որպէսզի ժողովուրդն անոնց ազդեցութեան տակ քայլեր առնէր՝ պատմաձեւքներ իրականութիւն դարձնելու համար, այլ, աւելի մեծ շարիով ապրած կեանքի մը փրկանքներ են, որ եկած են հայ գրականութեան մէջ պատկերացում ստանալու: Միծալելի պիտի ըլլար կարծել թէ երբ գրագէտ մը իր ստեղծագործութեան նիւթ կը դարձնէ Կովկասի հարուստի, աղքատի և մտաւորականութեան յարաբե-

բութիւնները, ան ձօտեցած կըլլայ մեր իրական կեանքին, իսկ մէկ ուրիշը, երբ ներք կ'աչ գրեզագին, բանտարկեալը, բանտապետը, փաշան, հայրուկը, մատնիչը, դիւզապետն ու տանտիկինը, ու մեզի կուտայ «նայր», «Արտը», «Բանտապետը», «Բաշօն», «Արիւնտա թթխմորը», են, են, մեր իրականութենէն հեռու, զի մը քարոզ կարգացած կըլլայ մեր գլխուն: Մեր ներքին կեանքի սարումներու և իրադարձութիւններու խորունկ ճանաչութիւն մը գրական վերագնահատութեան պիտի մղէր հայ գրական մտաւորականութիւնը, որու մեծ մասը անձանթ կը մնայ Ա. Ահարոնեանի «Ազատութեան ճանապարհին» աշխարհին:

Ահարոնեանի լեզու և ոճի ճոխութիւնն ու սահունութիւնը իրենց ամբողջ հմայքով կը տարածին այդ պատմածքներուն մէջ, հաւասարապէս մատչելի թէ ուսուհայ և թէ թրքահայ հատուածներուն: Անուրանալի է, որ Ա. Ահարոնեան վերջին երեսուն տարիներուն գրական ուղիք մը հիմնած է և ամենէն ուշագրան այն է, որ ան իր գրական լեզուով երկու հատուածներու համար միացեալ լեզու մը հիմերը գրած է: Այդ հայկական լեզուի շնորհիւ է, որ բանաստեղծին մտքերը, արտայայտած բարդ գգացումներն ու գեղեցիկ պատկերները աճքան հարագատ թւեցան լայն գանգամանակներուն, ու անոր արեւտը դարձաւ ընդունելի բազմաթիւ հոգիներու համար:

Բազմաթիւ են վարպետին նկարագրական գոյտրիկ կտորները, ուր մէկ վրձինով ամբողջ միջավայր մը տւած է իր զոյներով և խորհուրդներով: Շատ են ազդեցիկ պատկերները, որոնք կարճ ստղերու մէջ աւելին կրնան, քան ընդարձակ բացատրութիւնները: Քանի մը օրինակներ միայն տանք այստեղ. անոնց նման անհամար հատուածներու կրնանք հանդիպել իր բոլոր պատմածքներուն մէջ:

— «Կոխն անգորով էր. հագարաւոր մարտիրոսների ազդակող վրէժն էր խօսում հայրուկների հրացանների փողներից, որոնց որոտը ինչ որ կնկնանի, խօսում բան ուներ իր խրախտ արձագանքների մէջ, գայրոյթի մի շնչու, բողբոջի մի հնչիւն: Խաւարն ակօտը բողբոջ ձգում էին առաջ, դէպի թշնամին ինչպէս գայրացած օձեր, վայրկեմաբար լուսաւորում էին մի յանուզն ու մալայ դէմք, ապա մարում մի թշնամու կեանքի հետ»: («Կուի Գաշտում»):

Դատան է ազատագրութեան կուրը, ու ընծայած պատկերները կարճ ու մկրատւած:

— «Նա էլ ընկաւ, մեմալի, հեռաւոր սարայանջի վրա և միայն երկիմէր տեսաւ, թէ ինչպէս ընկաւ այդ անվիհեր սղամարդը, որ կուի բոլոր ժամանակ վազում էր առաջ և կարծես բոլոր ընկերներից անձամբ, ամենքին անշայտ մի բան էր փնտում և հեց թշնամիների շարքերում»:

Շատ բան կրնան բանաստեղծին հոգեբանական վերլուծումները, կարճ հարմով մը, որ, սակայն, հոգեկան խորունկ աշխարհ մը կը ցուցահանէ:

Վիրաւորւած հայրուկն է, որ իր վերջին խօսքը կրտէ:

— «Ի՞նչու վեր կեցաւ, մտածեց նա, մէկ շէ՞ աշատեղ, այսօր, կամ մի ուրիշ օր, մի այլ դաշտում»:

Անոնք, որ այդպէս ինկան, հոգեկան մեծ արտումներ ունէին, և այդ արտումներէն հետո չէր կրնար մնալ Հայոց ազգային գրագէտը: Ու ան իր հոգիի թափանցող ուժով թափառահայեց պտտեցաւ մեր հայրենի աշխարհի բոլոր անկիւնները, մտաւ բանտերը նոյնիսկ ու պատկերացուց այն հոգիները, որոնք շղթաթափապ մնացին գնտաններուն մէջ:

— «Հայրուկի կուրծքը հրաքույս էր. գուլթը՝ մտքերի ծով, բամաղ՝ նեղ, շրթաները՝ ծանր, միայն նրանց շնիղն էր — ահագին բոնութեան յաղթանակի զարիւրիլի երգը, որ սշխարհի սկզբից հնչում է քարաշէն մուք կամարների տակ, ուր ազատութիւնը զպարտւում է ու մոնչում տիեզերական անմահ ոգուն յամձնելով պատմել իր փրկարար խոնքն աշխարհիւն»:

Երբ շղթաթափապ բանտարկեալը (Արամ Արամեանց Կ. Ս.) դէպի դատարան կը տանին, որ յետոյ կախաղան բարձրացնեն, հետեւեալ պատկերը կը ներկայանայ մեր աչքերուն.

— «Զըրը՛նգ, զըրը՛նգ... Օրը ցեղեկով էլ այս շվիղը ստակալի է, դոնքը կան, որոնք գգուշութեամբ փակում են, յուսամուտներ, որոնք շտապով ծածկում են մի ամբողջ երկրի բողբոջն է, որ հառաչելով անցնում է փողոցներով և մարդիկ ծածկում են սարսափով»:

Մարդկային անիրաւութեան դէմ ծառայած անհուն զայրոյթը կը փոթորկուի Ահարոնեանի մէջ, ու ան կատարեալ ըմբոստութեամբ մը կը ձգտի ազատութեան, որուն կարօտն ա՛յնքան խորունկ և ա՛յնքան մարդկային, հրաժարուած կը գտնենք բանաստեղծին ամէն մէկ հատուածին մէջ:

Սահմանափակելից այսքանով, ու յիշատակենք, որ Խ. Արսլեանէն ու Բաֆթիէն յետոյ, Ա. Ահարոնեան իր յաղթ հասակով բարձրացաւ Հայոց ազգային գրականութեան բեմին վրա, այս վերջին քառասուն տարիներու ընթացքին, ժամանակակից գէներով գինեւած, արեւստի նորութիւններն իւրացուցած, ուղիղ գծով շարունակեց սոսմիկ գրականութիւնը և դարձաւ անրական դէմքը իր մշակած ճիւղին:

Ու սակաւին, այսօր, հայրական գրականութեան հորիզոնին վրա երևան եկած չէ այն նոր դէմքը, որ կուչած պիտի ըլլայ բունբուն մեծ վարպետին տեղը, ազգային յուզումնալից կեանքը պատկերացնելու մեծ տաղանդով:

Կ. ՄԱՍՈՒՆԻ

Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԷՆ

ՍԵՒ-ՔԱՐԵՑԻ ՍԱՔՕԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

III

Անցաւ ստեղծել 1896 թիւը, հասաւ 1897-ը: Ես պարագում էի մաքսանկեղծութիւնը:

Փետրուար ամիսն էր: Քաղաքից Մայմատով պտուղ է դնայի Երևան: Մայմատից արհեստաւորները պահանջել էին մի արհեստաւոր և հում նիւթեր: Արհեստաւորը և միւս իրերը պատրաստ էին. սպասում էինը յարմար ժամանակի: Պարտկառանում սաստիկ դժուարացել էր իրերի անզարգիւթիւնը մի քաղաքից միւս քաղաքը: Այլ ժամանակ մեծ դեր էին խաղում կանաչը և Կեդրոպացիները իրերի փոխադրութեան համար:

Օրէջօր սպասում էինը եւրոպացիների դուրս գալուն: Մի առաւօտ շարաւորը յայտնեց, թէ՛ «Արդէն յարմար առիթ է, օրիորդները գնում են Մայմատ»: Ես յն գիշերը բարձեցինը ձիերը և դուրս եկանք քաղաքից, անցանք Աջի շաքը, ուր և հանդիպեցինք օրիորդներին: Երբ ես բարեկեցի օրիորդներին, նրանցից մէկը շատ յարգանքով վերաբերեց դէպի մեզ և խնդրեց ինձ, որ պէսպիսի միտքին լինենք ճանապարհորդութեան ժամանակ: Ես էլ հէնց այդ էլ ցանկանում. ուրախութեամբ ընդունեցի օրիորդի առաջարկութիւնը, և շարունակեցինք մեր ճանապարհը: Երկու յետև հասանք Սոֆիան դիւղը և իջևանեցինք. վարձեցինք երկու սենեակ՝ մէկը մեզ համար, միւսը՝ օրիորդներին: Գիշերը ես սկսեցի սազ անել և երգել:

Առաւօտեան վաղ լուսարացին բարձեցինը ձիերը և ճանապարհ ընկանք դէպի Դիզախալի գիւղը. այդ ճանապարհորդութեան ժամանակ օրիորդները շատ մտերմացան մեզ: Երկու յետև հասանք իջևան. օրիորդները խնդրեցին, որ միտքին գիշերենք. ես ուրախութեամբ ընդունեցի նրանց առաջարկը: Գիշերը երկար խօսակցութիւն ունեցանք օրիորդներին հետ, նոքա նազակացան, թէ՛ մենք փնջ մարդիկ ենք և ինչ ենք սաննում:

Առաւօտեան սաստիկ բուք էր: Երկար տատանումից յետոյ վճնեցինք դուրս գալ: Պիտի անցնէինք մաքսատան պահապանների մօտով, որոնք պէտք է խուզարկէին մեր բեռները: Օրիորդներըց մէկը՝ օրիորդ Աննան*՝ վերջրեց մեր իրերը, տեղաւորեց իրենց իրերի տեղը. սպա բարձեցինը ձիերը և ճանապարհ ընկանք: Երբ հասանք մաքսատուն, պահապանները մօտեցան մեզ, ստիպեցին իջնել մեր իրերը: Օրիորդ Աննան բարձրացաւ նրանց վրա և դատնալով ինձ՝ հրամայեց. «Մի՛ ըլիր դրանց, առջ անցիր»: Ես յայտնե-

ցի պահապաններին, որ սրանք եւրոպացիներ են և կոնսուլի հպատակները: Պահապանները՝ կոնսուլի սենունը լսելով՝ մի քանի անգամ գլուխ իջեցրին, ներողութիւն խնդրեցին մեզանցից և «սալամթ փուլի» ուղեցին: Ես տե՛ր մի դռան, և անցանք՝ շարունակելով մեր ճանապարհը: Օրիորդ Աննան սասց.

— «Կարգալով եւրոպական թերթերը՝ ես տեսնում եմ, որ իմ եղբայրները արիւն են թափում ազգի ազատութեան համար. ուստի ես էլ ցանկանում եմ մտնել այդ խմբի մէջ և հրացան կրելով՝ արիւն թափել կրօն դաշտում, կամ ինչպէս կամենան, օգնեմ որե՛ն դործով»:

Ես պատասխանեցի, որ այդ հարցի լուծումը ինձանից չէ կախած, կը յայտնեմ ընկերներես և յետոյ որոշ պատասխան կը տամ:

Շարունակելով ճանապարհը՝ երկու յետև հասանք Թասուն, ուր և գիշերեցինք: Միւս առաւօտ վաղ ճանապարհուցինք դէպի Մայմատ: Երբ հասանք Մայմատ և պէտք է բաժանէինք, օր. Աննան նորից, արտասուքը աչքերին, խնդրեց. «Չմոռանա, փնջ որ խնդրել եմ քեզ. ես ուզում եմ իմ անձը գործել այդ սուրբ գործի համար»: Ես ասացի. «Շուտով կը պատասխանեմ ձեր խնդրին, օրիորդ Աննա»: Ապա հրատեղի ողջոյն տւինք, սեղմեցինք իրար ձեռքը և բաժանեցինք. նրանք գնացին դէպի Սոսրուվա, մենք՝ Ղարաթար:

Երկու օրից յետոյ նորից նստեցի ձիս և ճանապարհ ընկայ դէպի Մակու (Արտապ գաւառը): Օրը սաստիկ բուք էր, և ճանապարհը՝ ծածկւած ձիւնով: Գնում էի՝ նայելով հեռագրի փայտերին, բայց Սոսրուվա գետակը հասնելով՝ տեսայ մի խուճը ձիււրները: Նկատելով ինձ՝ նրանք պատրաստեցին իրենց հրացանները և արագ-արագ գալիս էին իմ վրա: Տեսնելով դրանց ընթացքը՝ ես մտածում էի. «Տէր Ասուած, է՛նչ մարդիկ պէտք է լինեն նրանք՝ աւազակներ, թէ՛ ճանապարհորդներ»:

Ձիւնը շատ խորն էր. ճանապարհից դուրս գալ չէր կարելի. ուստի մնացի տեղս կանգնած: Հանեցի արաղի շէն ու բաժակը, անցի երկու բաժակ օղի ու խմեցի և հրացանս ձեռքիս պատշաճա՛ր կանգնեցի: Երբ ձիււրները մօտեցան, բոռացի՝ «Ի՛նչ մարդիկ էք»: Նրանք պատասխանեցին «Չափարներ»: Ես հանդուրադարու մի քան քնեցի նրանց կողմը. տեսայ, որ իմ ծանօթներն են: Մի-մի բաժակ օղի խմացրի և սասցի. «Ինձ շատ վախեցրէք»: Ապա շարունակեցի ճանապարհս և

*) Օր. Աննա — Օր. Մարգարիտ:

Երեկոյան հասայ Պոյ, որտեղ հանդիպեցի Գումանին, որ նոր էր գալիս Բուսաստանից: Մի շարք մնացի Պոյ, սպա ճանապարհ ընկալ և Տղմուտ գետի վրայով անցայ Մալու:

Երեկոյան հասնելով Մակու՝ ծանօթացայ մի քանի Երեսասարգներին հետ, յայտնեցի նրանց իմ նպատակը. այստեղ պէտք է գէշել փոխադրութեան համար մի պահեստի տեղ պատրաստել: Նրանք ինձ խորհուրդ տւին այսպէս. «Ելիդ պահեստի համար կարող է ծառայել միայն Թաղէտ Առաքելայի վանքը»: Եւ ևս համոզեցի, որ իսկապէս այնտեղ յարմար է: Մի քանի օրից յետոյ այլ Երեսասարգներին վրա մի որոշ պարտականութիւն դրի և ճանապարհ ընկալ գէպի Շահաթի:

Երբ հասանք Երասխի ափը, հրացանս յանձնեցի Մեսրոպին ու Յովհաննէսին և ասացի, որ մի քանի օր սպասեն իմ նամակին, ու մնա բարեաւ ասելով՝ անցայ Երասխը և ճանապարհս ուղղեցի գէպի Երևան:

Երբ հասայ Երևան, պատմեցի մեր ընկերներին, թէ Լիկ և՛ Պենթի իրերը սեղափոխուել: Երևանցիք պատասխանեցին, թէ՛ «ձեռնքի իր ձեռքերով կր դիւրի և կանցնի»: Երկու օրից յետոյ կրկին վերադարձայ Մալու և պատմեցի երեսասարգներին, թէ ստանձնած գործը յետաձգել մինչև առաջիկայ մայիս ամիսը, ուստի փոխադրութիւնը ընկնում է մեր վրա: Նրանք ուրախութեամբ յանձն առին և իրենց խմբի կողմից մի մեծ կարի մեքենայ նւիրեցին: Միւս օրը մնաւ բարեաւ ասացի ու հեռացայ՝ ուղղելով ճանապարհս գէպի Մայմատ, ուր, մի քանի օր յետոյ, մի նամակ ստացանք Նախիջևանից, որով գրում էին. «Վերջը փոխադրել ենք Մտեփանոս Նախապետի վանքը»: Եւ և Բէզը* ձիաներ վարձեցինք և ճանապարհ ընկանք գէպի վանքը: Երբ հասանք վանքի սարը, կապեցինք ձիերը և ձիապաններից մէկին ուղարկեցինք վանք՝ իրերը բերելու:

Երեկոյան, Երբ խաւարը պատել էր Երկիրը, վանքի վանահայրը, մի քանի գիւղացիներին հետ իրերը վերցրած, եկաւ մեզ մօտ: Մենք կապեցինք իրերը և սկսեցինք խօսել... Յետոյ նստեցինք ընթրելու, որից յետոյ հայր-սուրբը պահպանիչ ասաց մեր վրա և զնայ գնացք, իսկ մենք բարձեցինք ձիերը և ճանապարհ ընկանք գէպի Մէլլովար գիւղը, ուր հասանք առաւօտեան ժամը Ծ-ին:

Այդ օրը հանգստացանք, իսկ երեկոյան կրկին ձիերը բարձեցինք և ուղևորեցանք գէպի Մայմատ: Կէս գիշեր էր, երբ հասանք Պոյայ գետուղը, որտեղ մաքսատան պահպանները հարցրին մեզ, թէ՛ «մե՞նչ մարդիկ էք, սպասեցէ՞ տեսնե՞ք», իսկ մենք ասացինք, թէ՛ կառավարութեան ձիււորներ ենք, գէ՞նք ենք տառու՛մ օրդուի (բանակի) համար, սպասելու ժամանակ շուկնեք: Եւ միևնոյն ժամանակ ձիերը քշեցինք առաջ անցանք: Առաւօտեան ժամը Ծ-ին հասանք Մալմատի Փայթուկ գիւղը:

Մայիս ամիսն էր: Ժողովւել էին մօտաւորապէս 300 հայրուկներ, որոնց բաժանեցինք հարաքանակ գիւղերի վրա՝ իւրաքանչիւր տան տարով մէկ հայրուկ:

* Բէզ — Նիկ. Ասրիսեկան, շուշեցի:

Գիւղացիք ընդունում էին մեծ ուրախութեամբ և պահում իրենց ծախսով: Կոմիտէի կողմից կարգւած էին վերակացուներ, որպէսզի հայրուկները հսկեն, որ գիւղացիներին աւելորդ պահանջներ չանեն:

Մենք ամէն հանգամանքներով պատրաստ էինք, բայց մեր մէջ կար երկպառակութիւն՝ սկզբունքի ինդիլը: Բոլոր վասպուրականցիները և մասամբ կոմիտէի անդամները՝ հակառակ էին արշաւանքին. դրանց մէջն էի և ես: Հակաարշաւանքականները պնդում էին, որ «մեծ խմբով, բոլորս միասին, անցնենք Վասպուրականի, Շատախի և Մոկսի թևները և ամբանանք կուսուցու», իսկ արշաւանքականները պնդում էին. «96 թիւ Ընդհանուր Ժողովը վճռել է արշաւանք, և պէտք է նեթարկուելք Ընդհանուր Ժողովի վճռին»: Մեր երկպառակութիւնը սաստիկ սուր ընտանութիւն ստացաւ. վճռեցինք զրել Թիֆլիս և դրելով բացատրեցինք մեր ներկայ հանգամանքների դրութիւնը և պահանջեցինք, որ Բիւրօի կողմից մէկը դայ, մեր մէջ հաշտութիւն դրիք»:

Յուլիս ամսին Բիւրօի կողմից եկաւ Շ.*: Նրա գալուստ պէս ժողովեցինք մեր աչքի ընկնող ուժերը և հինգ նոյն Երեկոյան նա մեզ բացատրեց այսպէս. «Օգոստոս մէկին ընդհանուր հիւպատոսական Ժողով պէտք է լինի յունակած պատերազմի առթիւ, որտեղ սեղանի երես պիտի դրուի և հայկանի հարցը: Ժամանակը կարճ է. պէտք է վերջ տաք երկպառակութեան և հաշտէք մէկ մտքի հետ միայն, այն է՝ ներս դնացողները զնան երկրի ներքը, իսկ արշաւանքականները կատարեն իրենց արշաւանքը. միայն թէ չուտ, մինչև օգոստոս ամէն բան պէտք է կատարուի»: Այդ օրերին վանքից եկաւ մեր Վաղգէնը. նա ևս հաշտեց այդ մտքի հետ:

Լսելով Շ.-ի պատճառաբանութիւնները՝ մենք վճռեցինք չլլատել ուժերը, այլ միանալ և մեծ ուժով արշաւանք գործել: Վաղգէնը վերադարձաւ Վան Միւրօի առաջնորդութեամբ, իսկ մենք սկսեցինք ձիեր առնել հեծելախումբ պատրաստելու համար: Եւ զնացի Պոյ, իսկ Բէզը և Բիձէն* զնացին Ուրախ ձիեր առնելու: Մի շարքից յետոյ բոլորս վերադարձանք՝ բերելով մեզ հետ ձիերը: Բանակը պատրաստ էր արդէն. նշանակւած էին հարիւրապետներ, յիսնապետներ և տասնապետներ, որոնք ունէին մի ընդհանուր հրամանատար իր օգնականով: Հեծելախումբը յանձնւած էր ինձ. ես էլ ինձ օգնական կարգեցի Բէգին և նշանակեցի տասնապետներ:

Պայմանաւորուել էինք յուլիս 22-ին հաւաքել Հաւթուան գիւղը: Այդ օրը գիւղացիք մեզ սիրալիբ ընդունելութիւն ցոյց տւին, իսկ Երեկոյան համարեա բոլոր գիւղացիք եկել էին մեզ ճանապարհ գցելու: Ժամը ութին վերջին հրաժեշտը տւինք գիւղացիներին և դուրս եկանք: Միւս օրը առաւօտեան ժամը Ծ-ին հասանք Դերիկի Պլինդ-Դարան, ձիանք կապեցինք կանաչ հովտում, պահպաններ նշանակեցինք սարերի գլխին, իսկ բանակը հանգիստ քնում էր ստան աղբիւրի մօտ:

* Շ. — Յարութիւն Եսիրեկան:
 * Բիձա — Գրիգոր Բախ. Տէր-Աւագան, Դարալիսազնազի Բաշեմո գիւղացի:

Երեկուրան ժամը 6-ին հնչեցրինք դիւնորական փողը, և ողջ բանակը ոտքի կանգնեց: Հետեակ խումբը զնուս էր առաջեց, իսկ հեծելախումբը՝ յետևեց: Անցանք Դերկիկ տաք ջրի մօտով և բարձրացանք Արաուլ սարի դաշտաթիւ: Այդ օրը մեզ համար շատ ծանր էր. մեր յաջողութիւնը և անյաջողութիւնը համարեա թէ մագից էր կարևած: Կրկին պահապաններ դրինք և պատուիրեցինք, որ տեսած շիրքէին կամ սպաննն կամ լուսնն, որպէսզի հաւար չաննն: Իոկ առաւօտեան բարձրացանք Սանատրի դիմացի սարի գագաթը և սկսեցինք հետազօտել Ծարաֆ աղաչի բանակը:

Ծարաֆ աղաչի ցեղի վրանները փուսած էին Սանատրի դաշտի զևտի կեղբքին, իսկ Ծարաֆ աղաչի ճերմակ վրանները բաժանուս էին իւր ցեղից արևմտեան կողմը, փոքրիկ բլրի տակին:

Ձինւորական ատանի երկար խորհրդակցութիւնէից յետոյ, վճռեցինք բարձակել վրանների վրա: Երբ վճիռը կայացաւ, նստեցի ձիս, վերադարձայ դէպի բանակը, տեսայ՝ Բիձէն իր պաշտօնակցի հետ երդուս էին Վարդանանց շարականը քրդի սրբախայրի վրան, իսկ բանակը ոտքի կանգնած՝ լսում էր ուղևորիչ երգեցողութիւնը: յետոյ բանակը հաղորդեց նոյն տեղը:

Հաղորդութիւնէից յետոյ, աս յայտնեցի բանակի հարիւրապետներին, որ վճիռը կայացած է. պէտք է առաջ գնալ: Երբ հասանք դիւնորական ատանի մօտ, մեր մէջ եղած մի խումբ վանեցի արմենականները, օտուելով յարմար համարանքից, բաժանանցին մեզանից և ճանապարհ ընկան դէպի Վան: Մենք էլ, Արաուլ սարի գլխին թողնելով տասնապետ Շէքօին իր տասնակով, որպէս պահապան, իսկ Թաւրաւայի սարի գլխին տասնապետ Եւնանին իւր տասնակով, առաջ շարժեցինք: Բանակը կամպար-կամպոս իջաւ. դէպի դաշտը: Առաւօտեան ժամը 1-ին Ծարաֆ աղաչի վրանների առաջ շրթայ բռնած կանգնած էին մեր հայրուկները, իսկ հեծելախումբը կանգնած էր բանակից 100 քայլ յետ. սպասում էին պայմանական ժամին...

Հայրուկները կատաղաբար գողականք էին թափում վրանների վրա: Այդ միջոցին լսեցի մէկ ձայն և թողնելով հեծելախումբը՝ մօտեցայ դէպի այդ ձայնը: Ձայն տուող մէկ մէջքի երկտասարդ էր. նա պատմեց ինձ. «Հարձակատարի օգնականը կամեցում է մեզ տեսնել»: Այդ միջոցին օգնականը ինքը բախլիս է հեծելախումբի մօտ, պատմում է օգնականին՝ ստելով. «Պէտք է ձիւնորները բարձրանան սարի լանջերը, քրդերի առաջն առնելու համար»: Տասնապետ Եփրեմը*) առնելով իր տասնակը՝ զնց դէպի հիւսիս-արևելեան կողմերը: Այդ երկտասարդի հետ ես մօտեցայ դէպի խարբար քարանայտան, որը իջեցրեց ինձ անցելու տխուր տխուր դէպքերը: 1894 և 95 թևականներին մենք անցնում էինք այդ տեղից, որպէս գինեակիր խումբ, միևնոյն գգուութեամբ: Աչքերիս պատուիրացաւ Պետոն, որը գգուցանց մեր մեզ շխօսել, չհաղալ, այլ լուս ու մուշկ անցնել, որպէսզի մաքատան պահապանները չնկատեն. շատ պահապանողական դիրք էր բռնած նա: Բայց 1896 թիւ սկզբներում Պետոն փրկուած էր, կար-

ծես թէ նոյն մարդը չէր, ինչ որ առաջ էր: Երբ ես Վանում բաժանակցի նրանից, ուղևորած համբուրում էր ինձ և ասում. «Առանց կուէի այլևս չտեսնեմ քեզ և յոյս ունեմ, որ առանց կուէի այլևս չես վերադառնայ իմ մօտ»: Անա սրբուող ես յիշեցի Պետօնի և ասացի. «Ա՛խ, Պետօ, ս՛րբ ես. հարաբ տեսնում ես թէ չէ՞»...

Յետոյ իջայ ձիւնցս, մի լուս ստոր ջուր խմեցի և հեծնելով ձիս՝ առաջ քշեցի դէպի վրանները, որտեղ մեր հայրուկները կատաղութեամբ կոտորում էին քրդերին: Ամէն կողմից լուսւս էին ձայներ. «Տղի՛քը, առանց խնայելու կոտորեցէք քրդերին, 800 արմենականների ոսկորները պահանջում են մեզանից վրէժ տանել անօրէններէից»:

Հարուկները՝ խնայելով կանանց և մանուկներին, աւելի կատաղաբար կոտորում էին մեծերին, վրանները այրում էին, իւրի տկերը թափում էին, ամէն ինչ կրակի էին մատուում. և ծուրբ բարձրացել էր, երկինքը պատել:

Ժամը 6 էր, երբ հնչեց նահանջի դիւնորական փողը: Այդ միջոցին, գետի միւս ափը, հարաւային կողմի կոտորածից աղաւառ մտացել էին մի քանի վրաններ: Տեսնելով սուկալի կոտորածը՝ նոքա շրտակեցին հաւար տանել դէպի մօտակայ Բաշկալա գիւղաքաղաքը և մօտիկ շիրք ցեղապետներին:

Բանակը վերադարձաւ դէպի Արաուլ, ուր հասան հարեան քերդ ցեղապետները իրենց խմբերով: Մեր դռնութիւնը տուկալի էր՝ յողեսած, սոված, ծարաւ, բայց էլի չէինք ընկճուս թշնամու առաջ, այլ հերոսաբար կուսում էինք: Կուէի ժամանակ, վրանների մէջ, աչքի էին ընկնում հարիւրապետ Արպերը, Կարօն և Վրամը, որոնք յիննապետներ օգնականներ էին:

Հայրուկները կուսով բարձրանում էին սարի գագաթը՝ աստիճանաբար այս դիրքից անցնելով այն դիրքը: Ես և Բիձան ձիւններս նստած՝ քուսում էինք աջ ու ձախ վիրաւորածներին գտնելու համար և գտնելով՝ ձիւններով ուղարկում էինք բանակի կենտրոնատեղը: Հէնց այդ միջոցին Եկաւ ողբիցի տասնապետ Յարութը՝ աջ մեռըր վեղակից փչուած և յայտնեց մեզ, թէ՛ «Ուանն») սպանեց, ասա չրացանք»: Յարութին ձի տրինք, և նա զնաց դէպի առաջ: Միւս կողմից յայտնեցին, թէ՛ «Հնչական Մկոն սպանեց աւար բերելու ժամանակ»: Դրանք 3 հոգի էին, որ առաջ հնչականներ էին, բայց յետոյ նրանցից բաժանուելով՝ միացել էին մեզ:

Այդպէս վիրաւորածներին՝ ձիեր բաժանելով՝ բարձրանում էինք դէպի Արաուլի գագաթը, որտեղ հանդիպեցի Կարօին: Նա՝ ծիծաղը երևինք՝ սասց. «Ես էլ վիրաւորում եմ, ինձ էլ ձի տուր»: Ես առաջարկեցի նստել իմ ձին, բայց նա ասաց. «Ես թեթև եմ վիրաւորած», հարկաւոր չէ ձին, ես կուսելով՝ կը բարձրանամ»:

Դրանց թողնելով այդտեղ՝ ես բարձրացայ դէպի վեր, որտեղ գտայ Բէգին մի քանի հայրուկներով: Բէգի հետ անցանք դէպի հիւսիսային սարի ստորոտը, որտեղ գտանք ընդհանուր հրամանատարին և նստեցինք մի փոքր բլրի գլխին՝ ձիւն ուտելու: Մի քանի ըսպէ՛

*) Եփրեմ — յետագային՝ պայրսկ. յեղափոխական ուժերի ընդհանուր հրամանատար՝ Եփրեմ իւսն:

*) Խան — Կարապետ Դաւթեան, ղազախեցի:

անցած՝ եկաւ մի հարցուկ և սասց. «Կարօն պաշարւած է, օգնութիւն է խնդրում, շուտով հասէք, օգնեցէ՛ք»: Անմիջապէս ուղարկեցինք ձիւտը Գորեղոսին մի քանի հայրուկներով: Յետոյ, հարեւարպետ Ախաբերից կեաւ մի հարցուկ և տւաւ մի տոմսով, որում գրւած էր. «Տղէ՛րք, թաւաւացիները պաշարւած են, օգնութեան հասէ՛ք»: Ուղարկեցինք յիսնասպետի օգնական Հալիին*) և տասնապետ Աւօին իր կուռ տասնեակով: Հեծանք ձիւտը Գորեղոս և քչեցինք դէպի վերջին սարի դադաթը, որտեղից պիտի նահանջէինք: Այդտեղ էին գինւորական ասեանի երեք անդամները: Դրանց հետ միացանք և նորից կազմեցինք գինւորական ասեան: Խորհուրդ արինք՝ արգօք շարունակենք, թէ վերադառնանք: Վճռեցինք վերադառնալ, որովհետև փամփուռանքի պակասութիւնը և վերաուրածների գրութիւնը ստիպում էին շարունակել արշաւանքը:

Սարի գլխից լաւ տեսարան էր բացւած մեր առջև: Երևում էր Սալմաստի դաշարի ի հայաքնակ դիւղերով, Ուրմիտ լիճը, Դերիկի Սպիտակ սարը և մեզանից ոչ հեռու՝ Խանապահա՛ր քիւրջ ցեղի վրանները: Սրանք տեսնելով մեր հերոսական կոխը՝ վրանները քանդում ու փախչում էին մի ապահով ապաստարան գտնելու համար:

Նորից հեծայ ձիւ ու վերադարձայ բանակի կենտրոնատեղը, ուր տասնեակներով թափւած հայրուկներ ձիւն էին ուտում: Ձիւնից քիչ վերև, կանաչ բլրի դիմին, թափւած էին մեր վիրաւորւածները: Ցաւը նեղացնում էր խեղճերին. մէկի ոտն էին փաթաթում, մէկի երեսն էին ձիւն քում ուչքի բերելու համար, միւսի վէրքն էին մաքրում, վրան դեղ դնում ու կրկին փաթաթում: Փիղայի Բժիշկը**) բոլորի վէրքերին դարման էր անում: Դրանց մէջ աչքի էր ընկնում Կարօն. չուխէն մի քանի տեղից ծակծկւած, աջ թևից վիրաւորւած, երեսն արիւնոտ, իր մօտը հաւաքւած արհեստաւորներին՝ պատրաստում էր փչացած հրացանները և յանձնում տէրերին:

Երկուշաբթի ժամը 8-ին վերջինք վիրաւորւածներին և զնացինք վերջին սարի դադաթը, որտեղ հնչեցինք փողը, և ողջ բանակը ժողովեց: Համապանցի Սաղաթելի վէրքերը ծանր էին և չէր կարողանում ձի նստել. նրան առանձին հող էր տանում Կարօն. աշխատում էր հանգստացնել, որպէսզի կարողանայ ձիու վրա մտալ: Այդ միջոցին, հիւսիս-արևմտեան սարի կողմից մեր վրա տեղացին քանից աւելի թշնամու գնդակներ: Այդ գնդակներին զոհ գնացին Կարօն, Կրեւացին, Շատախից Թակօն և վիրաւոր Սաղաթելը: Մեզ անում էր միայն խոյ տալ և հեռանալու կողմնել թշնամուց:

Ձիւ քչեցի դէպի առաջ: Գտնելով վաղադին՝ հարցրի. «Մը՛ր ես դե՞ռ»: Նա պատասխանեց. «Ինձ ասել է Դու՛մանը՝ բանակը քաշի դէպի Դերիկի սպիտակ սարը, ուր հաւաքւելու ենք բոլորք»: Այդտեղ ես իջայ

*) Հալի — իսպառուհեմ Մուրադ, Վասպուրլակացի Գաւաշ գաւառի՝ Նոր գիւղից: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ տարագրել է Պարսկաստան, ուր և գտնուեմ է ներկայիս:
**) Բժ. Քրիստոփոր Օհանեան, շաշեցի:

ձիուց. գաղիվայր էր. չէր կարելի ձիով իջնել: Կամաց-կամաց իջնում էինք դէպի ձորը, բայց յետևից շատանում էին թշնամու գնդակները: Երբ ձորի մուտքը հասանք, խորիցի տասնապետ Նեփուսին, որ մի քանի հայրուկներ ստիկ, կանգնի ձորի մուտքում ու զիմացրէ թշնամուն, մինչև որ ամբողջ բանակը ձորից անցնի, բայց դժբախտ հանգամանքների հանդիպեցինք: Վաղադների քուրթեան պատահաճողով խմբերը ցրւել էին ու մէկ մէկու կորցրի:

Գիշերւայ ժամը 3-ին հասանք Դերիկի տաք ջուրը, ուր դտանք էրք յիսնապետին իր յիսնեակով: Ժամը 5-ին բարձրացանք պայմանաւորւած Սպիտակ սարը, ուր մեղանից առաջ ոչ ոք չէր դնացել: Քիչ կանգ առնելուց յետոյ տեսանք մերոցից շատերին պակաս. չկային Փիղայի Բժիշկը, Դու՛մանը, Արքայի և իմ տասնապետ Համբոն: Ի՛նչ կարող էինք անել. սպասեցինք մինչև երեկոյ. մէկ-մէկ դուրս էին գալիս և պատմում, թէ՛ այսօր ոչ մի հրացանի ձայն չէինք լսել: Մնացինք շարած. ո՛ւր կարող էինք գնալ. մի՛թէ այլևս դուրս չէին գալու. մի՛թէ նրանք էլ էին սպանուած: Բայց և այնպէս, մեկ միում մեր բանակը խաղաղ կերպով մտցնել Սալմաստ:

Երկուշաբթի ժամը 8-ին նորից հնչեցինք փողը. բանակը կազմակերպւեց և ճանապարհ ընկանք դէպի Սարմատ: Առաւօտան ժամը 3-ին հասանք Հաթիւն, ուր դիւղացիք կրկին ընդունեցին մեզ սիրով: Բուրբ հարուկներն այդ օրը ցրւեցին իրենց տեղերը: Նոյն օրը եկան բուրբ մոլորւածները, որոնց մէջ և Փիղայի Բժիշկը և այլն:

Մի քանի օր հանդիստ էինք և կարծում էինք, թէ այդպէս էլ կանցնի, բայց տանկաց շահաճատարը հեռագրեց Պոլիս՝ յայտնելով Սալմաստի սահմանադիւրի կոխը և թէ որոնք այժմ գտնւում են Սալմաստում: Միւս օրը թե՛հրանց հեռագրի եկաւ, շահի կողմից իր դատաւորի վրա, այս որովանդակութեամբ. «Բռնեցէ՛ք այդ դաշաղներին և ուղարկեցէ՛ք Դաւրէ՛թ»: Սկսեցին խուզարկութիւններ. մեր զբոսթիւնը շատ վատացաւ: Վճռեցինք բոլոր հայրուկներին ուղարկել Ռուսաստան, բայց դրամական միջոցների չունէինք: Սալմաստի վաճառականները ժողովեցին իրենց բոլոր եկեղեցական փողերը և գնացին դատաւորի մօտ, օրական հարիւր մանկթ աւել, որպէսզի խուզարկութիւնները դադարեցնէ, մինչև որ հայրուկներին ուղարկեն Ռուսաց հողը, սակայն չկարողացանք հասնել մեր նպատակին: Հինգ օրում չկարողացանք բուրբ հարուկներին փոխադրել որոշւած տեղը:

Այդ կաշտերի անուր լսեց տանկաց շահաճատարը և նորից յայտնեց շահին, որպէս թէ դատաւորը կաշտուել է հայերից և դաշաղներին փակցնում է: Շահից հեռագրեր կրկնեց. «Բռնեցէ՛ք դաշաղներին և ուղարկեցէ՛ք Դաւրէ՛թ»: Եւ նոյն օրը սկսեցին աստիճակ խուզարկութիւններ. բռնեցին մտաւորապէս 30 հայրուկներ, որոնցից հինգը ուսուստանցի էին, իսկ միւսները՝ տանկաստանցի: Սալմաստի զբոսթիւնը շատ վատացաւ: Արդէն այդ էր հարկաւոր քաղցած սարազներին. սկսեցին Սալմաստի փողոցները շափշիւկ և տները կործանել: Ժողովուրդը յուսահատուած՝ համախմբեց ու հեռագրատունը լեզուելով՝ այսպէս հեռագրեց Ամիր-

Ներգամին Թաւրիզի ՎՄԷՆՁ ձեր Հպատակներն ենք, ազա-
նու էնք պաշտպանել մեզ այս բաղցած սարակներէ
ձեռքէջ: Միւս օրը յայպիսի պատասխան ստացուցե-
ա՛նք: «Քեզնի ժողովուրդը, դուք մեղաւոր չէք, մեղաւորը ձեր
անմեղ յեղափոխականներն են, որոնք իրենց անխոհեմ
ընթացքով մեզ այդ օրին Հասցրին. եթէ դուք պաշտպա-
նէք նրանց, ձեր դրութիւնը աւելի վատ կը լինի. մեզ
Համար արդէն կարգադրած է: Ակիլի Նիզամ»:

Շահաբադը զնայ բանոր, տեսաւ բանտարկեալ-
ներին ու յարձակեց զատուրդի վրա: «Մըսնք ի՛նչ են,
սորս դպրոցականներ են եւ ոչ թէ Հայուկներ, բացի
մի քանիսից»: Այդ Հիման վրա կառավարութիւնը նո-
րից սկսեց խուլարկութիւններ անել եւ բռնել աչքի ըն-
կնող ուժերին: Երկար խուլարկութիւններից յետոյ,
կեր տեսան, որ ոչ սքի չեն կարողանում գտնել, սկսե-
ցին բռնատեղի դիրքացնելներն եւ սատարել ձեռնէ:

Մի երեկոյ մտաուորակչս 30 զիւզացու կազմուել
էին կրակի շուրջը, Փարբաշներն էլ նստուուել էին մէջ-
տեղը: Ամէն մի շամիւր խորովածից կամ մի բրտակ
թէյից յետոյ, Փարբաշները վեր էին կենում եւ ծեծում
էին գիւղացիներին՝ ասելով. «Որտե՞ղ են դաշաղները,
ասեց՛ք» Գիւղացիներից, որոնք Հարուստ էին, բար-
ձրացնում էին երկու մտար. ծեծող Փարբաշը դիտէր,
որ երկու դուռ պէտք է ստանայ. թողնում էր դրանց
եւ սկսում էր միւսներին ծեծել: Այդպիսով ով որ փող
ուռէր, քիչ էր ծեծւում. ով չուռէր, շատ էր ծեծւում:
Ահա այդպէս սանջում էին խեղճ գիւղացիներին: Տան-
ջանքներին չդիմանալով՝ նրանցից մէկը մատնեց մեզ՝
յայտնելով մեր սուները:

Ես, Տաշուն եւ օր. Մադիկը ապրում էինք Փայաշուկ
գիւղում, Հանգուցեալ Բաֆֆու տանը: Առաւօտեան
ժամը 5-ին եկան յայտնեցին, թէ՛ «Փարբաշները տա-
րան մեր ձիերը: Հասկացանք, որ գործը ուրիշ կեր-
պարանք է ստացել. մենք էլ մնացինք անտանիլի դրու-
թեան մէջ: Ես սասցի Տաշոյն. Աւելիլ լաւ է կուռել,
քան թէ բռնել»: Տաշուն յանդիմանեց ինձ. «Զի կարե-
լի, ամբողջ գիւղը գոհ կը գնայ. դու մտի՛ր ներքնա-
յարկը, որպէսզի քեզ չբռնեն, իսկ ես անցագիւր ունեմ.
Եթէ բռնեն էլ, կարելի է ազատուի»: Այդ ըողչէին տե-
սանք՝ շրջապատեցին մեր տունը: Տաշուն սենեակից
դուրս եկաւ բարձր. նրան իսկոյն բռնեցին եւ ծեծելով
տարան դէպի Դիման: Օրիորդ Մադիկը վազելով ինձ
մօտ՝ ասաց. «Տաշոյն տարան. ես էլ գնում եմ Ռու-
սաց կոնսուլի փոխանորդի մօտ. դու էլ աշխատի՛ր քեզ
ազատեցի»:

Իմ դրութիւնս սաստիկ վատացաւ. ո՛րը դնամ օրը
ցերեկով. գիւղը շրջապատւած է Հարիւրաւոր սարակա-
նորով: Այս մտածմունքի մէջ էի, որ եկաւ Բաֆֆու
բոլբը, տիկին Հոխիսիմէն եւ ասաց ինձ. «Աքօ ջան,
մի՛ մտածիր, մենք դպրոցի տեղ ունենք, արի՛ աշխտեց
պահւիր»: Երեք օր ու գիշեր մնացի այդ պահեստի
մէջ: Տիկ. Հոխիսիմէն ինձ յայտնում էր օրւայ դէպքե-
րը: Մի օր նա ասաց, թէ բանտարկեալները բանալից
փախել են եւ դնացել բօշիկի մօտ, իսկ սուները շրջապա-
տւած է սարակներով, որոնք պահանջում են դաշաղնե-
րին, իսկ բօշիկը պատասխանում է. «Ես ուսուսակա-

տակ եմ. մինչև իմ կոնսուլից հրաման չըրեմք, իրա-
ւունք չունեմք իմ սուներ խուլարկելու»:

Նոյն գիշեր Թաւրիզից, ուսուսց Հիւլապատոսից Հե-
ռապիւր է գալիս իր փոխանորդին. «Մտի՛ր բօշիկի տու-
նը, բռնի՛ր այն դաշաղներին եւ յանձնի՛ր կառավարու-
թեան, իսկ եթէ ինքը Հանդիմանի քեզ, իրան էլ բռնիր,
ժողովի՛ր իր բոլոր գրաւձերերը եւ ուլարկի՛ր տեղը»:
Իժիկիւր այդ լսելով՝ բաց է անում դուռը եւ յանձնում
բանտարկեալներին: Նրանց ծեծի՛ ենթարկելով՝ սանում
են բանտը. մէկը ճանապարհին մտնում է ծեծից:

Միւս գիշեր բօշիկը գրում է ինձ. «Տարան բան-
տարկեալներին, չտապի՛ր այստեղ»: Ես նոյն գիշերը
դուրս եկայ իմ զաղանի պահեստից, Համբուրցի Բաֆ-
ֆու մօր մեղքը եւ դնացի բօշիկի մօտ: Հէնց այդ գիշերն
էլ ես, Վարդանը, Ստիկը**) եւ ըկզր նստեցինք ձիերը
եւ Ջուլֆայով անցանք դէպի Էլմիսիմին, որտեղ պատե-
ուռեցանք ներկայանալ վեհափառ կաթուղիկոսին: Վե-
հափառ Տէրն ասաց. «Գնացէ՛ք, քիչ Հանգստացե՛ք,
ճանճի բոժոժի նման չձակե՛ք թունէք դուրս»: Համբու-
րցիցից վեհափառի աջը եւ ճանապարհ՝ ընկանք դէպի
Թիֆլիս:

1898թ. յունուար ամսին Շուշիիկի**) բերդի Հաց
տանողների հետ մտայ բերդը: Բերդի բակից նայում
էի պատուհաններին, յանկարծ, Տաշօի պատկերը տե-
սայ պատուհանի ներսը, կանգնած դէմ առ դէմ: Նրա
Հայեացքից եզրակացնում էի. կարծես ուրում էր ասել՝
«Ինչո՞ւ ես եկել, չտապի՛ր դուրս, թէ՛ չէ՛ քեզ էլ կը
բռնեն»:

Արտասուքը աչքերիս՝ դուրս եկայ բերդի պարիս-
պից՝ մտքումս ասելով՝

— Մնա՛ս բարեաւ, սիրելի ընկեր, ես գնում եմ
նոր երկիր...

1898թ. ապրիլ 24-ին, Թիֆլիսի երկաթուղու կա-
յարանում, երկիրոյն ժամը 9-ին, իրարանցում կար:
Մեր բազմաթիւ ընկերները Հուաբել էին ինձ ճանա-
պարհ դնելու: Այդ ժամանակ Դաշնակցութեան ընդ-
Հանուր ժողով կար***) եւ չտպանեցի ժողովի վերջա-
նայուն: Հէնց որ վճիռ կայացաւ «կենտրոնացում»****)
անել Հայաստանի մի քանի անտառիկ կէտերում եւ ցոյ-
ցեր մեծ քաղաքներում, ես չտապեցի դէպի երկիր:

Բաժանման այս ժամին չգիտեմ ուրախութիւնն էր
Համակել ինձ, թէ՛ տիրութիւնը Քարի ճանապարհը,
օրիորդներն ու տիկիները Քարի ճանապարհ՝ էին
ստում ամէն կողմից: Երբ Հասաւ բաժանման րոպէն,
խկապէս, ես էլ զգալուած էի. չէի կարողանում երկու
բառ անգամ արտասանել: Համբուրցի բոլորի հետ եւ
նստեցի վազանը: Աղոտաֆայի վրայով վերջի անգամ
մնաս բարեւ ուղարկեցի իմ հայրենիքին, իմ ծննդա-

*) Յետագային՝ Յակոբ Բախմայ Ստիկեան:
**) Մեծիթի բանտը Թիֆլիսում:
***) Երկրայի Ընդհանուր ժողովը:
****) «Կենտրոնացում» յատուկ նշանակութիւն ու-
նեցող բառ է Դաշնակցութեան մէջ—առաջնական միջոց-
ների, ուժերի եւ գործունէութեան կենտրոնացում արդ-
վայում:

վայրին և Գիլիշանի վրայով անցայ Զրաքերդ*), ուր տեղեկացայ ճարտարի մասին. նա 50 հոգով ինձ էր սպասում սահմանագլխի կայարանում: Ես չտապեցի նրա մօտ:

Մայիսի 1 էր: Արդէն տեսնւած էին բոլոր պատրաստութիւնները: Սպասում էինք Աղբիւրի և Գուրգէնի նամակներին: Մի գիշեր ինձ արթնացրին և վեր կացրին տեղիցս. ճարտարն էր մի բարձրահասակ երիտասարդի հետ, ձեռքին մի կապոց ծրար: Ճարտարը ասաց. «Վերջնապէս, եկաւ սուբհանդակը»: Նամակարեւրի բարեկեղտ յետոյ, շտապով բացի նամակները. գրւած էր, որ պրիւր 25-ին, գիշերը, Միխոն իր խմբով ծակել էր բանտի պատը և փախել: Կառավարութիւնը Բաղէշում խուզարկութիւններ է անում, զօրք է ուղարկել Միխոի յետևից: Ստորագրւած էին Աղբիւրի և Գուրգէնի անունները: Կային և ուրիշ նամակներ, որոնք անմիջապէս ուղարկւեցան արտասահման՝ խմբագրութեան**):

Իմ գրութիւնը բաւական վատացաւ, որովհետեւ ևս պէտք է առանց արմուկի նասնի Բարձրասնդակ***), հաւաքելի մեր բոլոր ուժերը, այն ինչ այժմ անկարելի էր ստանց դէպքի տեղ հասնել: Աղբիւրը, Գուրգէնը և Միխոն իրենց խմբով, իսկ մենք՝ 50 հոգով... Տէր Ասուած, ինչպէ՞ս ազատել այս նեղ գրութիւնից: Չէ՞ որ Լիթէ գնանք, անպատճառ կուրկը բռնենք և, ուրեմն, մեր որոշումն էլ կը խախտի: Ի՞նչ անել:

Երկու մտածելուց յետոյ, որոշեցի ծպտւած կերպով անցնել. ուրիշ կերպ անկարելի է: Մայիս 15-ին որոշեցինք ճարտարին և Մուշեղին թողնել նոյն տեղը, մինչև մեզանից նամակ ստացուելը: Բաժանեցինք իրարից համբուրելով և ճանապարհ ընկանք զէպի Բասէն: Ծպտւածներս էինք՝ ես, Արշալը, Միխոնը և Տիգրանը:

Կէս գիշեր էր, երբ սահմանագլխի յոյն Սրբազան գիւղում հասաքել էին գիւղի ծերունի մարդիկ մեղ ճանապարհ դնելու համար դէպի սահմանը: Նրանք բերել էին տաճկաց կողմից, Սանաժի թխուր գիւղից, Ռաջապ անունով մի թիւրք երիտասարդ, որը պէտք է մեզ առաջնորդէր դէպի Բասէն, թիւրքաց կողմը:

Մայիս 20 էր: Գիշերայց ժամը 10-ին մնաս բարև ասացինք մեր յոյն բարեկամներին և ճանապարհ ընկանք դէպի սահմանը, Զիւրիկի բերդ վրայով: Առաւօտեան արշալույսին հասանք Ռաջապի գիւղը՝ Սանամեր, ուր լաւ հիւրասիրելուց յետոյ, քնեցինք ամբողջ ցերեկը և երեկոյեան դարձեալ պատրաստութիւն տեսանք ճանապարհը շարունակելու:

Այժմ ե՛ս պէտք է ենթարկւէի իմ առաջնորդին. ինչ որ հրամայում էր՝ լսում էի: Ինձ պատեւիբեց խուլ ձեւանալ և ձեւացայ. հարեան թիւրքերը դալոյն էին մեզ մօտ, հարց ու փորձ անում, բայց ես ոչ մի պատասխան չէի տալիս: Ռաջապը թիւրքերի առաջ միջոտ ասում էր ինձ. «Մի՛ վախենար, շուտով կը հասնես

չիւանքիլ քիլիսէն, քո մուրատը կը ստանաս և կառողջանաս»:

Երեկոյեան մութ ժամանակ Ռաջապի հետ ճանապարհս շարունակեցի և արշալույսին հասայ Բասէն, Բէնփրիքէոյ կողմը հայոց գիւղը, բարձրացայ գիւղի մօտ գտնւած սարը և Ռաջապին ուղարկեցի դիւր՝ տալով նրան տոմսակ այնտեղի մեր ընկերների համար: Առաւօտեան ժամը 10 էր. Երբ տեսանք, որ մեր կողմն են գալիս մի քանի մարդիկ. երբ մօտեցան, տեսանք, որ մէկը գիւղի ուսուցիչն էր, միւսը՝ Ռաջապը և մի քանի գիւղացիներ, որոնք իրենց հետ հաց ու գինի էին բերում:

Ուրախութեան չափ չկար. սիրալիք բարեկեղտց յետոյ, նստանք հացի: Ծաշից յետոյ, ոչսը ասաց, որ գիւղում բաւականին զօրքեր կան. պէտք է սպասել, որ արտը վարողները դաշտից գիւղ վերադառնան և նրանց հետ մտնել գիւղ, որպէսզի գինեորները ուղարկութիւնը չգրաւի:

Մենք վճարեցինք Ռաջապին մի քանի դուրուշ՝ ճանապարհ գրինք: Ռաջապի հետնալուց յետոյ, ոչս Ղադարը սկսեց պատմել, թէ ինչպէս 1896 թիւն, հայկական կողմորսմաների ժամանակ, ինքը մեծ դեր է խաղացել պաշտպանելով թշուտներից. դրա համար էլ Կարինում բանտարկեց որպէս ջան Փիղայի: 1896 թիւ ընդհանուր ներման ժամանակ ինքն ևս ազատուցաւ:

Երեկոյեան, դաշտում բանուղ մշակները հետ միասին մտանք գիւղ: Այստեղ մնացինք երկու օր, որից յետոյ ոչսի կարգով, որ խմբակետ էր և աւելի մեծ դեր էր խաղում գիւղում, խորհուրդ տուց, որ Կարին մտնելու ժամանակ երկու մասի բաժանւենք: Այս պատճառով, Միխոնը և Տիգրանը մեզանից մի օր առաջ ճանապարհ ընկաւ, իսկ մի օր յետոյ՝ ես և Արշալը:

Այստեղ իմ գրութիւնը փոխուեց՝ ես այլևս խուլ չէի. հիմա դարձայ գիւղացի հայ մշակ, իսկ Արշալը՝ թիւրք աղա: Պանիրը շարակած՝ հասանք Ղալիւ Դաւարոյնի բերդերի մօտ և երեկոյեան ժամը 5-ին հասանք, քաղաքից դուրս, Սիթուռն Ռոյաղին, որտեղ սպասում էր մեր Կարտոյ ընկերներից մէկը, Վախթիան անունով: Երբ նա մեզ տեսաւ, իսկոյն հստկացաւ և ճանապարհ ընկաւ գէպի քաղաք ստանց մեղ բարեկեղտ, որովհետեւ աղբիւրի մօտ կային թիւրքեր, քերթեր, չէչններ և մի քանի գինեորներ, որոնք սայլելով դէնք էին փոխադրում Տրապիզոնից վա՛ն:

Մտեցանք քաղաքէն: Մի գինուր պահակ կանգնած էր դրան մօտ գիւղից եկող գիւղացիներին խուզարկելու համար: Արշալը, իբրև թիւրք աղա, մօտեցաւ գինեորին ու սարած տեղ և բարկանալով իմ վրա՝ ասաց թիւրքերէն. «Տո՛ւք, անհաւաստի տղայ անհաւատ, շուտ գնա՛, հօ շատեկեցա՛ր»: Զիւնուրը՝ համոզւած, որ իրեն բարեկող իսլամ է և ես՝ նրա ծառան, աւելորդ համարեց ինձ խուզարկել և թոյլ տուց, որ անցնենք՝ չկամենալով միւրաւորել իմ աղալի ինքնասիրութիւնը. ինչպէ՞ս կարելի է կասկածել իսլամի վրա:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը քաղաքի փողոցներով: Վախտանգը գնում էր մեզանից առաջ և մի տան դիմաց վայր ձգեց փայտը և շարունակեց ճանապարհը (արդպէս էր մեր պայմանական նշանը): Մենք մտանք այդ տունը, ուր մեզ սպասում էր բար-

*) Զրաքերդ — Կարս:
 **) «Իրօշակ»-ի խմբագրութեան:
 ***) Սասուն:

ձրահասակ, նիհար կազմածքով մի օրիորդ: Մեր ներս մտնելուց յետո՛ւ, նա կողպեց դուռը և ծիծաղելով՝ մտեցաւ մեզ ու բարեկեց: Նա արդէն առաջուց ծանօթ էր Արշակի հետ և ուշադրութիւն դարձնելով իմ բեռի վրա՝ բացազանչեց. «Քոռանամ ևս, որքան ծանր է»: Արշակը ծիծաղելով պատասխանեց. «Ի՞նչ արած, եթէ այդ բեռը չլինէր, դժուար կը լինէր ապահով քաղաք մտնել: Քաղաքի մուտքի դիմապարտ կարող էր մեզ խօսեցնել և մեր լիզիլց կասկածելով՝ փորձանք բերէր մեր գլխին»:

Օրիորդը անմիջապէս պատրաստեց ինքնակուր: Եկաւ և նրա մայրը, որ սասց վախիտու ձայնով. «Ձգո՛ւք եղէք, մի՛ վրոցէ տաճիկները նկատեն և էլի սկսեն կոտորել»: Արշակը և օրիորդը հանդուստցրին խեղճ մայրիկին:

Մենք պէտք է տեսնէինք տեղական կոմիտէին և ճանապարհներու շարունակէինք: Հետեւալ օրը ես երկու տող գրեցի և պահանջեցի Տրապիզոնի հասցէն: Օրիորդը վերադարձաւ և պատասխանեց, որ Թաթուլի բանտարկութիւնից յետոյ տեղական կոմիտէն ցրել է և կարհոր տեղեկութիւններ կարելի է ստանալ Թաթուլից: Միւս օրը օրիորդը առնելով ինձանից Յոսիփ գնում է Թաթուլի մօրաբնով տունը և, իբրև Թաթուլի զոյրը, կերակուր տանող կնոջ հետ մտնում է ներս: Օրիորդը յանձնում է Թաթուլին Յոսիփն և բաւական տեղեկութիւններ առած՝ ուղարկութեամբ վերադառնում է մեզ մօտ: Մէտք է ասել, որ տաճիկաց բանտերում ասելի շատ տեղեկութիւններ կան, քան քաղաք ներքո՛ւ:

Յունիս 1 էր: Մենք շնորհակալութիւն յայտնեցինք մեզ հիւրասիրողներին և քաղաքի պարիսպներից դուրս գալով՝ խառնեցինք կարասիներ: Տիզրուան ու Մխիթարի մի ձի էին վարձել ինձ համար, իսկ Արշակը մնաց Բասէնի զիւղերում կզած զէնքերը տեղափոխելու համար: Այժմ իմ գործը լաւ է. ոչ խուլ եմ, ոչ էլ պանիր տանող զիւղային, այլ շարժիչ: Տիզրանն ու Մխիթարն էլ իմ ծառաներն են:

Այդ օրը բաւական անձրևային էր: Կարաւանը բազմաթիւ էր. կար մի զինուորական հարիւրապետ, երկու զապիթաւանը և մէջքի վաճառականներ: Կարաւանում ծառայողներն էին հայ և քերթ տիգրանահերացիներ:

Երբ առաջին կայարանը հասանք, բեռները ցած բերին. հարիւրապետի համար մի սպիտակ վրան բաց արին, իսկ հայ վաճառականները, բեռների անկիւնը հաւաքեած, սկսեցին մատակիա խմել: Տեսնելով, որ պէտք է մրսենք, սասցիք. «Տղեր՛ք, դձանք ցար հաւաքենք. Թըշւած ենք, համ կը տաքանանք, համ էլ մեր չորերը կը չորացնենք»: Բարձրացանք սարը, մի շալակ ցար հաւաքեցինք ու եկանք կարաւանի մօտ, վառեցինք և սկսեցինք տաքանալ: Հետեւիս ունէինք թէյի մաման և շաքար, թէյի երեցինք ու խմեցինք: Ընկերներս ճանապարհին շատ էին յոգնել. այդ պատճառով թէյից յետոյ կրակի շուրջը պառկեցին ու քնեցին, իսկ ես երկար ժամանակ մտածում էի. նայում էի երկնքում փայլող լուսնին և աստղերին:

Կը լինէր ժամը 11ը: Հարիւրապետը դուրս եկաւ վրանից պատառոտած վերաբերումով և շտապեց դէպի

կրակը: Տեսնում էի, որ մրսած է: Մտեցաւ կրակին ու սկսեց ձևքերը շփելով սակ. «Օ՛հ, ճէ էլի աթաղ դըր»: Երբ ևս նկատեցի, թէ՛ գալիս է, քաշեցի մի անկիւն և քնած ձևացալ, Այա եկաւ կարաւանապետը, որից յետո՛յ՝ միւս ծառան: Ամենքը շարեցին կրակի շուրջը: Տիգրանը արթնացաւ և սասց. «Մեր ամբողջ աշխատանքը ի դուր տեղը ոչնչանում է. մենք աշխատեցինք, և սրանք վայելում են»...

Քիւրդերը սկսեցին իրենց ձիերը գովել և զանազան պատմութիւններ անել: Հարիւրապետը նստած լուռ ծիւղում էր: Կարաւանապետը վերջացրեց իր պատմութիւնը և դառնալով հարիւրապետի կողմը՝ սասց. «Քե՛նեդեմ, հիմա դուք իտեցե՛ք լսե՛նք. շատ աշխարհ տեսած մարդ էք. շատ բան կիմանաք»:

— «Շատ լաւ», սասց հարիւրապետը, ծանրութեամբ բարձրացրեց գլուխը, փաթաթեց մի ծխախոտ և սկսեց իր պատմութիւնը. «Անցեալ տարիները վաճառում»...

Մենք որ վան անունը լսեցինք, հասկացանք, որ հետաքրքրական պատմութիւն էր անելու: — «Բահրի փաշային ճանապարհ էին ձգում դէպի Արկամարոյ վանքը: Փաշան նստած էր կառքի մէջ: Մենք՝ պաշտօնեաներս առաջնորդում էինք նրան: Երա յետեւից զալիս էր երեք բէսիլեք սովալրի դիւնը: Գիւռ յետացած հայոց Ձարի Անզղ զիւղը, տեսնեմ՝ մի բարձրահասակ, լայն թիկունքով, սև երիտասարդ, նստած մի անմտան սպիտակ ձիու վրա, վրան արծաթապատ խանջալ, դարադաղի 150-բանտանեկի և 150-ի շափ փամփուլու: Ձին կատաղի կերպով քրում էր մեր առջևից: Երբ մենք արդէն մտեցել էինք Անզղ դեմին, երիտասարդը անցաւ միւս կողմը, և տեսնեմ՝ երբեմն ձեռքը տանում է դէպի սուրը, Լերբեմն՝ դէպի արտընանիկ, ուղղում է իրան և շարունակ մեր կողմն է նայում: Ես կասկածում էի. թէ՛ն հազուադէպ քրդական էր, բայց չէի կարծում, որ քերթ է, այլ հայ. քերթը չէր կարող մեզ մտնելու աղպիսի համարձակութեամբ: Անցանք դետը, շարունակեցինք ճանապարհը և մտեցանք Ոստան գաւառին: Թշտունեաց երկրի լեռնու կիրճերով էինք անցնում. տեսնեմ՝ այդ երիտասարդը ցած իջաւ ձիուց և բարձրացաւ աւելի ամուր կիրճի մէջ: Ես սկսեցի կասկածել՝ շինի՞՞ դաւ է պարտատուած քերթը ցեղապետների կողմից: Տեսնելով երիտասարդի կասկածելի շարժմունքը՝ կարգադրեցի սովալրիներին խկոյն բռնել նրան: Սովալրիները յարձակեցին երիտասարդի վրա, նա իրեն պաշտպանում էր արտընանիկով: Բայց տեսնելով, որ երկար չի կարող դիմանալ, սկսեց պոռալ. «Աստծոյ սիրուն, ինձ մի սպանե՛ք, ես չայ եմ»: Երբ հայի անունը լսեցինք, շատ կարճացանք. շինի՞՞ թէ կիրճերում ջան-Ֆիրդայիներ են պահած: Փաշան կանգնեցրեց կառքը: Բռնեցին երիտասարդին և բերինք փաշայի առջը: Փաշան հարցրեց. «Օղլում, ի՞նչ ազդեց ես»: «Փաշա-էֆենդի, հայ ջան-Ֆիրդայի եմ», պատասխանեց երիտասարդը: «Ջան-Ֆիրդայի՛ անունը լսելով՝ ամենքս էլ արարափեցինք: Փաշան հրամայեց խուզարկել վրան: Խուզարկեցինք, բայց, բացի զէնքերից, ուրիշ բան չգտանք: Այն ժամանակ փաշան հարցրեց. «Օղլու, քեզ ո՞վ ուղարկեց այստեղ, ի՞նչ նպատակով, ո՞ր. ու ուր գնում»: Ջան-Ֆիրդային պատասխա-

նեց. «Փաշա-էֆենդի, ևս ջան-ֆիդայի ևմ. ինձ այս գէնքերը ասին և ուղարկեցին այս կիրճը, որ քեզ սպանեմ»։ Փաշան գործացած ասաց. «Օղլում, քա դու չվախեցա՞ր այսքան գորբի մօտ ինձ սպանել»։ Ջան-ֆիդային ասաց. «Փաշա-էֆենդի, ևս կեանքս նւիրել եմ ազգիս. պէտք է աշխատել, որպէսզի նպատակիս հասնէի։ Ձկարողացայ և անձնատուր եղայ. ինչ ուզում էք արէք»։ Փաշան գլուխը շարժեց և ասաց. «Օղլու, քեզ ո՞րտեղից ուղարկեցին և հրամանը ո՞վ տուա»։ Ջան-ֆիդային պատասխանեց. «Փաշա-էֆենդի, ինձ ուղարկեց Վանի Կոմիտէն, իսկ հրամանը՝ եկել է ներսից՝ Մոսկովի կողմից»։ Փաշան հրամայեց անմիջապէս կապել ջան-ֆիդայի ոտներն ու ձեռները և նստեցնել ձիու վրա։ Հրամանը կատարեցին, և վերադարձանք Վան։ Բահրի փաշային հրաման եկաւ, թէ ազատ ես, ինչ վճիռ որ ցանկանաս, կարող ես տալ։ Առաւօտեան ժամը 5-ին փչեց շեփոը. երիտասարդին տարին մ'չ օր առաջ պատրաստած կախաղանի առաջ։ Քահանան հէնց որ տեսաւ երիտասարդին, ուշաթափւեց։ Մենք սիրտ տւինք քահանային. մօտեցաւ երիտասարդին, խոստովանեցրեց, հաղորդեց։ Ջան-ֆիդային ինքը

բարձրացաւ աթոռի վրա, պարտնր ձգեց վիզը և սկսեց խօսել. «Ես ջան-ֆիդայի եմ։ Իմ կախուքով՝ Բահրի փաշան թող չկարծի, թէ ազատուց ջան-ֆիդայինների գնդակներից. ինձ կր հետեւն շատերը... Ապա ոտքով հրեց աթոռը և երկու բոպէից յետոյ աւանդեց հողին...»*)

Հարիւրապետը այս պատմութիւնը վերջացնելուց յետոյ, հարցրեց թիւրքերին, թէ՞ արդեօք ձեր կողմի հայերի մէջ այդպիսի մարդիկ կա՞ն։ Թիւրքերը պատասխանեցին. «Ո՛չ, էֆենդի, մեր մօտի հայերը շատ հանգիստ են, ինչ որ կատարուած է, էրգրուած և վանում է կատարուած»։

Այսպէս վերջացաւ հարիւրապետի պատմութիւնը։ Ես գնաց վրանը քնելու. քնեցին և ձիապանները։ Ես ու Տիգրանը երկար խօսեցինք ու յետոյ մենք էլ քնեցինք։

*) Հարիւրապետի սյուսմութեան հերոսը վանեցի Մամուկ Շատարեանն էր, որին, 1893-ին, խիստ չարչարելուց յետոյ, կախաղան բարձրացրին։ Մամուկի հայրը և մեծ եղբայրը մեռան բանտում։

ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՒԱԼԻԱՆՈՒ ԱՅԱԲԵԿՈՒՄԸ

Գանձակի գաւառապետ Աւարեանին, ազգով վրացի, որպէս ցարական ոստիկանական պաշտօնեայ, իր պաշտօնավարութեան երկար տարիների ընթացքում, ՅՅից աւելի յայտնի փոխատանայինների սպանել էր տեւ մարդասպանների և զոդերի միջոցով՝ ի գին որեւէ վարձատրութեան։

Այս խորանանկ բորենին բացարձակօրէն չէր հաւածում, չէր աշխատում ձերբակալել իր զոհերին, այլ դաւադրօրէն շեղբացնում էր նրանց շատ աժան զնոյ։ Եւրամէի աւարեկութից յետոյ, ցարական ոստիկանութիւնը անկարող լինելով մեր աչքի ընկեր ընկերներին ձերբակալել, 1907 թւի աշնանը, գաւառապետ Աւարեանին ասպարէզ եկաւ իր դաւադրական ծրագրերով։ Գաւառացի մեր աչքի ընկած մարտիկ ընկերներից ու մանր, ապրելով քաղաքում, իրենց անձնական գործերով, երբեմն երթնակում էին իրենց գիւղերը։ Նրանց սպանելու համար գաւառապետ Աւարեանին դադտնի հրահանգել էր թուրք յայտնի զոդերի և աւարակների։ Եւ 1907 թւի աշնանը առաջին զոհը եղաւ մեր մարտիկ ընկերներից Բանանցեցի Մուքէլը (Միքայէլ Մանուշակեան)։ Դժբախտ երիտասարդը, իր համագիւղացի ընկեր Ջաքարի հետ միասին ոտքով Բանանց գիւղը

զնայու ժամանակ, Թօփալ-Հասանլու թրքական զիւղի մօտ, նոյն գիւղի մի խումբ յայտնի աւագակների կողմից յարձակման են ենթարկուած և դարձնակալ աւագակների համագրակից ընկ. Մուքէլը սպանուած է, իսկ Ջաքարը մի կերպ փախչում ազատուած է։

Ընկեր Մուքէլի սպանութիւնը, ճիշտ այն ժամանակ, երբ գնում էր իր հայրենի գիւղը իր սիրածի հետ նշանելու, մեր ընկերների վրա ցնցող տպաւորութիւն թողեց։ Եւ այս պատճառով, հակառակ կոտորակական ստատիկ հայածանքին, Մուքէլի գիւղը տեղափոխելով Գանձակ, իրաւաւոր թաղում կատարուեց։ Ընկ. Մուքէլի զապալի տուալ մի յեղափոխական դաւաճակական խօսեց ընկերուհի օր. Մանիա Պապլեանը (վերջերը տիկ. Ենգիլարեան), որ 1918 թւի Վանի նահանջին համաձայնակի զոհ գնաց Պարսկաստանում։

Բանանցը տեւ է բաւական թւով մտաւորական և մարտիկ ընկերներ, որոնց թւում Մուքէլը, Մուսին (Միքայէլ Բաղայեան) և «զհօլի» Գրիգորը մի երրորդութիւն էին կազմում։ Երեքն էլ միասին աւարտել էին ուսական գիւտարական ծառայութիւնը, մէկ խմբի մէջ մասնակցել հայ-թրքական ընդհարումներին Զրաբերդի (Գիւլիստանի) շրջանում և ապա կոլեւերից յետ-

տոյ Գանձակում գրադելով իրենց արհեստովը (որմնադիր), գործօն մասնակցութիւն են ունեցել կարգուկարգական աշխատանքներում :

Այս Վրոյրդութիւնից ընկ. Մուխին զոհեց Լօյւմսթի անարեկման ժամանակ, Մուքելը ուսն կառավարութեան դաւադրութեան զոհ զնաց թուրք աւաղակներ ձեռքով, Գրիգորն էլ մեծ պատերազմին մասնակցելով Լամարասայի կամաւորական զնդում, 1914թ. նոյեմբերին Բասէնի դաշտում զոհեց իր համազօրացիքի և մեր մարտիկ ընկ. Մուրէնի հետ :

Գաւառապետ Աւայիանու դաւադրութեան զոհ զնաց մեր մի ուրիշ մարտիկ ընկերը՝ Ջոււշուզը : 1908թ. յունւարին, իր համազօրացի ընկեր Մուխինի (Միքայէլ Օհանջանեան) հետ իրենց ծննդավայր Դարազաղլու գիւղից ոտքով քաղաք վերադառնալիս, յարձակում են ենթարկուում թուրք Մօլլա-Բաղլուի յայտնի աւազակներին կողմից, զէպի Գանձակ տանող ճանապարհի վրա, և սպանուում է ընկ. Ջոււշուզը : Իսկ ընկ. Մուխին, շնորհիւ իր քաջագործութեան և պաղարիւնութեան մեն-մենակ մի քանի ժամ շարունակ կուում է տասնակ թուրքերի դէմ, մինչև որ վրա է հասնում գաւառական ոստիկանութիւնը, Աւայիանու զխաւորութեամբ և մի հարուրեակ կողակներով ու ձերբակալելով Գանձակի բանտն են առաջնորդում :

Ընկ. Ջոււշուզն էր, որ մեն-մենակ, Գեորգան կոչւած կայարանի ճամբին, վերջ տեց երկու հայ մատնիչներին կենսքին, որոնք հայ-թրքական ընդհարումներինց զինուոր էին և սպա նախաձեռնելով մեզ, անցան թրքական քաղաքամասը և պատուհաս դարձան մի գլխին :

Շնորհիւ Աւայիանու սարքած հրէշային դաւադրութեան, մենք կարցրինք երկու լուսազոյն մարտիկ ընկերներ և այս պատճառով Ալլեխտանի Կ. Կոմիտէն որոշեց պատժել ոչ թէ թուրք աւազակներին, այլ դաւադրութեան բուն հեղինակ գաւառապետ Աւայիանուն և անարեկման կազմակերպումը յանձնեց դարձեալ ընկ. Նիկոյին : 1908 թ. մարտ ամսի մի երեկոյ, երբ որ Աւայիանին քաղաքային սկումբից վերադառնում էր իր բնակարանը, Գանձակեցի անարեկիշ ընկեր Վաղօի մառդէրի շեշտակի հարւածների տակ ստացաւ իր արժանի պատիժը :

Թէև Աւայիանին խփեց հայկական և թրքական քաղաքամասերը իրարից բաժանող միակ կամուրջից զէպի թրքական քաղաքամասը տանող զլիւսաւոր փողոցի վրա, բայց և այնպէս ոստիկանութիւնը զէպի վայրում ձերբակալեց մի քանի Հայերի միայն, որոնց թոււմ նաև մեր երկու ուսանող ընկերներին, որոնք Աւայիանուն լրտեսելու համար գրօնուում էին այդ փո-

ղոցի վրա : Բայց մի ժամից յետոյ մերոնց արձակեցին : Բանտարկւեցին կամբջով անցնող քաղաքային շուկայի հակիշ Մովսէս Բարաշեանը և յայտնի հակադաշակցական Լեոն Բէկ Մելիք-Մնացականեանը : Այս երկուսին մի քանի ամիս բանտում պահելուց յետոյ, նահանգապետը աքսորեց երեքական տարով զէպի Ռուսաստանի ներքին նահանգները :

Ապա ոստիկանութիւնը ձերբակալեց Գանձակի գաւառի Բաղա գիւղացի Յարութիւն տնտեսով մի անմեկ մարդու, որ կամուրջի վրա հին հողուտի սուտորով էր գրադուում :

Կառավարութիւնը իբրև իսկական յանցաւորի որևէ հայի պատժած ինչևէր համար, զինուորական դատարանում Յարութիւնի դէմ որպէս վկայ, կաշտուքի միջոցով դուրս բերեց մի թուրք լալտուի, որի շինծու ցուցմունքի հիման վրա դատարանը Յարութիւնին մահան դատապարտեց : Այս պարզ հայ շինականը բանտից լուր էր զրկել, որ ինքը գիտէ թէ ովքեր են Աւայիանու անարեկման հեղինակները, բայց և այնպէս իրեն համար պատիւ է գաղափարի սիրոյն զոհել : Եւ իսկպէս յեղախրիսականին յատուկ պաղարիւնութեամբ կախազանի վրա փռեց իր վերջին շունչը :

Աւայիանու անարեկումից մի քանի օր առաջ, կամբջի վրա սպանուում է շրջանային դատարանի գատարագը (ռուս) : Սպանողը թուրք է լինում, որը խփուուց յետոյ անյայտանում է :

Թուրքերի Նէվրուզի օտիւ առթիւ սարքած ճաշկերոյթում, Գանձակի նահանգապետ, տխրահոշակ Կովալովը սեղանակից թուրքերին կշտամբում է ուսն դատախազին սպանելու համար : Թուրք երեւելիները նահանգապետին ուզում են հաւատացնել, որ իրենք ցարի հաւատարմի նպատակներն են և որ դատախազին էլ Հայերը սպանած կը լինեն :

Նահանգապետը պատասխանում է, որ դատախազը սպանւած է փոքրիկ բուլղոցի սարճանկով, օւրմն թուրք է սպանողը, իսկ Աւայիանին հայ-դաշակներն են սպանել, որովհետև ստորհարածան մաուզելով է սպանւած :

Աւայիանու հակայ գիակի համար հաջիւ կարելի եղաւ մի հայի արհեստաստում 20-25 տարի առաջ լինւած մի անտօր մեծուիթեամբ դազաղ գտնել և գիակը փոխադրել Վրաստան : Լօյւմսթի և Աւայիանու գիակներին փոխադրութեան և թաղման, ինչպէս նաև Լօյւմսթի կառապանի և իր մէկ ձիւ վէրքերը բուժելու և վնասուած կառքի նորոգութեան բոլոր ծախքերը՝ ընդամէնը 8.122թ. 33 կոպ. կառավարութիւնը բոնի գանձեց Գանձակի Հայերից :

ԲենՕ

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Ե Ո Ւ Ր Զ

Անցեալ դեկտեմբերի տաղանային յետոյ, երբ անգլիական ոսկին արնթաց բարձրացաւ 1110 դրուչի, ծանր մտահոգութեան մատնելով Թիւրքիոյ վարիչները, ահաւասիկ երկրորդ և շատ աւելի վրդովիչ կացութիւն մը,— Քէմալայետութիւնը չի կրնար վճարել իր արտաքին պարտքերը: Մանաւանդ այն, որ կը կոչուի Հանրային Պարտք՝ 1875էն ի վեր:

Այս կացութիւնը դադանիք մը չէր արգէն: Բայց լուրը պատահարաւ մէջտեղ ելաւ փետրուարի սկիզբը, երբ Լոնտոնի Թերթերը գրեցին թէ Թիւրքիա պայմանաժամ պիտի խնդրէ օտար պահանջատէրերէն: Թիւրք Թերթերը փորձեցին հերքել այս ծանրակշիռ տեղեկութիւնը: Սակայն, լրատուները պնդեցին, և փետրուար 6ին արդէն Թրքական Թուղթերը ծանր անկում կը կրէին Փարիզի սակարանին մէջ: Այնուհետև, Թիւրք մամուլը յուշիկ-յուշիկ խոստովանեցաւ իրականութիւնը:

Լուրը ոչ միայն ճիշտ էր, այլ և ճշմարտութեան մէկ մասը միայն կը յայտնէր:

Արդարև, ջեմալական իշխանութիւնը գիշերը ցերեկին խառնած, ճար կը փնտռէր Թրքական դրամը նոր աղէտէ մը փրկելու համար: Նոյնիսկ սեղանի վրայ դրած էր նոր փոխառութեան մը խնդիրը, և խալապկան դրամատուն մը առտուն կանոնա օգնութեան կը փութար, մէկ միլիոն ստերլին տրամադրելով մէկ տարւան համար (7½ տոկոսով), և մինչև հինգ միլիոնի բարձրացնելու յօտարութեամբ: Խորհրդային իշխանութիւնն ալ, միշտ հաւատարիմ ուղեկից և գինախից, 1,600,000 տուր կը յանձնէր, իբրև փոխարժէք մէկ տարւան մէջ գնելիք պարտաճնուր:

Ամէրը չլրացած, արդէն պարզեցան տաղանային բոլոր ծախքերը:

Թիւրքիա, հազիւ փրկած իր ոսկին, կը ստիպուի անգլիական ոսկի գնել անցեալ յունւարին, օսմանեան Հանրային Պարտքի 1930 մայիս 31ի կտրոնները վճարելու համար: Բայց անմիջապէս կը հաշտէ որ, եթէ այդպէս շարունակէ, ոչ միայն դրամը պիտի ցնցուի, այլ և երկիրը շարաշար պիտի տուժէ տնտեսապէս: Մանաւանդ որ, այս տարի վճարելի մասնավճարը 1929ի դրամական աւելի է: (Անցեալ տարի կը հաշտէր 1,400,000 ստերլին):

Օտար բաժնետէրերը անշուշտ հաճութեամբ չլսեցին այս լուրերը: Եթէ հեռագրէր թէ Պոլսոյ ջրիտ-տունաները ջարդուած են, թերևս այնքան իրար շանցանէին, որքան եղան «ժողովորդիմոջ» լուրին առթիւ: Եւ ինչո՞ւ գարմանալ, իբր գլխենք, որ նոյն դասակարգէն մարդիկ, դարձեալ առնչութեամբ վէճի մը առթիւ, մարտանաւ դրկել և Միտիլին գրաւել աւելի 900ական թւականներուն, մինչ Ստունը կը ջարդէր:

և Հանգուցեալ ընկերվարական երեսփոխան Սանպա կը հարցնէր, անգոր վրդովումով.

— Et l'Arménie ? (Իսկ Հայաստանը...):

Այս անգամ ալ, հեռագրական փոխասացութիւնէ մը յետոյ, Հանրային Պարտքի վարչութիւնը անմիջապէս պատուիրակներ ճամբայ հանեց դէպի Թիւրքիա, տեղին վրա բանակցելու համար: Թիւրք մամուլը այլ և մէջտեղ դրած է բոլոր խաղաթուղթերը և կը փորձէ համոզել թէ՛ օտար բաժնետէրերուն շահն իսկ կը պահանջէ, որ հաւանին «մորաթորիմոջին»: Ի՞նչ պիտի շահիք եթէ Թիւրքիան տնտեսապէս կործանի, — կրեսն Թիւրք հրապարակագիրները: Մինչդեռ եթէ համբերէք և օղնէք մեր դրամին բարձրացման և մեր կացութեան բարելոման, դուք այլ կը շահիք, մենք ալ: Ամենէն բարեացակամ հաւաստիքին հետ, թաքուն սպառնալիքն ալ պակաս չէ: Պոլսոյ «Փոլիթիքա» (Թիւրքերէն) Թերթը դիտել կուտայ.

— «Ազգային դրամին անկումը արգիլել» վեր է աւելն բանէ: Եթէ այս տեսակ վտանգ մը հաւանական ըլլայ, անկասկած պիտի յետաձգեմ մեր պարտքերուն մէկ մասին վճարումը: Ասիկա թէ իրաւունք մըն է և թէ պարտականութիւն մը: Բայց եթէ ասիկա չընենք, բաժնետէրերը ապագային պիտի չկրնան ո՞րևէ բան առնել: Տարին 15-20 միլիոն սոսի վճարել, այն ալ օտար դրամի վերածելով, կը կոտրէ մեր դրամին արժէքը: Եթէ դրամատէրերը հաշուով և տրամաբանութեամբ շարժին, նորէն իրենք շահաւոր պիտի ըլլան: Սպառնալիքով, հրատարակութեամբ, աղմուկով կարելի է քայքայել այսպիսի գործ մը: Որովհետև, Թիւրքիոյ համար ինչիրէ՛ր աճին բանէ առաջ, ազգային դրամի պահպանման և հետևաբար երկրին գոյութեան հարցն է:

Տագնապին ծանրութիւնը հաստատելու համար, կը բաւէ յիշել որ, փետրուար 20ին, գործավարներու խորհուրդը արտակարգ ժողով մը գումարեց և տասը ժամ անընդհատ խորհրդակցեցաւ: Այս տաղանային ծագումէն ի վեր, գիշերը ցերեկին խառնած են ինկուրիի վարիչները, և իբրև դրաման, նախ պատմական միջոցներ կը ձեւակերպէին: Այսպէս, որոշուած է երեք ամիսէն հինգ տարի բանտարկութեան դատապարտել այն միջնորդները, որոնք օտար դրամի շարաշահութեամբ կը զբաղին: Մինչև հարիւր հազար ոսկի սուգանքի պիտի դատապարտուին նաև այն դրամատունները, որոնք նոյն յանցանքին մէջ կը բռնուին: Ի հարկին պիտի փակուին այդպիսի դրամատունները: Այս օրինադիւր Ազգ. Մեծ Ժողովին առջև պաշտպանած ատեն, վարչապետ Ըն-մէթ փաշա բացորոշապէս յայտարարեց, որ եթէ հարկ ըլլայ նոյնութեամբ դործադրել Հանրային Պարտքի

Համաձայնութեան պայմանները, պիտի վտանգել երկրին ապագան:

Բայց, ի՞նչ հիմնական միջոցներ կը խորհին, այդ ապագան փրկելու համար: Տուրքերու տեսակ չէ մնացած արդէն: Պաշտօնական, գլխաւոր տուրքերու քանակը տասնէն աւելի է: Եւ այդ ծանրութեան տակ ոչ միայն մեծ քաղաքներու վաճառականը կը բած է, այլ և Անատոլիի գիւղացին: Չեն կրնար, նաև, նոր թրք-թաղում տպել: Այդպիսի փորձ մը դէպի կործանում պիտի տանէր երկիրը: Առ այժմ դիմած են Օսմ. Դրամատան, զոր՝ ջշի կողմէն քանի մը տարի առաջ, և միւս կողմէն կը խորհին դրամատուն մը բանալ, ոչ տայ ազդային տնտեսութեան և ճարտարագործութեան: Ինչ որ կը նշանակէ ահլը լայն բանիլ օտար դրամագլուխ տոջէ: Եւ խոստովարար սպայիտիլ օտար մենաշնորհներու աջակցութեան: Իտալական փոխտուրքիւնը՝ յատկապէս մըն է, տակաւին: Արդէն բանակցութեան մէջ են անգլիական խմբակի մը հետ, Պորտի անտոնները վարձու տալու համար: Բայց աւելի ուշադրաւ է իտալական աջակցութիւնը: Թիւրքերոյ ներքին գործերու նախկին նախարարն է, որ կը գրէ Փարիզի թիւրք ընդդէմագիր օրկանին մէջ.

— «Համաձայն մեր ստալզ տեղեկութեանց, Բեմալական կառավարութեան իմրտացողը 50 միլիոն ոսկի բաց ունի: Այս բայց գոցելու համար կարելի չէ նոր տուրքեր դնել ժողովարդին վրա, և պետական մեծաշնորհի բոլոր մեծարկները չեն կրնար բաւել պետքերուն: Հարկ էր աւելն գտնիլ եւ մը գտնիլ այս կորստաբեր կցարքեան: Յրամայնէ փոխ առնել՝ անկարելի էր, քանի որ այնքան չկամաթիւն ցոյց տուի վճարելու համար հին պահանջները երկրի մը, որ Թիւրքիոյ արտաքին պարսէրու 84% ին տեղն է. նայպետ՝ կարելի չէր ստանալ Անգլիայէն, որ արդէն 10% կը պահանջէ: Կար միայն մէկ յոյս — դիմել Իտալիոյ բարեխառութեան, մնամանդ որ երկու վարչաձևերուն մնամութիւնն ալ ակնբեր է: Դիւրացնելու համար Փոքր Ասիոյ խաղաղ թափանցման դիւանագիտական աշխատանքը (որ ներքաղծում է 1928 ի իտալեթիւրքի համաձայնութեան անդիմի հատուծներով), պետք է որ Իտալիան սիրալիք ըլլայ Թիւրքիոյ հետ: Եւ սեա հետազոյրները կը ծանուցանեն թէ Պամէա Քամէրչիալէ Իթալիան 1 միլիոն տետրիլի կանխավճար մը բրած է»: (Մ. Ալի, La République Enehaïne, 22 փետր. 1930):

Արդ, ի՞նչ բանի պիտի ծառայէ իտալական մէկ միլիոն տետրիլը: Նոյնիսկ հինգը:

Եթէ իտալացիները ամբողջութեամբ տրամադրեն այս վերջին գումարը, 50 միլիոն թիւրքական ոսկի, պարզապէս ելմտացոյցին այս տարւան բաց գոցած պիտի ըլլան, յառաջիկայ ելմտացոյցին մէջ աւելի խոշոր բաց մը ձգելու համար, տոկոսով մէկտեղ: (Լուրի մը համաձայն, իտալական դրամատունը, իբրև երաշխաւորութիւն, մէկ տետրիլին փոխարէն պիտի ստանայ տարւ թրքական ոսկի, որուն վրա պիտի վայելէ տարեկան 5% գեղջ մը...):

Ըստէ՞ք փաշա կը խորհի 15 միլիոն ոսկի արձանագրել նոր ելմտացոյցին մէջ, ազդային տնտեսութեան և ճարտարագործութեան զարգացման համար:

Վկայութեան կանչեք, նորէն, Թիւրքը Թիւրքին

դէմ: Այս անգամ ոչ թէ 150 ի ցանկէն, այլ թունդ թէմալական շքախումբէ մը:

Նճմէտտին Սաարզ, խմբագրապետ «Աղշամ» և երեսփոխան Սըվապի, որ լայնօրէն ծանօթ է երկրին տնտեսական պայմաններուն, կողորջ փետր. 11 ի խմբագրականով.

— «Թիւրքիոյ բնակչութեան թիւն է 13% միլիոն: Վերջին մարդահամարին համաձայն, այս թիւին ինը միլիոնէն աւելին, այսինքն 70%ը հոգաբար է: Արհեստարներու և բանարներու թիւը, Անտոլի մէկ «գասապա»ի բնակչութենէն աւելի է: 1928ին, մեր արտաձումներու գումարն էր 173 միլիոն ոսկի: Ասոր 10-15% ը միայն նարտարագործական արտադրութիւն է. մնացածը հոգաբարծական բերք է: Մեր երկիրը երբէք նարտարարեստի երկիր մը չէ. և տակաւին երկար տարիներ ալ չպիտի ըլլայ: Հարտարարեստի կեդրոն քաղաքները պետք է առնալն կէս միլիոն բնակիչ ունենան: Մեր երկրին մէջ, Պոլսէն գառ այդպիսի քաղաքներ չկան:

«Մեր երկրագործութեան վիճակը շատ նախնական և ցաւալի է: Թիւրքիոյ տարածութիւնն է 762,000 քառ. փուլմետր: Այս տարածութեան 25,000ը միայն կը ցանի: Երազայի մէջ չկայ այսքան քիչ ցանած երկիր: Ասոր պատճառն է նախ մեր բնակչութեան նւազութիւնը և յետոյ հոգաբարծութեան նախնական վիճակը: Թիւրքիոյ մէջ կայ 1.750,000 հոգաբարծ ընտանիք: Ցանած հողին հետ քաղաքատեղով, իւրաքանչիւր ընտանիքի երեք արտադրող հող կ'իյնայ: Հոգաբարծական մեքենաներու թիւն է 15,711: Ուրեմն, հարիւր տաս հողագործ ընտանիքին հազու մէկ մեքենայ կ'իյնայ: Բուն մեքենաները մէկդի դնելով, հոգաբարծական գործիներու թիւն է 1,431,000: Ընդհանուր առումով երկրագործական գործիչ ըստ առարկաներէն իւրաքանչիւր ընտանիքի մէկ հատ անդէմ չ'իյնայ»:

Ի՞նչ է, իրականին մէջ, բուն տագնապին աղբիւրը, — Թիւրքերու հանրային Պարտքը:

Տարիներու զեղծողները, մտածները, անհաշիւ փոխառութիւններն ու պատերազմները Օսմ. կայսրութեանը վերածեր էին զարհուրելի սնանկութեան մը: Այն աստիճան որ, 1875 ին, պարտքին տոկոսները և յարակից ծախքերը կանչեցին սովորական հատոյթներուն երեք չորրորդը: Հարկ եղաւ ընդհատել վճարումները, և Պերլինի վեհաժողովէն յետոյ, պայմանագիր մը կնքել օսմանեան փոխառութեանց տէրերուն հետ: Այս համաձայնութիւնը հաստատուեցաւ 1881 ղեկով: 20 ի կայսերական հրովարտակով: Նոր պայմանագրին համաձայն, օսմանեան արտաքին փոխառութեանց զբաժաւորը կը վերածէր իրենց շրջաբերութեան միջին սակին, 10% աւելցնելով անվճար տոկոսներուն համար: Այս առթիւ կը հաստատուէր «Օսմանեան Հանրային Պարտքի Վարչութիւնը» և պետութիւնը «բացարձակ և անդառնալի» կերպով, մինչև պարտքերուն ամբողջական վճարումը, անոր կը յանձնէր շարք մը հատոյթներ: — ծխախոտի, աղի, մաքսատան, ձուկի, գրոշմաթուղթի ևն. տուրքեր:

Այնուհետև արդէ պարտքեր ալ կնքեցան ու թէն

Թիւրքիոյ վարկը վերահաստատուեցաւ մինչև մէկ տոնիան, բայց երկիրը մնաց տնտեսապէս զերի: 1914-ին, օսմանեան արտաքին պարտքին դումարը կը հասնէր 160 միլիոն թրքական ոսկի (3¼ միլիոն Փր.): Պատերազմէն յետոյ, զեղչելով Թիւրքիայէն անջատուած երկիրներու բաժինը, Թիւրքիոյ տարեկան պարտքը կրլլար վեց ու կէս միլիոն թրք. ոսկեղրամ կամ 65 միլիոն Փրանք թղթադրամ: (Յիշեցէք որ պետութեան Լրմտադոյցը 200-220 միլիոն ոսկի է):

Երկար և տածանելի բանակցութիւններէ յետոյ, 1928 յունիս 13ին համաձայութիւն մը գոյացաւ Փարիզի մէջ, թրքական ղեկավարին՝ Տիթի պէյի և օտար պահանջատէրներուն միջև: Կնքուած պայմանագրին համաձայն, Թիւրքիան 1918-1926 պիտի վճարէր տարե-

կան 2 միլիոն ոսկի (օսկեղրամ), 1926-1942 տարեկան՝ 2,380,000 ոսկի, 1942-1947 տարեկան՝ 2,700,000 ոսկի, 1947-1952 տարեկան՝ 3,180,000, իսկ 1952էն յետոյ՝ տարեկան 3,400,000 ոսկի: Իրրէ երաշխաւորութիւն, ուղղակի Օսմ. Դրամատունը պիտի յանձնուին մաքսատան խառն հասոյթները, մօտ ± 380,000 ոսկի (օսկեղրամ), օտար դրամի վերածելով: Բացարիկ պարտքներու մէջ, Լիթ թրքական դրամը ինչոյս — ինչպէս ներկայիս — կարելի է առամապէս դազրեցնել օտար դրամի գումար, բայց նորէն Օսմ. Դրամատան յանձնել երաշխաւորութեանց հասոյթները; տեղական դրամով: Այս վերջին գործողութիւնը նոյնքան ծանր է Թիւրքիոյ համար:

« ՀԱՄԱՏԱՐԱԾ » Ը ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մանազխտական է բացատրութիւնը — «Համատարած»: Մնած՝ հաւաքական տնտեսութեան կարգախօսէն և անմիջապէս գոյականի վերածուած, — «Երեւան գաւառի համատարած կոլեկտիւացումը»: «Համատարածը Լենինականում»: «Կեցցէ՛հ համատարածի նաճումները»: (կոորդային Հայաստան):

Հլու հնազանդ՝ Մոսկուայէն արձակուած և թութակար թարգմանած ռուբաղներուն, նոյնիսկ երկու քալլ ալ յառաջ նետուելով, Երևանը իր արտիստ սայլը կապած է Երկրի ճարտարարեստացման և հողագործութեան համայնացման հսկայ շարժանիւրի: Արդէն զարհուրելի ազմուկ մը բռնած է հրապարակը, շնորհալից նշանխօսքերով, և լեռնակուտակ թւանշաններով, որոնք իրենց «Նէքլամ»ին ճիշտ հակառակը կապացուցանեն:

Հետևիք իրենց խօսքին ու գործին, սկելով մեծադճորդ նախատեսակներէն: Տօները, ստէն տեղ ալ արբուած են միևնոյն կաղապարին վրա, բայց յոտկապէս ուշադրութիւն կը դրանք մեր դժբախտ հայրենիքին մէջ, իրրէ կենդանի շարժանկար յիզափոխական մտքի համատարած թլառութեան:

1930 փետրուար 10.— Մեծ տօն Հայաստանի մայրաքաղաքին մէջ:

«Երևանի կրկէսը երրեք չէր տեսել այս տեսակ հասարակութիւն: Կոլեկտիւացած գաւառն էր հաւաքուել ախտեղ, բնաւորական ջուկանների ներկայացուցիչների հետ միասին: Կոլեկտիւացման (համայնացում) մարտիկներն եկել էին հաշիւ տալու իրենց յաղթանակներին և նաճումների մասին և ղեկավար շարքից նոր հրահանգներ ստանալու յետագայ մարտերի և գրոհների համարը: («Ս. Հ.» 12 փետր.):

Եւ, ողջոյն: Առաջինը՝ Անդրկովկասի Երկրային

Կոմիտէի քարտուզար, պարզ հայերէնով՝ Կովկասի նոր փոխաբքայ Կրինիցիկի կողմէ: Ի հարկէ, շերմ ողջոյն՝ «կոլտոգային շարժման առաջաւոր ջուկանին, Երևանի գաւառի կոլտոգիկներին»: (Կոլտոգ — հաւաքական տնտեսութիւն. կոլտոգիկ՝ հաւաքական տնտեսութեան անդամներ):

Այդ օրը կը բացէր Երևանի գաւառի կոլտոգիկներու անդրանիկ համալուծարը, և առաջին խօսքը, յանուն Լենինի, արտասանեց ծանօթ սարկաւազը, և Հայաստանի խորհրդային առաջին կառավարութեան տիտուր հերոսը, Ս. Կասեան: «Ընկեր Լենինն ասում էր որ...» — «Մենք էլ կազմակերպեցինք խորհրդային տնտեսութիւններ (սպլոտո) և սկսեցինք զարկ տալ արտադրական միջոցների, արակտորների և գիւղատնտեսական այլ մեքենաների արտադրութեանը, որով ստեղծեցինք այն խարխիւր որ հնարաւորութիւն ստեղծեց գիւղի կրեկտիւացման հողը շարժմանը»:

Երեկ Ս. Կասեան «Սորհրդային Հայաստան» չի կարդար, այլապէս պիտի գրուշանար յաղթան համարձակ յայտարարութիւններէ: Ի՞նչպէս կըցեր են զգարկ տալ՝ գիւղատնտեսական մեքենաներու արտադրութեան և մանաւանդ «խարխիւս» ստեղծել, երբ Երևանի պաշտօնաթերթը ինք, ռուսամասիրութեան մը կարգին, կը շարէ հետեւել խեղճուկակ թւանշանները, այն պէշտ լաւատես հաշիւներով:

«1927-28 և 1928-29 թւերին Սորհրդային Հայաստան ներմուծած գիւղատնտեսական գլխաւոր մեքենաների պատկերը հետեւեալն է — գրութան՝ 1850 և 3500 հատ, նրակոտր (մեքենաշարժ) 15 և 25 հատ, փոցի՝ 132 և 900, շարքացան՝ 165 և 476, քամհար մեքենայ՝ 300 և 650, գորիչ մեքենայ՝ 70 և 140: Ընդամէնը 27-28 թւին ներմուծուած է 40,000 բուրլու, իսկ

28 - 29 թւին՝ 828,000 բուրբու գիւղատնտեսական մեքենայ: («Ն. Հ.» 5 յունւար):

Բայց չարունակինք: Իր հոկտոբրական թափին մէջ, սարկաւազն ալ կունենայ յիշխոյթական պտոթկումները:

— Մենք ոչնչացնում ենք գիւղում մեր դասակարգային թշնամուն. հեռացնում ենք կուլակներին համատարած կոյիկտիվացման շրջաններից: Շատերը ցաւում են, տեսնելով իրանց թափած արցունքները: Այդ ընկերները թող յիշեն Մարտի խօսքերը, թէ մարդկութիւնը երբեք այնքան գոհեր չի տւել, ինչքան գոհեր է խլել կապիտալիզմը գիւղում: Եթէ կապիտալիզմը միխոններն աչքերից պարտւեմ է խլել գիւղում, թող այժմ էլ մի քանի տասնեակ կուլակների արցունքը քափի: դրանց չպիտի խղձախ:

Լսենք, նաև, երիտասարդ Ա. Խանջեանը, աւելի վառվառն և շատախօս:

— Մենք վերջնական յարգանակը չենք կարող տանել, եթէ չվերջանենք այն անդունդը, որ դարեր շարունակ գոյութիւն է ունեցել քաղաքի և գիւղի միջև, եթէ գիւղում չաջնացւեն կապիտալիզմի բոլոր արմատները: Համատարած կուլիկտիվացումը՝ դա նշանակում է վնասական շրջադարձ մեր գիւղական աղջ քաղաքականութեան մէջ: դա նշանակում է մեր ամենաոյսերիւմ թշնամու՝ կուլակ դասակարգի վերացումը գիւղում: Մենք խնդիր ենք դնում համատարած կուլիկտիվացման շրջաններում կուլակութիւնը վերացնել իրքև դասակարգ: կուլակը խորհրդային իշխանութեան, բաճուր դասակարգի, սոցիալիզմի ոյսերիւմ թշնամին է: Ահա սոցիալիզմի յարթական ճանապարհին կանգնած այդ վերջին պատնէշն է, որ ոչնչանում է այսօր հէնց իրենց, գիւղացիների շեշտակի հարածներիով: Երևանի գաւառը իրաւամբ կարող է համարուել և՛ Հայաստանի կոլտոշինարարութեան հիմնական ամրագրը:

Արդար ըլլալու համար, չնչոնք որ երկու ճառասոսնեան ալ չեն ծածկեր իրենց մտահոգութիւնը՝ վաղւան համար: Հաւաքական տնտեսութեան հիմքերը դրած են. բայց, անոնք որ կը կարծեն թէ ամէն ինչ կգած վերջնացած է, չարտակալ կը սխալին: «Եթէ կոլտոշիների թէկուզ ամենափոքր մասը կանգնի այդ տեսակետի վրա, դա մեզ նորանոր վտանգների առաջ կը դնի: Համատարած կոլիկտիվացումը միայն այն ժամանակ նշանակութիւն կունենայ, երբ իր հետ կը բերի դիւղացիութեան քաղցւումը, ցանքերը ընդարձակումը, բերքի բարձրացումը, անասունների թւի աճումը, առատ գիւղատնտեսական մթերքներ: Առանց այդ վճռական բեկումն (?), համատարածը դատարկ հնչիւնի կը վերածուի»: (Ա. Խանջեան):

Բայց, ի՞նչպէս կ'ընթանայ «համատարած»ը:

Նոյն ժողովին մէջ, Աշտարակի շրջանի կոլտոշինի Նաւասարդեանը կը յայտնէ թէ իրենց շրջանը հաւաքական տնտեսութեան վերածուած է հարիւրին 94 համատարածութեամբ: 5050 տնտեսութիւններ լուծուած են հաւաքական տնտեսութեան մէջ: Սեփականագրված են 108 կուլակներու (ուճեւոր գիւղացի) տնտեսութիւններ, որոնցմէ խլած գորքերու արժէքը կը հասնի մէկ ու կէս միլիոնի: Գարձեալ, 44 կուլակային տնտեսութիւններ արտաքուստ են շրջանէն:

Ղուրտուղուլիի շրջանը համայնացած է հարիւրին 98: Կոտայքի ներկայացուցիչը յայտնած է թէ իրենք կը ձգտին ամբողջ շրջանը մէկ հաւաքական տնտեսութեան վերածել: Ղամարուի ներկայացուցիչը աւետած է թէ 130 կուլակներ վտարած են շրջանէն:

Սկզբնական հաշիւներով (9 յունւար), կը նախատեսէր, դարնանացանի ընթացքին, հաւաքական տնտեսութեան ենթակից Ներանի գաւառի ամբողջ տնտեսութիւններու (52,200) 59.4%ը, իսկ դաւառին է շրջանները, Ղուրտուղուլի, Վաղարշապատ, Հրազդան և Ղամարու 90%ով: Յետոյ, Աշտարակ և Մեղրին՝ 50%, Վեդին՝ 40%, Կոտայքը՝ 30%, Գարալազէպը՝ 20%, Թալինը՝ 10%:

Ինչպէս կերևի, կոլտոշինները աւելի եռանդուն գտնած են, քան ծրարողները: Բայց, գրույնները տաք են տակաւին, և հարկ է սպասել մինչև ապրիլ, վերջնական գաղափար կազմելու համար այս նոր գործին իրական արդիւնքին վրա:

* * *

Ընդհանրեց մասեղ, երևան հանելու համար ուրիշ պատկեր մը, որ կընայ մեզ լուսարանել նաև գաղթօրերու մասին:

Այս աւետարար լուրերն հրատարակող թերթին յաջորդ համարին մէջ, (վեհտուար 13), կը կարգանք Հայաստանի կառավարութեան գեկուցումը՝ ճարտարարչետագման Յրդ փոխտուութեան պարտաթուղթերու դետեղման, տուրքերու դանձման և ինայողութեան գործի մասին:

Անփառունակ ձախողանք՝ ամբողջ ճակատին վրա: Ամփոփենք գեկուցումը, որ շատ աւելի պերճախօս է.—

Յրդ փոխտարութեան պարտաթուղթերուն սպառումը գիւղացիներուն մէջ՝ եղած է շատ տկար, և կը կարգմէ հաստատուած սակին 56%ը միայն (Երևանի գաւառին մէջ՝ 44%):

Գիւղաքիւնի հաւաքումը եղած է բուսարար, իսկ անհատական հարկի արդիւնքը՝ թոյլ:

Ձրային տուրքի հաւաքման ընթացքը, մինչև 1930 յունւար 1, եղած է բոլորովին թոյլ (71%), առանձնապէս Լենինականի մէջ (39.9%):

Ինքնակարգման աշխատանքները եղած են շատ թոյլ: Նախատեսուած 650.000 բուրբին ձեւակերպուած է 181.698 բուրբի և դանձած է ընդամենը 27.590 բուրբ: Այս դումարներու մատակարարութեան վրա բոլորովին պակաս են անհրաժեշտ հակողութիւնն ու հաշտումը:

Նոյն թուութիւնը՝ ինայողական անտուկներու կազմակերպութեան մէջ:

* * *

«Ժողովուրդ»ը այս բոլորը մատնանշել յետոյ, յանձնարարած է դաւառ. դրոճապի կոմիտէներու նախադաննուս, որ իրենց անձնական պատասխանատուութեամբ ամէն միջոց ձեռք առնեն, փոխադուլիներ 100% իրականացնելու համար: Եւ դեռ շարք մը հրահանգներ, թէ ուրիշ հաստատութեանց և թէ մամուլին, որպէսզի ստուգեն, հետապնդեն, ոյժ տան:

Նոյն ուղղութեամբ դիտողութիւնները կգած են տուրքերու և ինայողութեան ձեւակատներու թուութեան մասին:

Մատնանշած է, նաև, որ զիւղական սպառողական գործակալականներու (կողպերատիվ) բաժնեվճարներու պայքարը չէ տուած զոտացուցիչ արդիւնք (հազիւ 63%) : Այստեղ ալ՝ ոտարկանական հրահանգներ, նոյնիսկ զանցառուներուն ապրանքը կրճատելու իրաւունքով :

Քանի մը օր յետոյ (18 փետր) «Քնորհրդային Հայաստան»ը կը պարզէ այլապէս ուշադրաւ սնանկութիւն մը — գարնանացանի սերմնցուցիչ հաւաքման (սերմֆոնը) պայքարին ձախողումը :

Մինչև փետր. 15, հետևեալ պատկերը կը ներկայացնէին կարգ մը շրջաններ. (կարելի է այս ցուցակին վրա մօտաւորապէս հաշուել նաև միւս շրջանները. մասնաւորաբար թերթը կը գուժէ. «ցանքը զեռ ապահոված չէ») :—

Պատիրած է հաւաքել շաւախած է

1) ՍՅՑՖԱՆԱՎԱՆ

Հացահատիկ՝ 55.245փ.	Հացահատիկ՝ 15.000փ.
Կարտոֆիլ՝ 414.450փ.	Կարտոֆիլ՝ 140.000փ.
Ընդամէնը՝ 469.695փ.	Ընդամէնը՝ 155.000փ.

2) ԱԼԼԱՎՆԻՐԴԻ—

Հացահատիկ՝ 26.750փ.	Հացահատիկ՝ 30.285փ.
Կարտոֆիլ՝ 97.650փ.	Կարտոֆիլ՝ 3.675փ.
Ընդամէնը՝ 124.400	Ընդամէնը՝ 33.950փ.

3) ՂԱՐԱՔԻԼԻՍԱ.—

Հացահատիկ՝ 31.500	Հացահատիկ՝ 7.273փ.
Կարտոֆիլ՝ 108.000փ.	Կարտոֆիլ՝ 12.338փ.
Ընդամէնը՝ 139.500փ.	Ընդամէնը՝ 19.611փ.

4) ՇԱՄՇԱԿԻՆԻ ՇՐՋԱՆ.—

(Առ 12 փետրուար)

Հացահատիկ՝ 50.600փ.	Հացահատիկ՝ 24.280փ.
Կարտոֆիլ՝ 46.250 »	Կարտոֆիլ՝ 58.387 »
Ընդամէնը՝ 96.850 »	Ընդամէնը՝ 82.673 »

5) ԻՋԵԻՆԻ ՇՐՋԱՆ.—

(18 զիւղի մէջ)

Հացահատիկ՝ 27.110 »	Հացահատիկ՝ 17.532 »
Կարտոֆիլ՝ 130.350 »	Կարտոֆիլ՝ 17.320 »
Ընդամէնը՝ 157.460 »	Ընդամէնը՝ 34.853 »

6) ԴԻԼԻՋԱՆ

Ձաղանխան կը մտնէ իջևանի շրջ. մէջ.—

Հացահատիկ՝ 1.728 »
Կարտոֆիլ՝ 6.088 »
Ընդամէնը՝ 7.816 »

Վերջին պահուն ճարած այս թւանշանները զեռամբողովին չեն պարզի ձախողանքին ծանրութիւնը : Մրազերը պէտք է լրացած ըլլար փետր. 20ին, այնինչ տակաւին փետր. 16ին, «Քնորհրդային Հայաստան» վեց սիւնակ լայնութեամբ խորագիրներ շարելով, կը պահանջէր զամենախիստ պատասխանատուութեան կանչելը բոլոր զանցառուները : Եւ մէկ տեսակ չեն զանցառու-

թիւնները : Ամփոփենք Երևանի պաշտօնաթերթին նոյն համարէն.—

1. Գարնանացանի կիրառման յաջողութիւնը սերտորէն կապուած է կոխողներու արտադրական ծրագիրներ կազմելու աշխատանքներուն հետ : Այդ աշխատանքը փաստորէն սկսած է յունուարի վերջերէ կ'սկսէ կայսօր աւարտած է միայն բամպակագործական շրջաններուն մէջ : Կան շրջաններ ուր մինչև իսկ է ձեռնարկուած այդ նրատու պաշտատններու կարգաւորմանը, մինչդեռ ժամանակը չափազանց կարն է : (Բարձր ստորագծումները բնագրէն են) :

2. Հակառակ բարձրագոյն օրկաններու կողմէ ուղղած բազմաթիւ հրահանգներուն, մինչև այսօր չէ կազմակերպուած հաշտուող գեղուցումներու կանոնաւոր առաւումը : Շատ վայրերէ տակաւին չեն ստացած ստալգ կ լրի տեղեկութիւններ՝ կատարած աշխատանքներու մասին :

3. Մինչև այժմ, սերմերի հաշտուման և հաւաքման աշխատանքներու արդիւնքները աննշան են : Անբաժնու միջոցները ձեռք չեն առնուած գարնանացանը սերմնցուով ապահովելու համար, և այդ գործը վտանգի տակ է :

4. Նոյնքան անբարար պ սերմագտման աշխատանքները ղեռ նոր են ձեռնարկուած սերմագտման աշխատանքներուն : Համաձայն նախնական տեսչութեան, գարնանացանի համար պէտք է գուրի ընդամէնը 300.790 կենդիւնար հացահատիկ : Երևանի գաւառին մէջ մինչև փետր. 1 պէտք է գուրէր 28.858 կենդիւնար, մինչդեռ գուրած է միայն 508կ. (6-7%) : Լոռիի գաւառին մէջ 33,350 կենդիւնարի դիմաց գուրած է 2.250կ. (5 փետր.), ինչ որ կը նշանակէ դարձապ 6-7% :

Եւ այս բոլորին վրա, իբրև աղ ու պղպեղ, «Քնորհրդային Հայաստան»ի աշխատակիցը կազդարարէ մտացութեան չտալ ուրիշ «հարւածային» (ստիպողական, հրատապ) խնդիր մը.— պայմանաժաման անցած գումարներու գանձումը : Յունուար ամսուան ընթացքին գանձուած է միայն այս գումարի 7.2%ը : «Ամենակարգ ժամանակամիջոցում հարկաւար է գանձել գիւղացիութեան մօտ գումուած կէս միլիոնից աւելի ժամկետանց գումարները, գարնանացանի ֆինանսաւորման ծրագիրն ապահովելու համար» :

Ուրեմն, զիւղացին պիտի ճարէ թէ սերմնցուն, թէ հին ու նոր տուրքեր, և թէ աշխատանք : Եւ տակաւին պնդողներ կան թէ ճորտութիւն չէ այս, այլ «սոցիալիզմի կատուցում» :

Գրքերնք տարբեր շարք մը՝ թերացումներու, զանցառութեանց և դասալքութեանց : Մէկ բառով՝ ձախողման :

— «Մարտունու շրջանի Աղամխան զիւղում կողմնակուցութիւն կազմակերպելու ժամանակ, կոմբիլիտ անդամներէց մի քանիսը ղէմ գուրս կեան կոմբիլիտ որոշմանը և կողմի կերպով հրատարակեցին կողմնակուցութեան մէջ մտնելուց : (Ո՞. Հ.՝ 19 փետր) :

Մասնակի պարագայ մըն է այս : Ընդհակառակն : Բազմաթիւ փաստեր կապացուցանեն որ ճառանքին կոմբիլիտներ, փոխանակ համատարածէն յետոյ անմիջ-

րէն ապակուլակացման դիմելու, դանդաղում են, ձրգ-
 ձգում են» (18 փետ.) : Դարալագեազի Հասանքեանդ լե-
 նինեան ամբողջ բլէնը, բացի քարտուղարէն, բացար-
 ձակապէս մերժած է մտնել հաւաքական տնտեսութեան
 մէջ, դրկելով հետեւեալ վերջնագիրը .

— «Եթէ խօսք կուտաք մեր գիւղէն ոչ մէկ կուլակ
 ապակուլակացման չենթարկել (սեփականագրիկէ և
 քէլ), բոլորս հուռա գոռալով կուգանք կը մտնենք
 կոլխոզի շարքերը» :

Այս նոյն հոգեբանութիւնը կը մատնէ նաև հետե-
 եալ պարագան .

— «Յաճախ ալ առանձին կոմունիստներ արտա-
 յայտելով քրիստոնէական — մարդասիրական տրամա-
 դրութիւններ, կը դտնեն որ «կուլակները մեղք են»,
 «նրանք ի՛նչով են մեղաւոր որ կուլակ են», «նրանց էլ
 ընդունենք կոլխոզ, վերջնաւ գնա» :

Այս երևոյթները կը մատնանշին, կը ձաղկէին
 իբրև «աջ. թեքում», աջակողմեան պատեհապաշտու-
 թիւն :

Կան նաև «ձախակողմեան պատեհապաշտութեան»
 ձգտումներ : Գիւղէ գիւղ և տունէ տուն արշաւելու
 արտօթար արշաքան է զարգացել որ, շատ մը գիւղա-
 կան բլէիներ կը փորձեն կուլակներու դէմ ծրագրած
 միջոցները գործադրել նաև միջակ տնտեսութիւններու
 դէմ : Այն աստիճան որ, մերկ և չքաւոր գիւղացիներն
 սկսել են ծուռ նայիլ հաւաքական տնտեսութեան
 գործիչներուն : Դարալագեազի չրջանին մէջ, «անհատ
 միջակներ չեն համարձակուած մասնակցել ժողովներին,
 վախենալով որ իրենց կը խայտառակեն և կը դնեն
 կուլակների շարքը» : (Պ. Հ. » 18 փետր.) :

Դէպի ալ կսմ գէպի ձախ այս տատանումներուն
 մէջ, միշտ ալ աչքի կը գարնէ հաւաքական տնտեսու-
 թեան ընդգիծանալու ձգտումը : Հետեւինք բուն աղ-
 բերին .

— «Մի շարք գիւղխորհուրդներ, առանձին կոմու-
 նիստներ և կամ երիտասարդներ ուղղակի սաբոտաժի
 են ենթարկում կոլեկտիվացման գործը : Դղբլմանքի
 գիւղխորհուրդի նախագահը հրաժարուած է կոլտնտեսու-
 թիւնից . բայց երբ տեսնում է որ կոլտնտեսութիւնը
 յաջողութեամբ կազմակերպուած է, հաւաքում է գիւ-
 ղացիներին ու սպանալիքներ տալիս կոլեկտիվ մտնել
 ցանկացողներին» :

— «Ալիջնալու գիւղում մի շարք կոմունիստներ,
 որպէսզի իրենց ունեցած կենդանի և անկենդան ստաց-
 ւածքը հաւաքական տնտեսութեան չյանձնեն, մտել են
 այնտեղ, բայց առանց ընտանիքի միւս անդամների» :

Բայց դեռ այստեղ չի սահմանափակելը բոլոր շա-
 րիքը : Համաձայն կեդրոնի հրահանգներուն, հաւաքա-
 կան տնտեսութեան բուն կազմակերպիչները պիտի ըլ-
 լան գիւղական խորհուրդները : Եւ կանուխէն հրա-
 հանգւած է լուծել բոլոր այն գիւղական խորհուրդները
 որոնք չեն համակերպիլ տրւած հրահանգներուն, կամ
 ընդունակ չեն վարելու իրենց նոր պարտականութիւնը :

Արդ, Հայաստանի գիւղերն ունին այնպիսի տար-
 րեր, որոնք իրենց վրա կեդրոնացնեն պահանջած բո-
 լոր յատկութիւնները : Ի հարկէ, ոչ : Եւ կառավարու-
 թիւնը արդէն ձեռնարկած է դասընթացքներ բանալու,
 որպէսզի «կադրեր» պատրաստեն :

Մինչև այդ, մենք արձանագրենք օրւան իրակա-
 նութիւնը .

— «Կատարում են արդեօք մեր գիւղխորհուրդները
 ներկայ չըլմանի այս մարտական խնդիրները : Ընդհան-
 րապէս թոյլ չափով, իսկ շատ յաճախ միանգամայն
 անբաւարար : Աւելին : Փորձը ցոյց տւեց որ քիչ չեն
 գիւղխորհուրդներ, որոնք փոխանակ գլխաւորելու
 դանդաձների գործօն աշխատանքը, քարչ են գալիս
 նրանց պոչից, գերում են կուլակութիւնից, ջուր են
 ածում նրա ջրաղացին» : (Ա. հանգեալ, «Պ. Հ.» 16
 փետր.) :

Իսկ ո՛րքան պերճախօս է հետեւեալ վկայութիւնը,
 վիճարանութիւններու ընթացքին, Կասեանի և Ոսնջ-
 եանի գեկուցումներէն անմիջապէս յետոյ (տես նոյն
 համարը) .

— «Մինչդեռ ներկայացուցիչ ընկ. Արդուլահը
 յայտնում էր որ, շրջանի թուրք գիւղերում շատ անգամ
 ուղարկւած հայերէն պաշտօնակամ գրութիւնները կար-
 դացող, թարգմանող չի լինում և մի գրութիւն հաւ-
 կանալու համար, 3-4 վերստ եղևաւորութիւն պիտի
 կորնն՝ հարևան գիւղում թարգման մարելու համար» :
 Ահա թէ ի՛նչպէս ձև ու մարմին կաննէ «համա-
 տարած» մեր երկրին, համատարած թշուառութեան
 հայրենիքին մէջ :

ՀԱՅՍՏԱՌԼՈՍ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԱՒԱՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻԻ

«Որհորդային երկրներում բռնութիւն և հարածանք չկայ», ասում են բուլղարիկեան թերթերը:

Նոր ազատած լինելով խորհրդային դրախտից, ուզում են խօսել միայն մեր շրջանի մասին:

Ղամաբլուի շրջանի Գլին գիւղը բաղկացած է 200 տնտեսութիւնից: 15-20 տնտեսութիւններ կոմունիստներ են և համակրողներ, բայց շնորհիւ բռնութեան և Ձեկայի սարսափին 200 տնտեսութիւնից 20-25 տնտեսութիւններ են, որ «կողեկով»ից դուրս են թողւել.— ձայնագուրկներ, մի քանի ունեւորներ, որոնք հազիւ կարողանում են իրանց ընտանիքի գոյութիւնը պահպանել: Իսկ մնացածները միջակ և չքատր գիւղացիներ են: Այլ տնտեսութիւններին կողեկովից դուրս թողնելու պատճառն այն է, որ մի կերպ խլեն լաւ աղբիները և վարելահողերը, իսկ իրենց էլ որոշեցին աքսորել գիւղից մի ամալի տեղ (Սադարակ), որտեղ ապրում են օձերը, կարիճները և վայրենի խոզերը: Տնտեսութիւնների մէջ չթողնելով երիտասարդներ և երիտասարդուհիներ աքսորելով և խոնաւ ու մութ բանտերը լցնելով, մէջտեղը մնացել են կանայք և երեխաները, յետին թշուառութեան մէջ:

Այն գիւղացիները, որոնց աճ ու սարսափի տակ գրել են կողեկովի մէջ, վերցնում են իրենց ունեցած շունեցածները, ծախսածուկ և կէս դինց էլ պակաս, իսկ անասունների համար մտածում են,— եթէ կենդանի ծախենք, ոչ մի բան չենք կարող առնել առած գումարով, աւելի լաւ է մորթենք, գոնէ կաշին կը մնայ մեզ: Իսկ վայրենի կոմունիստները «բէՖ» են անում և իրար ստում. «Ընկեր ջան, ինչ լաւ պարգաղել է գիւղը, հիմիկայ գիւղում այնքան անասունների են մորթում, ինչ հին ժամանակ զաղաքում չէին մորթում»...

Գիւղացու վրա այնքան հարկեր են դրում և ամանջանքներ, որ չի իմանում այս կամ այն հարկը, ուր

պիտի տանի, ո՞ւմ որ պիտի սայ: Օրինակներ.— Միասնարկ, իրենահարկ, ջրպետի, հանդապահի, նախարայահի, գիշերապահի հարկ և այլն:

Կողեկովի անունով վերցնում են նաև գիւղացու ցանած արար և հարցնում.— Ի՞նչքան ցորեն ես ցանել այդ հողում: Գիւղացու մնում է ապշած, նախելով ճորջ աւոյի երեսին: Նորից կրկնում են և բացատրում.— Այդ արտում քանի փութ որ ցանել ես, այնքան փող պիտի ստանաս: Փութը հաշուելով շր. 70կ., սատարկում են արտից ձեռք քաշել. չնայելով որ գիւղացին ցորենը ծածուկ և մեծ շարշարանքներով է ձեռք բերել և ցանք արել: Իր երեխաների բերանից կարելով փութը 8-10 բուրջիով սերմ է ձեռք գցել և ցանել, որ դալիք տարւանք մի քիչ ապահով ապրի, այն ինչ գիւղացու գլխին տալիս և առնում տանում են: Քաղաքի շուկաներում և գիւղերում դուրս գալու ժամանակ ուրիշ ոչ մի բան չես տեսնում, բացի աճուրդից: Գիւղացու տան կահկարասիքը լցրած, չնչին գնելով ծախսում են: Հարկերը ուշացնելու դէպքում, դալիս են մտնում տունը, ինչ որ աչքին պատահում է, վերցնում տանում են շինալելով ոչ մի բանի: Տանը ոչինչ չգտնելու դէպքում աղբին են վերցնում և յաւկացնում այդպէս ընկերութեանը: Գրւում են նաև շէնքերը, դուրս շարտելով տնեցիներին:

Մի քանի խօսք էլ կոոպերատիվների մասին: Անգամները իրենց վճարք տւել են 8ր. և հետզհետև աւելացնելով հասնում է մինչև 30ր.: Վերջերում, ամէն մի անգամ կոոպերատիվից ապրանք առնելու ժամանակ, կրճատում են իր տարած գումարից, աւելացնելով անդամավճարք: Եւ գեռ գիւղացին իրաւունք էլ չունի գոնէ մշտական ապրանք առնելու: Գիւղում ոչ մի բան չի կարելի առնել առանց գրքակի, բացի մսից, այն էլ անասունների կոտորելու պատճառով: Իսկ զաղաքում ինչ որ առնելու լինես առանց գրքակի չես կարող առնել, միևնոյն ժամանակ միսը, և ուրիշ շատ չնչին ապրանքներ: Ն. Ա.



ԲՈՎԱՆԻՆԿՈՒԹԻՒՆ

Վիսոշի խորհուրդը (Սմբագրական)	66
Կազմակերպիչ ոգին (Մ. Վարանդան)	68
Աղէտաւոր մահը (Է. Ակունտի)	70
Օտար հարկոցների տակ (Ա. Ահարոնեան)	72
Աւետիս Ահարոնեան (Ռ. Սեւան)	74
Ա. Ահարոնեան յեղափոխական դրօշին տակ (Կ. Սասունի)	77
Սև. Բարեցի Սաֆօի ինֆանկեմսագրութիւնը	81
Աւալեանու ահաբեկումը (Բևեօ)	88
Թիւրքիայ շուրջ	90
«Համատարած»ը Հայաստանում (Հայմաթրոս)	92
Թիւրքական քրեակներ	96

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

« ՄԱՏԵՆՍԵՐ ԳՐՕՇԱԿ » № 68

Մ Տ Ա Ծ Ո Ի Մ Ն Ե Ր

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գրեց՝ Ն. Հանգոյց

Գին 5 փլանգ:



« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 փր. 50 սան.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէ՛

M^{me} S. AGOPIAN.

5, rue des Gobelins, 5. Paris (13^e)